

ՄԻՈՆ



ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ ԵՐՈՒՍԱԼԵՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԹՈՒԵԱՆ
A PUBLICATION OF THE ARMENIAN PATRIARCHATE OF JERUSALEM

2015

ՄԱՅԻՍ . ՅՈՒՆ . ՅՈՒԼ .
ՕԳՈՍ . ՍԵՊՏ . ՀՈԿՏ





Տ Ո Ն

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԿՐՕՆԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Պաշտօնաթերթ Երուսաղեմի Հայ Պատրիարքության

ՆՈՐ ՇՐՋԱՆ

2015

2015 • ՄԱՅԻՍ • ՅՈՒՆԻՍ • ՅՈՒԼԻՍ • ՕԳՈՍՏ .
ՍԵՊՏ .

2015 • MAY • JUNE • JULY • AUG . • SEPT .

S I O N

2015

**A QUARTERLY OF RELIGION, LITERATURE AND PHILOLOGY
OFFICIAL PUBLICATION OF THE ARMENIAN PATRIARCHATE, JERUSALEM**

Proprietor : His Beautitude The Armenian Patriarch of Jerusalem

St. James Press, Jerusalem





ՆՐԱՄԱՆԱԻ
ՊԱՏՏԻԱՐԿ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
Ս. ԱԹՈՌՈՅՆ ԵՐՈՒՍԱՂԷՍԻ
ՏԵԱՌՆ ՆՈՒՐԱՆԱԹ
ՍՐԲԱԶԱՆ ԱՐԿԵՊՐՍԿՈՊՈՍԻ



Տ Ի Ր Ո Ջ Ա Յ Լ Ա Կ Ե Բ Գ Ո Ւ Թ Ե Ա Ն
Ի Ո Ր Ն Ո Ւ Բ Ե Լ



Քանզի առեալ յԱստուծոյ Հօրէ գփառս եւ զպատիս, յեկեալ յայնպիսի բարբառոյ ի մեծավայելչութեան փառաց անտի, եթէ «Դա է իմ որդի սիրելի ընդ որ ես հաճեցայ»: Եւ զայս բարբառ մեք իսկ լուաք եկեալ յերկնից որ ընդ նմա իսկ էաք ի սուրբ լերինն: (Բ. Պետրոս Ա: 17 - 18)

Աստուածորդին իր երկրաւոր կեանքի ընթացքին բազմաթիւ բացառիկ պահեր ունեցաւ եւ ապրեցաւ: Այդ պահերէն մէկն էր օրինակի համար, 12 տարեկանին իր վիճաբանութիւնը Տաճարի քահանաներուն հետ: Յորդանան գետի մէջ անոր մկրտութիւնը ուրիշ կարեւոր հանգրուաններէն մէկն էր իր կեանքին: Լեւրան Քարոզն ու անոր յաջորդող «Հացերու եւ ձուկերու» հրաշքի դէպքը եւ կամ Ծաղկազարդին անոր մուտքը Երուսաղէմ, և այսպէս կարգ մը ուրիշ այդօրինակ պահեր: Սակայն Սուրբ Գիորքի բոլոր մեկնաբաններ համաձայն են այն կէտին շուրջ, որ Քրիստոսի այս երկրի վրայ ունեցած մեծագոյն և ամենակարեւոր փորձառութիւնը, որ ան երբեւիցէ ունեցաւ, Այլակերպութեան կամ Պայծառակերպութեան դէպքն էր, երբ Թափոր լերան վրայ, իր երեք ամենամօտ աշակերտներու ներկայութեան ան կը զգենուր լուսազեղ արտաքին մը: Այդ մի քանի վայրկեաններ տետող փորձառութեան ընթացքին, Մովսէս եւ Եղիա մարգարէներ եւս կը յայտնուէին և խօսակցութիւն մը կ'ունենային Յիսուսի հետ

մօտ ապագային կատարուելիք դէպքերու և անոր մահուան մասին: Եւ այս յանկուցիչ պահը կ'աւարտէր Աստուծոյ որոտընդոստ ձայնով, որ կ'ըսէր. «Դա՛ է Որդի Իմ սիրելի, դմա լուարո՛ւք»:

«Հացերու եւ ձուկերու» հրաշքէն անմիջապէս ետք, Քրիստոս իր հետ առնելով աշակերտներէն՝ Պետրոսը, Յակոբոսն ու Յովհաննէսը, կ'անցնին Գալիլիոյ ծովակին հանդիպակաց ափը եւ կը բարձրանան Թափոր լեռ, ուր ան պիտի այլակերպէր իր աշակերտներուն աչքերուն առաջ, ներկայութեանը՝ Մովսէս և Եղիա մարգարէներուն, այսպէս նորակազմ եկեղեցւոյ անդամներուն հասկցնելու այն սերտ աղերսը, որ գոյութիւն ունէր Հին եւ տակաւ բացուող Նոր Կտակարաններուն միջեւ: Մովսէս և Եղիա կը ներկայացնէին Հին Կտակարանը, մինչ Պետրոս, Յակոբոս եւ Յովհաննէս՝ Նորը, և այս երկու եզրերուն կեդրոնական եւ տիրական դէմքը կը դառնար Քրիստոս, որ այդ օրը կը փառատրուէր Այլակերպութեան Լեւրան վրայ: Անոր դէմքը կը շողայ արեւի նման եւ հանդերձները կը դառնան լոյսի նման սպիտակ: Հոն ներկայ եղող երեք աշակերտները առաջին անգամ ըլլալով կը տեսնէին իրենց Տէրը իր իրա՛ւ փառքին մէջ, բան մը որ ցարդ ան ծածկած էր իր խոնարհ եւ համեստ արտաքինին ետին: Պետրոս հիազարհուր իր Վարդապետին եւ անոր զոյգ ընկերակիցներուն ներկայութենէն, կ'առաջարկէ երեք տաղաւարներ սարքել անոնց համար, որպէսզի անոնք մնային հոն: Սակայն այդ մէկը իրագործելի չէր, որովհետեւ Քրիստոսի Այլակերպութիւնը յամենող պատահար մը պիտի չըլլար, Լեւրան այդ քաղցր փորձառութենէն ետք վարը, և Երուսաղէմ՝ Քետրոնի ձորին մէջ և անոր շուրջ իրենց կը սպասէր իրա՛ւ գործը, բուն փորձութիւնը:

Աստուածորդին թելադրեց իր երեք աշակերտներուն ոչ որի խօսիլ դէպքին մասին, մինչեւ որ ինք՝ մեռելներէն յարութիւն առնէր: Եւ բոլորս գիտենք թէ ան ինչպէս մեռաւ: Ան կը լքէր մէկ լերան փառքը կրելու ամօթանքը ուրիշ լերան մը: Ան Այլակերպութեան լեռնէն կ'անցնէր Գողգոթա, այսպէս իր յախտենական փառքը պահելու իր չարչարանքներու ետին: Բայց այդ մէկը սուրբ եւ օրհնեալ չարչարանք էր, որովհետեւ անոնցմով էր, որ մարդկութեան մեղքի խարանը միանգամընդմիջու կը վերցուէր, ինչպէս Դաւիթ Արքայ Սաղմոսին մէջ կ'ըսէր.

«Որչափ հեռի են արեւելք յարեւմտից, այնպէս հեռի արար ի մէնջ զանօրէնութիւնս մեր» (Սարգ. ԾԲ. 12) : Քրիստոս Այլակերպութեան Լերան վրայ մնալով, ինչպէս Պետրոս կ'առաջարկէր, թերեւս խուսափէր չարչարանքներէն եւ Խաչէն, սակայն առանց խաչի փրկութիւն պիտի չըլլար մարդկութեան, այդ պիտի նշանակէր մարդոց համար տակաւին շարունակել ապրիլ մեղքի մէջ եւ մեղքով : Մարդ արարածը, ի մասնատրի քրիստոնեան, յաճախ կը նախընտրէ ապրիլ իր կարծաւոր փառքին մէջ, քան թէ Խաչի շուքին տակ : Եւ ճիշդ ատոր համար է, որ խուսափիլ Խաչէն՝ կը նշանակէ խուսափիլ փրկութենէն և հետեւաբար յաւիտենական կեանքէ : Մինչ մարդոց կողմէն հնարուած կրօնքներ կը մերժեն իրականութիւնը մեղքին, անդին՝ քրիստոնէական մեր հաւատքը ամենայն քաջութեամբ կը դիմագրաւէ մեղքը : Օրէնք և Աւետարան, մեղք եւ շնորհք, խոստովանութիւն և թողութիւն, մահ և յարութիւն, այս բոլորը կու գան միախառնուիլ Այլակերպութեան դէպքով : Մենք հաւատարմութիւն կը յայտնենք Աստուծոյ, բայց երբ տեսնենք թէ ան խոտոր կը համեմատի մեր փանաքի նախընտրութիւններուն հետ, կը մոռնանք Ստեղծիչը : Մենք լորձնաշորքն կը խոստանանք առնել մեր խաչերը եւ հետեւիլ Աստուածորդոյն, սակայն ճիշդ այն պահուն երբ Հայր Աստուած խաչ մը կու տայ մեզի, մենք միջոցներ կը փնտռենք խուսափիլ անկէ, եւ կամ կը սկսինք տրտնջալ և դժգոհիլ թէ մենք միշտ կը տառապինք այս աշխարհի վրայ, մոռնալով որ մենք տակաւին կը գտնուինք այս նոյն աշխարհի փորձութիւններու մագիլներուն մէջ :

Բայց, սիրելիներ, Քրիստոսի Պայծառակերպութիւնը մեզի վերապահած է սքանչելի խոստում մը. եթէ **Քրիստոս՝ գլուխն է Եկեղեցոյ, ինչպէս մենք մարմինը**, հետեւաբար ուր գտնուի գլուխը, հոն պիտի գտնուի նաեւ մարմինը : Քրիստոսի Պայծառակերպութիւնը բոլոր անոր հաւատացողներուն տրուած այն շօշափելի խոստումն է, որ կ'ըսէ. «Այս պիտի ըլլայ ձեր ապագան, ձեր ժառանգութիւնը : Ասոր համար է որ դուք կ'ապրիք և այս է նպատակը ձեր հաւատքին» :

Իր Այլակերպութենէն քիչ առաջ Քրիստոս հարց կու տար իր աշակերտներուն թէ ո՞վ էր ինք, որուն Պետրոս կը պատասխանէր. «Որդի Աստուծոյ կենդանոյ» : Որմէ ետք էր, որ Աստուածորդին կը սկսէր խօսիլ գալիք դէպքերու մասին, իր անխուսափելի չարչա-

րանքներուն, մահուան և յարութեան մասին : Սակայն դարձեալ Պետրոս պիտի ընդմիջէր իր Տէրն ու Վարդապետը ըսելու. «Տէր, այդ մէկը անկարելի է» : Բայց Յիսուս յանդիմանելով Առաքեալին յախուռն պոռկումը, կ'ըսէ թէ ան իրերուն կը նայէր զուտ մարդկային աչքերով, մինչ ան կարիքը ունէր Եղիայի ծառային նման Աստուածային ջինջ տեսիլքի մը, թէ հակառակ Քրիստոսի սպառնացող անմիջական մահուան սպառնալիքին, Աստուած տակաւին անոր հետ էր եւ վերջնական ու վճռական յաղթանակը պիտի պատկանէր իր սիրելի Որդոյն : Անկասկած Պետրոս եւ իր միւս երկու ընկերակիցները կարիքը ունէին Թափոր Լերան այդ փորձառութեան, տեսնելու Աստուծոյ յաւերժական ներկայութիւնը իրենց Վարդապետին մէջ : Հետեւաբար, Այլակերպութեան այդ յանկուցիչ փորձառութիւնը ուրիշ բան չէր եթէ ոչ միջոց մը Աստուծոյ կողմէ, Առաքեալները դուրս բերելու իրենց անկայուն վիճակէն, հաւատալու և կողմնորոշուելու, տեսնելու իրերը իրենց բնական եւ հարազատ լոյսին տակ բռնուած :

Սիրելի հաւատացեալներ, սովորաբար մեր առօրեայի ընթացքին մենք հակամետ ենք մեզ շրջապատող մարդիկը կամ երբեմն մեր կեանքին հետ անմիջականօրէն առնչութիւն ունեցողները տեսնել իբր «պատնէշներ», որոնք արգելք կը հանդիսանան այսպէս ըսած՝ մեր յառաջընթացին, մեր յաջողութեան, և մենք մարդոց եւ իրերու կը նայինք մեր մարդկային աչքերով, որոնք յաճախ կը թուին ըլլալ հասարակ, անհրապոյր եւ երբեմն նոյնիսկ վանողական : Սակայն երբ անոնց նայինք Աստուծոյ լոյսով, անկողմնակալ և դրական կերպով, նոյն մարդիկը կը տեսնենք աւելի ազնուական, համակրելի և փառատրեալ վիճակով, եւ այսպէս կ'ըլլան բոլոր մարդկային այլակերպութիւնները, և ասոր համար էր, որ Յակոբ Նահապետ սանդուխի և իրեշտակներու իր տեսիլքէն ետք պիտի ըսէր. «Տէր է ի տեղուջս յայսմիկ, եւ ես ոչ գիտէի» : (Ծննդոց 28. 16)

Այս օրերուն, երբ մահուան և անորոշին սարսափը կը տարածեն իրեց թեւերը աշխարհի ամէն կողմերը, լաւ պիտի ըլլար եթէ մենք՝ քրիստոնէաներս, ուշադրութեամբ նայէինք այդ հրաշք-պատահարին :

Վարդավառի տօնը, սիրելիներ, առիթ է որ մենք բանանք մեր հոգիի աչքերն ու ականջները՝ տեսնելու Հայր Աստուծոյ ճաճանջող լոյսն ու մանաւանդ լսելու և կարենալ

ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ԶՐԻՍՏՈՍԻ

ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՍԱՏԹԷՈՍԻ

ըմբռնելու ամպերէն եկող աստուածային պատգամը, փոխանցուած մեզի Պետրոս Առաքեալի Բ. Թուղթէն առնուած մեր այսօրուան բնաբանով. «Եւ զայս բարբառ մեր իսկ յուար եկեալ յերկնից որ ընդ նմա իսկ էար ի սուրբ լերինն. Դա՛ է որդի Իմ սիրելի ընդ որ հաճեցայ, դմա յուարու՛ք», այժմ և միշտ և յաիտեանս, յաիտենից. Ամէն»:

Ն.Ա.Ս.

«Ան կը լքեր մէկ լերան փառքը կրելու ամօթանքը ուրիշ լերան մը: Ան Այլակերպութեան լեռնէն կ'անցնէր Գողգոթա, այսպէս իր յաիտենական փառքը պահելու իր չարչարանքներու ետին: Բայց այդ մէկը սուրբ և օրհնեալ չարչարանք էր, որովհետեւ անոնցմով էր, որ մարդկութեան մեղքի խարանը միանգամընդմիշտ կը վերցուէր...»:



այսպէս էր իսկ սուրբ Ստեփանոսը. մի անգամ և մի անգամ և մի անգամ իսկ իսկ...

1 Եւ յետ վեց ատր առնու ընդ իւր Յիսուս զՊետրոս և զՅակովբոս և զՅովհաննէս եղբայրն նորա, և հանէ զնոսա ի լեռոն մի բարձր առանձինն.
2 Եւ այլակերպեցաւ առաջի նոցա, և լուսատրեցան երեսք նորա իբրեւ զարեգակն, եւ հանդերձք նորա եղէն սպիտակ իբրեւ լոյս:
3 Եւ ահա երեսեցան նոցա Մովսէս եւ Եղիա,
4 որ խօսէին ընդ նմա: Պատասխանի ետ Պետրոս եւ ասէ զՅիսուս, Տէր, բարտք է մեզ աստ լինել, եթէ կամիս, արասցուք երից տաղաարս՝ մի քեզ եւ մի Մովսիսի և մի
5 Եղիայի: Եւ մինչդեռ նա խօսէր, ահա ամպ լուսատր հովանի եղեւ ի վերայ նոցա. ձայն եղեւ յամպոյն եւ ասէ, Դա է Որդի Իմ սիրելի
6 ընդ որ հաճեցայ, դմա յուարուք: Իբրեւ լուան աշակերտքն, անկան ի վերայ երեսաց
7 իւրեանց և երկեան յոյժ: Եւ մատուցեալ Յիսուս բուռն եհար զնոցանէ եւ ասէ, Յոտն
8 կացք և մի՛ երկնչիք: Ամբարձին զայս իւրեանց և ոչ որ տեսին՝ քայց միայն զՅիսուս:
9 Եւ մինչդեռ իջանէին ի լեռնէ անտի, պատուիրեաց նոցա Յիսուս եւ ասէ, Մի՛ ումեք ասիցէք զտեսիլդ, մինչեւ Որդի մարդոյ ի
10 մեռելոց յարիցէ: Հարցին ցնա աշակերտքն և ասեն, Չիարդ դպիրքն ասեն
11 եթէ Եղիայի նախ պարտ է զալ: Պատասխանի ետ նմա Յիսուս և ասէ ցնոսա, Եղիա
12 զայ եւ հաստատեսցէ զամենայն: Այլ ասեն ձեզ, զի Եղիա եկեալ իսկ է. եւ ոչ ծանեան զնա, այլ արարին ընդ նա զոր ինչ կամեցան, նոյնպէս և Որդի մարդոյ չար-
13 չարելոց է ի նոցանէ: Յայնժամ ի միտ ասին աշակերտքն թէ վասն Յովհաննու մկրտչի ասաց ցնոսա:



Դուկտ. Տէր Ներսէս Ասագ Քին. Ներսէսեան

ՈՒՂՂԱՓԱՌ-ԵԿԵՂԵՅԻՆԵՐԻ
ԴԱԻԱՆԱՆՔԸ «ԱՌԱՋՆՈՒԹԵԱՆ» ԵՒ
«ԳԱՀԵՐԷՅՈՒԹԵԱՆ» ԽՆԴՐԻ ՇՈՒԲ
Orthodox understanding of Primacy and
Catholicity

Ուղղափառ եկեղեցիների աւանդութեան մէջ Գահերէցութեան կամ «զլխատրութիւն եպիսկոպոսին Հռոմայ»⁽¹⁾ հարցն անբաժանելիօրէն կապուած է եկեղեցու հեղինակութեան խնդրի հետ, որն իր հերթին ուղղափառ աստուածաբանութեան մէջ չի կարելի դիտել անջատ «տիեզերականութեան» և «ժողովրդավարական» դիրքորոշումից:

Եկեղեցական պատմութիւնից գիտենք, մէկից անկէ պատմական պատճառներով Ուղղափառ եկեղեցիները (նկատի ունեն թէ՛ Բիզանդական եւ թէ՛ Արեւելեան եկեղեցական ընտանիքները) երբեք չեն մշակել և մինչեւ այսօր էլ չունեն միասնական կազմակերպչական եւ կենտրոնաձիգ կազմակերպութիւն: Ազգային [ethnic] Ուղղափառ եկեղեցիների առաջնորդների համար Կոստանդնուպոլսոյ Տիեզերական Յոյն Պատրիարքը ճանաչուած է որպէս «հաւասարների մէջ առաջինը», հակառակ որ կրել է «Տիեզերական Պատրիարքի» տիտղոսը բիզանդական ժամանակներից: (2)

Առաջնութեան (Primacy) հասկացողութիւնը եկեղեցու պատմութեան սկզբնական շրջանին:

Արիոսի մահից յետոյ, Ուղղափառ եկեղեցին դաւանական պայքար սկսեց Մակեդոնի վարդապետութեան դէմ, ըստ որի «Հոգին Սուրբ համագոյակից չէ ո՛չ Հօր եւ ո՛չ Որդուն, այլ ստորադաս ուժ է, իսկ Որդին հաւասար է Հօր»: Այս վարդապետութիւնը հեղինակի անունով կոչուեց «Մակեդոնական» աղանդ⁽³⁾: Թէոդորոս Մեծի հրատերով գումարուեց Բ. տիեզերական ժողովը Կոստանդնուպոլսում 381թ., որի որոշումները և կանոնները Հայաստանեայց Առաքելական եկեղեցին ընդունում եւ յարգում է⁽⁴⁾: Մինչ այս ժողովի գումարուը Հռոմէական կայսրութիւնը բաժանուած էր չորս պրոֆէկտուրիայի՝ ամէն մէկն իր կուսակալներով՝ Հռոմ, Աղեքսանդրիա,

Անտիոք, Երուսաղէմ: Ըստ Նիկիայի ժողովի կանոնների, Հռոմի եպիսկոպոսը վայելում էր «առաջնութեան» պատիւը Անտիոքի, Աղեքսանդրիայի եւ Երուսաղէմի նկատմամբ ոչ թէ որովհետեւ նա յաջորդն էր Պետրոսի, «ինչպէս պապականները դաւանում են»⁽⁵⁾, այլ որովհետեւ նա «արքայանիստ քաղաքի եպիսկոպոս»ն էր: Կ.Պոլսոյ տիեզերական ժողովը 481թ. հաշուի առնելով այն պարագան, որ արքայանիստ քաղաքը այլեւս Հռոմը չէր, այլ Կ.Պոլիսը, այն սահմանում է հետեւեալ կանոնը՝ «Կոստանդնուպոլսոյ եպիսկոպոսին ունել զպատիւ աւագութեան յետ Հռովմայ եպիսկոպոսին, վասն զի և սա նոր Հռովմ»⁽⁶⁾: Քաղկեդոնի ժողովը (45 թ.), որը մէկ դար յետոյ գումարուեց, այս կանոնն անել է լուսաբանում իր 28-րդ կանոնով: «Հետեւելով յամենայնի սուրբ հարց վճռոց, եւ կարգելով հարիւր յիսուն աստուածաբաբալ եպիսկոպոսաց կանոնը կը վճռենք և կը հաստատենք նոյն ժողովոյն Կ.Պոլսոյ նորոյն Հռովմայ, սուրբ եկեղեցոյն առանձնաշնորհ առաւելութեանը վերաբերեալ որոշումը. «զի նա էր քաղաք թագաւորանիստ մայրաքաղաք կայսրութեան. և ծերակոյտի գահուն ժառանգութեան պատիւը ունեցաւ, պէտք է ունենայ եկեղեցական խնդրոյն մէջ ալ: Հռովմայ հին թագաւորական քաղաքին հոգեւորական առաւելութիւններն ալ»⁽⁷⁾: Սակայն «Տիեզերական» տիտղոսը բիզանդական ժամանակաշրջանից սկսած մինչեւ այսօր գուտ պատուոյ տիտղոս է և ոչ մի իրաւական առաւելութիւններ չի տալիս նրան իր պատրիարքութեան սահմաններից դուրս: Կ. Պոլսոյ Տիեզերական ժողովը վերահաստատելով Նիկիոյ ժողովի Զ. կանոնը, անելացնում է. «Ոչ է պարտ եպիսկոպոսի յարտաքոյ իւրոյ իշխանութեան գտեալ յեկեղեցիս կարգաւորութիւնս առնել կամ շփոթել»⁽⁸⁾: Քաղեդոնի ժողովի դաւանաբանական որոշումները ոչ միայն յաղթանակ էին Աղեքսանդրեան աստուածաբանութեան վրայ, այլ նաեւ նսեմացրեցին Աղեքսանդրեան պատմական աթոռի դիրքը: Ըստ Կ.Պոլսոյ ժողովի 3-րդ կանոնի, Պոլսոյ աթոռը բռնեց 2-րդ տեղը Հռոմից յետոյ: Ժողովը նաեւ ազատեց Երուսաղէմի աթոռը Կեսարիայի գերիշխանութիւնից՝ նրան շնորհելով հինգերորդ տեղը մեծ պատմական աթոռների շարքին՝ ամբողջ-

ջացնելով Ուղղափառ եկեղեցիների Pentarchy-ին՝ Հռոմ, Կ.Պոլիս, Աղեքսանդրիա, Անտիոք և Երուսաղէմ: Առաջին չորսը Հռոմէական կայսրութեան մեծագոյն քրիստոնէայ կրօնքի կենտրոններն էին, իսկ Երուսաղէմը այն վայրն էր, որտեղ Քրիստոս չարչարուեց, խաչուեց եւ յարութիւն առաւ: Այս հինգ քաղաքների եկեղեցական պետերը կրում են Պատրիարք տիտղոսը:

Երկու շատ կարեւոր թուականներ ընդհատեցին եկեղեցու միութիւնը արեւելքի և արեւմուտքի միջեւ: Առաջինը տեղի ունեցաւ 451թ.: Դ. Տիեզերական Քաղերդոնի ժողովի ընդունած վճռին՝ Քրիստոսի երկու բնութիւնների վերաբերեալ⁽⁹⁾ հինգ Արեւելեան եկեղեցիները մերժեցին ժողովի որոշումները և դաւանաբանական բանաձեւումները որպէս հակոտնեայ Աստուածաշունչի և առաջին երեք Տիեզերական ժողովների որդեգրած վարդապետութեան ու կազմեցին ժամանակակից բնութագրումով՝ «Ռչ-քաղերդոնական» կամ «հակա-քաղերդոնական» (հնում Միաբնակ=monophysite) Արեւելեան հինգ քոյր եկեղեցիները՝ Ասորի, Մալաբար Ասորի, Եթովպիա, Հայ, Ղպտի: Իսկ երկրորդ բաժանումը տեղի ունեցաւ 1054 թ.՝ Կաթոլիկ եւ Յոյն Ուղղափառ եկեղեցիների միջեւ՝ Սուրբ Հոգու «բիւնան» դաւանաբանական վեճերի պատճառով⁽¹⁰⁾, երբ նախաթոռութեան նախապատուութիւնը Արեւելեան եկեղեցիների համար վերջնականապէս շնորհուեց Կ.Պոլսոյ պատրիարքութեան: Այս նախապատուութեան պատիւը մնաց անփոփոխ, երբ 1454 թ. Կ.Պոլիսը դադարեց «կայսրութեան եւ ծերակոյտի մայրաքաղաքը» լինելուց: Օսմանեան կայսրութեան տիրապետութեան շրջանին Կ.Պոլսոյ պատրիարքը վայելում էր նախաթոռութեան արտօնեալ շնորհները՝ որպէս գերագոյն պետը (ethnarchos) յոյն ազգի եւ գլուխն էր ողջ Ուղղափառ համայնքի (millet)՝ Օսմանեան կայսրութեան սահմաններից ներս (11): Բայց իր հեղինակութիւնը չունէր կայսրութեան սահմաններից դուրս գոյութիւն ունեցող համայնքների վրայ: Այն բոլոր ազգութիւնները, որ 19-20-րդ դարերի ընթացքին նախապէս մաս էին կազմում Օսմանեան կայսրութեան, դարձան նոր քաղաքական միատրոներ՝ ծնունդ տալով նոր ինքնավար եկեղեցիների և մնացին Կ.Պոլսոյ պատրիարքութեան իրաւագորութեան սահմաններից դուրս:

Արեւելեան Բիւզանդական աւանդութեան յարող Ուղղափառ եկեղեցիների ներկայ կանոնական վիճակը

Ներկայումս գոյութիւն ունեն 5 տեղական Ուղղափառ եկեղեցիներ, որոնցից ամեն մէկը յայտնապէս անկախ են ներքին ղեկավարման հարցերում և ոչ մի առումով կախուած են Կ.Պոլսոյ պատրիարքութեան հետ: Նման ղեկավարման կառոյցն անկասկած պատճառ է բազմաթիւ շփոթ և սխալ կացութիւնների, որոնցից առաջինը բացակայութիւնն է մէկ ընդհանուր գերագոյն պետի, երբ տարածայնութիւններ եւ կամ եկեղեցաբանական տարակարծիքներ են ծագում մէկ կամ մէկից աւելի համայնքների միջեւ: Ուղղափառ եկեղեցիների աւանդութեան մէջ բացակայում է այն մեխանիզմը, որը կարող է մնան պարագային երաշխաւորել հարցերի բարուք լուծմանը: Դրա հետեւանքով մնան պարագաներում նոյնանման խնդիրներն ստանում են տարբեր լուծումներ: Միալը ծնում է սխալ: Իհարկէ յաճախ գումարում են միջազգային-եկեղեցական հանդիպումներ, որոնցում կայացած որոշումներն ունեն միայն խորհրդակցական նկարագիր եւ պարտադրողական չեն տուեալ ազգային եկեղեցու համար: Աւելորդ չէ յիշել, որ երկու եկեղեցիների միջեւ տարածայնութիւնները հարթելու համար եւս տեղի են ունենում երկբանակցութիւններ և կամ հրապարակում են միջնորդներ:

Մի երկրորդ անպատեհութիւնն էլ այն է, որ գերագոյն հեղինակութեան բացակայութիւնը անկարելի է դարձնում հովուական խնդիրների լուծումը «սփիւրքի» համայնքներում: «Ուղղափառ եկեղեցում չկայ մէկը, որ ունի համահաւասար դիրք, ինչպէս Պապը Կաթոլիկ եկեղեցում»: Հարցի էութիւնը կարելի է բացատրել այսպէս: 1920-ական թթ. Կ.Պոլսոյ Յունաց Պատրիարքը թէւ կրում է «Տիեզերական» (Ecumenical) տիտղոսը և սկսած 1045թ., երբ Արեւելեան եւ Արեւմտեան եկեղեցիները բաժանուեցին իրարից, նա վայելել է նախապատուութիւնը Ուղղափառ եկեղեցիների ընտանիքից ներս, բայց չունի իրաւասութիւնը միջամտելու այլ ազգային եկեղեցիների ներքին հարցերին: Իր դիրքը մնան է Կանտորբերի արքեպիսկոպոսի դիրքին՝ համայն աշխարհի, Անգլիկան եկեղեցում⁽¹²⁾: Նման իրավիճակում հովուական հարցերը լուծելու համար միակ ճանապարհը համա-ուղղափառ

(Pan Orthodox) ժողովի գումարումն է, որի օրակարգի պատրաստութեան համար նախապատրաստական ժողովներ են գումարվել 1961, 1963, 1964, 1966 և 1968 թուականներին: Չախտողումի պատճառներից մէկն է Թուրք կառավարութեան հարուցած խանգարիչ քաղաքականութիւնը և Ռուսաց եկեղեցու քացակալութիւնը ժողովներին՝ քաղաքական պատճառներով(13):

Այսպիսով, Ուղղափառ եկեղեցին ցրուած լինելով աշխարհով մէկ, չունի արտաքին այն կազմակերպութիւնը, որ կարող է ապահովել ժողովական/հաշտարար դեր. չկա մի արտաքին հեղինակութիւն՝ վստահուած մի անձի կամ մի հաւաքական խորհուրդի, որ իրաւական հեղինակութիւնն ունենայ վերահսկելու եկեղեցու միասնականութիւնը եկեղեցական հարցերում: Բայց սրանից չի կարելի եզրակացնել, որ Ուղղափառ եկեղեցում «Ընդհանրականութեան» ընթրնումը միայն տեսութիւն է: Գործնականին մէջ «Ընդհանրականութիւնը» նախ և առաջ արտայայտում է միջ-Ուղղափառ մակարդակի վրայ այն հանգամանքով, որ բոլոր 15 տեղական եկեղեցիները միմեանց հետ կապի մէջ են «Սուրբ Հաղորդութեան» (Eucharist) խորհուրդի միջոցով (այսպիսին չէ իրողութիւնը հինգ Արեւելեան ոչ-Քաղրեղոնական քոյր եկեղեցիների պարագային): Երկրորդ՝ Ուղղափառ եկեղեցիները պահպանել են դաւանական միասնականութիւնը, որի համար էլ յաճախ միջ-Ուղղափառ հաղիպումներ են տեղի ունենում: Երրորդ՝ տեղական եկեղեցիների առաջնորդները և ներկայացուցիչները ժամանակ առ ժամանակ նրկիստութեան մէջ են՝ կարեւոր հարցեր քննարկելու կամ կարծիքներ փոխանակելու: Հակառակ որ տակաւին երազում համա-Ուղղափառ հանդիպում տեղի չի ունեցել, աշխարհով սփռուած Ուղղափառ եկեղեցին պահպանում է իր «Ընդհանրականութիւնը»:

Ընդհանրապէս Ուղղափառ հասկացողութեան մէջ «Ընդհանրականութեան» գաղափարը օրգանապէս առնչում է «Ազգային եկեղեցու» հասկացողութեան, քան թէ «Տիեզերական եկեղեցի» հասկացողութեան հետ, որն իր մէջ ներառում է ազգային եկեղեցիների ամբողջական գումարը: Եկեղեցու ամենավաղ շրջանին, Քրիստոսի եկեղեցին կազմուած էր Երուսաղէմում՝ Քրիստոսի շուրջ համախմբուած հաւատացեալներից, որոնցից կազմուած էր «Մի, Սուրբ,

Ուղղափառ և Առաքելական» եկեղեցին, որն իրական պատկերն էր ընդհանրականութեան և ժողովրդավարութեան: Արդէն առաջին դարից սկսած Երուսաղէմից դուրս Քրիստոնէական համայնքներ ստեղծուեցին և ամէն մէկ նորաստեղծ համայնք կամ ազգային եկեղեցի ճանաչում էր որպէս անբաժան մասնիկը Տիեզերական եկեղեցու՝ իր ուղղափառ բոլոր յատկանիշներով: Ինչպէս ընդունուած է ասել, իւրաքանչիւր մի շրջանի եկեղեցի պատկերն է մէկ միասնական «Սուրբ Հաղորդութեան»՝ գլխատրութեամբ եպիսկոպոսի, որն ընտրուած գլուխն էր Աստուծոյ ժողովրդի:

Առաջնութեան գաղափարը նախնական եկեղեցում և Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներում

Նախնական եկեղեցու հայրերի գործերը, այդ թւում Սուրբ Իգնատիոս Անտիոքացու, ամբողջութեամբ նուիրում են այս եկեղեցագիտական հարցի բնութագրմանն ու քացատրութեանը: «Ներջինս իր Թղթերում անձանձորոյ ցուցմունքներով ընդգծում է եպիսկոպոսի գերագոյն դերը, որպէս գլուխը Սուրբ Պատարագի արարողութեան՝ շեշտելով, որ «ուստի պատշաճ է, որ եպիսկոպոսին նայենք ինչպէս մեր Տիրոջը» (Գլ.Բ): Ամէն ինչ եկեղեցում պէտք է կատարել իր իմացութեամբ. «լաւ է, որ առանց եպիսկոպոսի ոչինչ չգործէք»: (14)

Կամ «և առանց եպիսկոպոսի բող ոչ որ որեւէ եկեղեցական գործ չկատարի: Եշմարիտ Պատարագ կը համարուի այն, որը կատարում է եպիսկոպոսի կողմից կամ նրա, ով եպիսկոպոսից կատարելու հրաման ունի... Առանց եպիսկոպոսի իրաւունք չկայ որեւէ մէկին մկրտելու և ո՛չ էլ սիրոյ ճաշ մատուցելու, այլ ինչ որ նա որոշի, դա է Աստծուն հաճելի»(15): Նոյն նամակում գրում է. «Ով եպիսկոպոսին պատում է, Աստուծոյ պատիւ է գտնում, իսկ ով որեւէ քան գործում է, եպիսկոպոսից թաքցնում է՝ սատանային է ծառայում»(16): Իգնատիոսն ընդմիշտ մեծապէս արժեւորում է համերաշխ գործակցութիւնը եպիսկոպոսի, քահանայի և սարկաւագի միջեւ. «Թող եպիսկոպոսը ձեր գլխին կարգուած լինի ինչպէս Աստուաճ, և քահանաները՝ ինչպէս քազարոյի պատգամատրներ, իսկ սարկաւագները առաքելների նման յոյժ սիրելի են ինձ և հաւատարիմ են Յիսուս Քրիստոսին սպասաւորելու մէջ»(17): «Այսպէս և ձեր քահանաները, ովքեր արժանի

են իրենց անուանն ու Աստուծոյն, միարանուած են եպիսկոպոսի հետ, ինչպէս քնարի լարերը» (18):

Հեղինակը համոզուած է, որ «Եւ ամէն որ քող պատկառի սարկաւագներից, ինչպէս Յիսուս Քրիստոսից եւ եպիսկոպոսից, ինչպէս Հայր Աստուծոց, իսկ քահանաներից՝ ինչպէս Աստուծոյ խորհրդականներից եւ առաքելների կարգակիցներից» (19): Այս եկեղեցաբանութիւնը Իգնատիոս հայրապետին հանգեցնում է հետեւեալ դասական քանաձեւումին. «Թող ամբողջ բազմութիւնը լինի այնտեղ, ուր եպիսկոպոս կայ, ինչպէս որ ուր Յիսուս Քրիստոս է, այնտեղ է Ընդհանրական Եկեղեցին» (20):

Եպիսկոպոսի առաջնակարգ պարտականութիւնը, ըստ նախնական եկեղեցու հայրերի վկայարանութեան, պայմանաւորուած է այն ընկալմամբ, որ նա Քրիստոսի պատկերն է (icon) Սրբազան Պատարագի հաւաքի մէջ (21): Եպիսկոպոսը լինելով ազգային եկեղեցու միակ առաջնորդը, այնուհանդերձ չի առաջնորդում եկեղեցին մէն-մէնակ, այլ՝ մասնակցութեամբ քահանայական եւ սարկաւագական դասի: Եպիսկոպոսը չունի եկեղեցական հեղինակութիւն կամ իշխանութիւն ինքն իրենով՝ շնորհիւ իր եպիսկոպոսական կարգին, այլ տեղական եկեղեցու անդամներից մէկն է, որն իրեն վստահում է իր պաշտօնը և պաշտօնակատարութեան իրաւասութիւնը: Եկեղեցական համայնքից դուրս եպիսկոպոսի ծառայութիւնը գրկուած է իր իմաստից և վաւերականութիւնից:

Տեղական եկեղեցու միջավայրում եպիսկոպոսի առաջնութիւնը անընդհատ է և անհարցաքննելի: Ուղղափառ եկեղեցիների աւանդութեան մէջ՝ հիմնաւորուած սուրբ հայրերի քողած աստուածաբանական ժառանգութեան, ինչպէս Իգնատիոս Հայրապետի, Կիպրիանոս Կարթիզենացու և հետագայի Բիզանդական շրջանի աստուածաբանների գործերի վրայ, ամէն մի եպիսկոպոս, ոչ միայն Հռոմի եպիսկոպոսը, յաջորդն է Պետրոս Առաքելի: Բարլամ Կալարիացին, 14-րդ դարի նշանաւոր Բիզանդացի աստուածաբան և որն իր կյանքն ատարտեց որպէս Կարթիզ, գրում է. «Ամէն մի ուղղափառ եպիսկոպոս Քրիստոսի հովիւն է եւ յաջորդը՝ առաքելների, որով եթէ աշխարհի բոլոր եպիսկոպոսները ուրանային իրենց հաւատքը և մնար միայն մի եպիսկոպոս՝ որպէս պահապան ճշմարիտ դաւանանքի, ապա Պետրոս Առաքելի հաւատքը փրկուած կը լինէր նրա անձի մէջ»: Նա շարունակում է.

«Եպիսկոպոսները, որոնց Պետրոս (Առաքել) ձեռնադրեց, յաջորդներն են ոչ միայն Պետրոսի, այլ նաեւ միւս առաքելների. նոյն հետեւողականութեամբ, այն եպիսկոպոսները, որոնք պաշտօնի կոչուեցին ուրիշների ձեռքով, կարելի է համարել յաջորդները Պետրոսի»: (22)

Այս տեսանկիւնից, այն խոստումը, որ Տէրը տալիս է Պետրոս Առաքելին, վերաբերում է ոչ միայն Կարթիզ եկեղեցուն, այլ բոլոր ազգային եկեղեցիներին, որոնց գլուխը եպիսկոպոսն է: «Դուք Պետրոսին համարում էք միայն Հռոմի ուսուցիչը», - գրում է մի անանուն Բիզանդացի աստուածաբան իր մի հակալատիմական գրութեան մէջ, «մինչդեռ սուրբ հայրերը այդ խոստումը՝ տրուած Պետրոսին, մեր Տիրոջ կողմից համարում են խոստացած անցեալի և ներկայի ընդհանրական եկեղեցուն, մինչդեռ դուք տալիս էք նեղ եւ սխալ մեկնաբանութիւն՝ այն վերագրելով միայն Կարթիզ եկեղեցուն: Չեր տեսանկիւնից անհնարին է հասկանալ, թէ ինչպէս ոչ միայն Հռոմի եկեղեցին մասնաւորապէս, բայց նաեւ բոլոր եկեղեցիներն ընդհանրապէս, ունեն մի Փրկիչ եւ նրանց հիմքերը կառուցուած են այն «վէմի» վրայ, որն է Պետրոսի խոստովանանքը»: (23)

Ազգային եկեղեցիների կապը Ընդհանրական Եկեղեցու հետ

Ինչպէ՞ս է, որ տեղական եկեղեցու «Ընդհանրական» լինելը չի հակասում ողջ եկեղեցու «Ընդհանրական» կոչումին: Մեյենդորֆի այդ առնչութիւնը բնութագրում է այսպէս. «Տեղական եկեղեցու գաղափարը մի եպիսկոպոսի իշխանութեան ներքոյ, որին սովորաբար ընտրում է ողջ եկեղեցին, բայց լիազօրուած առաքելական պարտաւորութիւններով որպէս յաջորդը Պետրոսի, «ընդհանրական»ութեան դաւանական հիմն է, որը եկեղեցին իրացրեց՝ սկսած երրորդ դարից: Սրբազան Խորհրդի եկեղեցաբանութիւնը ենթադրում է, որ ամեն մի տեղի եկեղեցի, թէև իր մէջ ընդգրկում է «ընդհանրական»ութեան գաղափարն ամբողջապէս, հետեւապէս միշտ միութեան և համաձայնութեան մեջ է միւս բոլոր եկեղեցիների հետ, որոնք նոյնպէս բաղկացուցիչ մաս են կազմում այդ «ընդհանրական»ութեանը: Եպիսկոպոսները կրում են ոչ միայն բարոյական պարտականութիւն՝ հանդէպ իրենց համայնքին, այլ նաեւ իրենց մասնակ-

ցութիւնն են բերում միացեալ եպիսկոպոսական առաքելութեանը, քանի որ եկեղեցին «Մի» է: (24) Կիպրիանոս հայրապետն այս միտքը բանաձեւել է այսպէս. «Եպիսկոպոսութիւնը մէկ է, և ամէն եպիսկոպոս լիովի մասնակից է միութեան»: (25)

Այն բոլորը, որը յիշուեցին վերելում «Ազգային եկեղեցու» մասին, վերաբերում է եկեղեցական այն միաորին, որն այսօր կոչում ենք «բեմ»՝ եկեղեցին մի աշխարհամասում (երկրում, տարածքում)՝ մի եպիսկոպոսի հսկողութեան ներքոյ: Իսկ ժամանակակից իրաւաբանական տեսանկիւնից «Ազգային Եկեղեցի» եզրը կիրառում է աւելի մեծ միաորններից կազմուած եկեղեցիներից՝ Պատրիարքութիւն եւ Մետրոպոլիտութիւն: Նման վիճակներում առաջնութեան սկզբունքը տեղի է տալիս ղեկավարման հաւաքական տեսակին: Նման ղեկաբերում շրջանի Եկեղեցու առաջնորդը դառնում է «առաջինը հաւասարների մէջ». նա միջամուխ չի լինում իր իշխանութեան տակ գործող թեմերի ներքին խնդիրներին, չի ունենում ուղղակի իրաւասութիւն նրանց վրայ, թէւ կարող է ունենալ համագործակցելու իրաւունքներ որոշ հարցերի մէջ, որոնք վեր են թեմական եպիսկոպոսի կարողութեան սահմաններից:

Թէւ ազգային եկեղեցիների առաջնորդների իրաւունքներն ու պարտականութիւնները տարբերում են եկեղեցուց եկեղեցի, սակայն բացառուած է, որ որեւէ մի եկեղեցի իր առաջնորդին տայ գերագոյն սանձարձակ հեղինակութիւն, որովհետեւ եպիսկոպոսական ժողովին է վերապահում այդ հեղինակութիւնը: Օրինակի համար, Ռուս Ուղղափառ եկեղեցում դաւանական հեղինակութիւնը տրուում է շրջանի եկեղեցուն, որի մէջ ոչ միայն եպիսկոպոսները, այլ նաեւ հոգեւորականները, վանականները և աշխարհականները բերում են իրենց ներդրումը, մինչդէռ ամենաբարձր նուիրական իշխանութիւնը տրուում է Եպիսկոպոսական Ժողովին: Իսկ Մոսկուայի և համայն Ռուսաստանի պատրիարքը ղեկավարում է եկեղեցին Սուրբ Եպիսկոպոսական Սինոդի համագործակցութեամբ և իր անունը Պատարագի ընթացքին յիշում է առաջնորդի անունից առաջ: Յոյն Ուղղափառ եկեղեցում տեղական եպիսկոպոսական խորհուրդը չի ընդգրկում աշխարհականների: Վերջնական հեղինակութիւնը պատկանում է Եպիսկոպոսական Սինոդին, որը նախագահում է Աթենքի և

համայն Յունաստանի Արքեպիսկոպոսը: Սակայն եկեղեցական արարողութիւններում միայն յիշատակում կայ Սինոդի և ոչ թէ արքեպիսկոպոսի անունը:

Շրջանների եկեղեցիների միաորումը՝ աւելի սահմանափակ եկեղեցական միաորումներից, սկսեց երրորդ եւ չորրորդ դարերում եւ այս իր դրսեւորումն է ստացել Լ.Բ. Առաքելական կանոնի մէջ: «Չեպիսկոպոսն իւրաքանչիւր որ ազգի գիտել պարտ է զիրեանց առաջինսն եւ համարել պարտ է իբրեւ զգլխաւոր, եւ մի ինչ աւելորդ առնել առանց նորա կամաց, բայց զայն միայն իւրաքանչիւր ումեք որչափ իւրում իշխանութիւն անկէ եւ որք ընդ նովաւ տեղիքն են, այլ եւ ոչ նմա առանց նոցա կամաց առնելի ինչ. այսպէս միաբանութիւն իցէ և փառաւորեսցի Աստուած ի ձեռն Յիսուսի եւ Սրբոյ Հոգւոյն» (Թեմի եպիսկոպոսը պիտի կառավարի իւր վիճակին պատկանելիք տեղերը, իսկ մնացած բաներում ոչինչ պիտի չանի՝ առանց գլխաւոր եպիսկոպոսի: Վերջինս էլ պիտի գործի եպիսկոպոսի խորհրդով, որովհետեւ այս ձեւով միայն կարելի է համաձայնութիւն պահպանել եւ փառաբանել Աստուծուն): (26)

Իսկ առաջին տիեզերական Նիկիոյ ժողովի (325թ), Ե. կանոնը սահմանում է. «Չեպիսկոպոսն արժան է նստուցանել եպիսկոպոսաց աշխարհին. ապա թէ ոչ է մարդ կամ վասն հեռաւորութեան, կամ վասն հարկի ինչ, Գ.- (3) եպիսկոպոս ի մի ժողովեալք և թղթով վկայութեան բացակայից ձեռնադրեսցեն: Բայց զպատիւն եւ զշնորհն գլխաւորին արժան է հաստատել, այսինքն է կարողիկոսին կամելով սուրբ ժողովոյն»: («Աւելի վայելուչ է, որ աշխարհի բոլոր եպիսկոպոսների համաձայնութեամբ առաջնորդ եպիսկոպոս նշանակուի: Եթէ ճանապարհների հեռաւորութեան եւ այլ պատճառներով բոլոր եպիսկոպոսները չկարողանան ժողովուել, գոնէ երեք հոգի պիտի հաւաքուեն, իսկ մնացածները իրենց համաձայնութիւնը թղթով պիտի ուղարկեն եւ ապա ձեռնադրութիւն կատարեն: Ամէն մի երկրում այդպիսի գործողութեան հաստատութիւնը պատկանում է տուեալ երկրի մետրոպոլիտին (կարողիկոսին):» (27)

Արդէն չորրորդ դարում կային մի քանի կազմակերպուած առաջնորդութիւններ (թեմեր), որոնց եպիսկոպոսներն ունէին լրիւ նուիրապետական հեղինակութիւն իրենց թեմերի սահմաններից ներս: Բայց նա պետք է

խորհրդակցի միս եպիսկոպոսների հետ, նրանց միջից գլխատրի՝ մետրոպոլիտի հետ այն հարցերի շուրջ, որոնց լուծումն իր կարողութիւնից վեր է: Մետրոպոլիտը ձեռնադրում է մի շարք եպիսկոպոսների կողմից՝ հաւասար միս եպիսկոպոսներին իր իշխանութեամբ՝ իր թեմի սահմաններից ներս, բայց նա իրաւասութիւն չունի խառնուելու օտար թեմերի ներքին գործերին, բայց երաշխատրում է թեմերի միջեւ եղած միութիւնը և լուծում անհամաձայնութիւններ:

Առաջին Տիեզերական ժողովի ժամանակ արդէն գոյութիւն ունէին մի քանի եկեղեցական տարածքներ, որոնք վայելում էին մետրոպոլիտութեան իրաւասութիւններ: Օրինակի համար, Նիկիոյ ժողովի Ձ.(6) կանոնը յիշում է Աղեքսանդրիոյ, Անտիոքի, Հռոմի եպիսկոպոսութիւնները, իսկ Է.(7) կանոնը համահաւասար հեղինակութիւն է տալիս Երուսաղէմի եպիսկոպոսին (այս շրջանին եպիսկոպոսական աթոռանիստ մայրաքաղաքներն էին Եփեսոսը, Կապադովկիայի Կեսարիան, Սիլանը և Կարթագենեան): Կոստանդնուպոլսի՝ Արեւելեան կայսրութեան մայրաքաղաք հռչակուելուց յետոյ, իր եպիսկոպոսն ստացաւ Մետրոպոլիտի յարգանքը և Հռոմից յետոյ դարձաւ երկրորդ ամենապատուաւոր վայրը: Հետագային բարձրացաւ «Պատրիարքութեան» աստիճանին: Ըստ Բիզանդական աստուածաբանութեան, Տիեզերական եկեղեցին ղեկավարում է հինգ պատրիարքներով՝ Հռոմի, Կոստանդնուպոլսոյ, Աղեքսանդրիոյ, Անտիոքի և Երուսաղէմի: Այս եկեղեցիները, ինչպէս և այն բոլոր եկեղեցիները, որոնք առաջացան հետագային, կոչւում են «Տեղական կամ Ազգային», կամ «ինքնավար» (autocephalous)՝ Ուղղափառ աւանդութեան մէջ:

Հռոմի «առաջնութեան» դաւանանքը Ուղղափառ եկեղեցիների աստուածաբանութեան մէջ եկեղեցական պատմութիւնից զիտենք, որ Արեւելքի և Արեւմուտքի եկեղեցիների միջեւ եղած տարակարծութիւններից մէկը Հռոմի եպիսկոպոսի «առաջնութեան» դաւանանքն է, որն արդէն Տիեզերական ժողովների ժամանակաշրջանում դարձել էր հակաճառութեան նիւթ: Արեւմուտքի մէջ այն հակումը, որն աստիճանաբար մղեց Հռոմի եպիսկոպոսին կրելու Pontifex Maximus տիտղոսը տիեզերական եկեղեցում, նրան իրաւասութիւն և հեղինակութիւն տուեց վաւերացնելու ժողովների վճիռ-

ները: Արեւելքում Հռոմի եպիսկոպոսը համարւում էր Հռոմի տեղական եկեղեցու առաջնորդը եւ կրում պատիւը «primus inter pares» (առաջինը հաւասարների մէջ)՝ արտայայտութիւն տալով այն տեսակէտին, որ Տիեզերական ժողովներում բանաձեւած որոշումները կարիք չունեն նրա կողմից վաւերացուելու: Բազմաթիւ գիտական ուսումնասիրութիւններ են հրատարակուել այս խնդրի շուրջ եւ այստեղ դրանց անդրադառնալու կարիքը չունենք (Գերենիկ եպսկ. Փոլատեան, Եղիշէ Արք. Տէրտէրեան, Մաղաքիա Արք. Օրմանեան): (28) Այնուամենայնիւ հարկ կայ գտնել ընդհանուր գծերի մէջ տալ, թէ ինչպիսի պայմաններում Ուղղափառ եկեղեցիները պատրաստ են ընդունել Հռոմի եպիսկոպոսի առաջնութիւնը, երբ վերականգնուի նախնական «մէկ» եկեղեցու միութիւնը:

Առաջին հերթին, Հռոմի եպիսկոպոսի առաջնութեան ընդունումը պէտք է նախորդի հաւատքի միութեանը՝ վերականգնելով դաւանաբանական այն վիճակը, որ գոյութիւն ունէր նախնական անբաժան եկեղեցում: «Մենք պէտք չէ հակառակուենք լատիններին», գրում է Սուրբ Սիմէոն Թեսալոնիկեցին 15-րդ դարում, «եթէ նրանք ասում են, որ Հռոմի եպիսկոպոսը առաջինն է. այս առաջնութիւնը եկեղեցուն վնասաբեր չէ: Բայց նրանք էլ պիտի ապացուցեն, որ նա հաւատարիմ է մնացել Պետրոսի եւ իր յաջորդների հաւատքին. այդ դէպքում թող նա վայելէ Պետրոսին տրուած նախապատուութիւնը, թող լինի առաջինը, եպիսկոպոսապետը, գերագոյն առաջնորդը... միայն այն դէպքում, երբ նա հաւատարիմ կը մնայ Սիլվեստեր (314-335), Ազարոն (378-381), Լեւոն (440-461), Լիբերիոս (352-366), Մարտին (649-361) եւ Գրիգոր (827-844) պապերի ուղղափառութեանը: Այդ դէպքում միայն մենք մեզ կը համարենք Պապի իշխանութեան ենթակաները, ինչպէս և Պետրոսի, նաեւ Տիրոջ՝ Մեր Փրկչի»: (29) Այսպիսով, երկու եկեղեցիների միջեւ հաւատքի վերականգնման ուղին ծանրանում է Կաթոլիկ եւ Ուղղափառ աստուածաբանների երկխօսութեան վրայ: Ուղղափառ եկեղեցին այն կարծիքին է, որ այս երկխօսութեան մէջ Կաթոլիկ թերը պէտք է համոզուի, որ իրենց հաւատքը անբաժան եկեղեցում ունեցած հաւատքն է:

Հռոմի եպիսկոպոսի գերագահութեան հարցը Ուղղափառ եկեղեցիների եպիսկոպոսների վրայ՝ հաւատքի վերականգնման և միու-

թեան պարագային, նոյնպէս կը քննարկուի և իր լուծումը կը ստանայ երկխօսութեան ճանապարհով: Անընդունելի կը լինի նախագուշակել երկխօսութիւնների արդիւնքն այս հանգրուանին: Սուրբ Սիմէոն Թեասաղոնիկեցու վերը բերուած վկայութիւնը փաստում է Ուղղափառ կողմի պատրաստակամութիւնը՝ ճանաչել Հռոմի Պապի առաջնութիւնը միայն այն պարագային, երբ վերականգնուի հաւատքի միութիւնը: Շատ հաւանական է, որ Ուղղափառ պատրիարքները կը համաձայնուեն ընդունել Պապի «պատուոյ առաջնութիւնը» եւ ոչ թէ «հեղինակութեան առաջնութիւնը»: Ուղղափառ եկեղեցիները չեն հակառակի Հռոմի եպիսկոպոսի ճանաչումին որպէս «առաջինը հաւասարների մէջ», ինչպէս վայելում էր նախնական անբաժան եկեղեցում՝ ստանձնելով նոյնիսկ որոշ համադասութեան դեր Տիեզերական եկեղեցուց ներս: Բայց ոչ մի դէպքում նրանք չէին համաձայնուի պապին ճանաչել որպէս միակ գլուխը աշխարհի քրիստոնէութեան, որը հակամէտ պիտի լինէր դարերի ընթացքում Արեւելեան եկեղեցիների կողմից մշակուած աստուածաբանական աւանդութեանը:

Պապի «անսխալականութեան» (infallibilist) դաւանանքը «ex cathedra» դաւանաբանական հարցերի մէջ անընդունելի է բոլոր Ուղղափառ եկեղեցիներին և ինչպէս նաեւ Բողոքական աւանդոյթներին հարող յարանաւանութիւններին: Վատիկանի առաջին ժողովի (1869-70) որոշումը՝ համաձայն Ուղղափառ եկեղեցիների կարծիքին, Պապին դասում է եկեղեցուց վեր, որովհետեւ այն յաւակնում է հաստատել, որ Պապի որոշումները ենթակայ չեն փոփոխութեան՝ «շնորհիւ այն ներհուն հեղինակութեան, որ դրանք պարունակում են՝ անկախ դրանց ընդունելութեան եկեղեցու կողմից»: Ուղղափառ եկեղեցիներում ոչ մի եպիսկոպոս եւ նոյնիսկ առաջնորդներ չեն կարող իրենց համարել անսխալական: (30)

Վերջապէս, անհրաժեշտ է յիշել, որ առաջնութեան հարցը ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ եկեղեցիների խորհրդում չի արծարծուել եւ ոչ էլ քննարկուել համայն Ուղղափառ եկեղեցիների շրջանակներում: Մի հանգամանք, որ շատ աւելի է բարդացնում հարցի քննարկումը Ուղղափառ եւ Կաթոլիկ աստուածաբանների համար: Բոլոր Ուղղափառ եկեղեցիների համայնքները համաձայն են, որ մի գերագոյն իշխանութիւն չունեն: Բայց նրանք նաեւ

չունեն միասնական հասկացողութիւն Կ.Պոլսի Պատրիարքի առաջնութեան եւ դերի շուրջ: Պարզ է, որ լուրջ եւ պարտաճանաչ քննարկում պիտի տեղի ունենայ առաջնութեան խնդրի շուրջ միջ-Ուղղափառ մակարդակի վրայ՝ նախքան հարցի քննարկման անցնելը, Կաթոլիկ եկեղեցու հետ բանակցութեան մէջ մտնելը: Առանց միաձայնութեան Ուղղափառ եկեղեցին պիտի չունենայ միասնական կարծիք, առանց որի երկու եկեղեցիների միջեւ երկխօսութիւնը կը մատնուի ձախողութեան՝ դեռ նոյնիսկ չսկսած:

Ամփոփելով այն, ինչ ասուել է մինչեւ այստեղ՝ առաջնութեան եւ ընդհանրակա-նութեան առնչութիւնը Ուղղափառ եկեղեցում, կարելի է ընդգծել, որ առաջնութեան սկզբունքի գործադրութիւնը Ուղղափառ աւանդութեան մէջ, լաւագոյնս արտայայտում է թեմական ոլորտում, որտեղ գերագոյն հեղինակութիւնը կայանում է եպիսկոպոսի մօտ, որը ղեկավարում է թեմը հոգեւոր եւ աշխարհիկ դասի համագործակցութեամբ: Իսկ ընդհանրակա-նութեան սկզբունքը, ընդհակառակը, ամենա-լիովի արտայայտութիւնն է գտնում Տեղական եկեղեցու մակարդակի վրայ, որի ղեկավար մարմինը բաղկացած է եպիսկոպոսների խորհրդով՝ գլխաւորութեամբ առաջնորդ եպիսկոպոսի, որին ընտրում է հէնց նոյն խորհուրդը:

Համա-Ուղղափառ պատրաստական բա-նակցութիւնների մէջ առաջնութեան սկզբունքը (ոչ թէ նախապատուութեան առաջնութիւնը) դեռ վերջնական լուծում չի ստացել, մինչդեռ ընդհանրականութեան սկզբունքը ընդունուած է առանց գործնական մեխանիզմի՝ այն իրականացնելու համար: Նկատի առնելով նման ղեկավարման կենտրոնաձիգ կառոյցի բացակայութիւնը, կաթոլիկ շրջանակները հրաշք են համարում այն իրողութիւնը, որ Ուղղափառ եկեղեցին կարողացել է «պահել զմիաբանութիւն Հոգւոյն յօղի խաղաղութեամբ» (Եփես. Դ:3) եւ չի տարաբաժանուել բազմաթիւ անկախ եկեղեղեցական միատրոնների:

Ընդհակառակը, Հռոմէական Կաթոլիկ եկեղեցում, առաջնութեան սկզբունքն իր լաւագոյն արտայայտութիւնն է գտնում Հռոմի Եպիսկոպոսի առաքելութեան մէջ, որի հեղինակութիւնը տարածում է Կաթոլիկ եկեղեցու բոլոր ենթաբաժանմունքների վրայ՝ առանց բացառութեան: Բոլոր եպիսկոպոսների հեղինակութիւնը բխում է Պապի հեղինակու-թիւնից՝ որպէս յաջորդը Պետրոս Առաքեալի:

Եթէ խորհուրդը բարձրագոյն հեղինակութիւնն է Ուղղափառ աւանդութեան մէջ, որին բոլոր եպիսկոպոսներն առանց բացառութեան ենթակայ են, եւ անսխալականութիւնը միայն վերաբերում է եկեղեցուն, ապա Կաթողիկ աւանդութեան մէջ Պապը աւելի վեր է քան խորհուրդը եւ ինքն է, որ անկախ խորհրդից, եւ ինչու չէ նաեւ եկեղեցուց, հանդիսանում է անսխալականութեան դրօշը: Շատ Ուղղափառների համար այս կարող է թուալ պարադոքսային եւ անբացատրելի, թէ ինչո՞ւ են եպիսկոպոսական ժողովներ գումարում, հակառակ որ հեղինակութիւնը այսքան կենտրոնացուած է մէկ անձի վրայ:

Այս երկու եկեղեցաբանական կառոյցների համատեղելիութեան չափը միայն կարելի է համոզիչ չափով բացայայտել՝ շնորհիւ երկու եկեղեցիների միջեւ առաջնութեան խնդրի շուրջ տեղի ունենալիք երկխօսութեան: Բայց նման բանակցութիւնները պարտադրաբար պահանջում են երկու կողմերից էլ ուշադիր պատրաստութիւն եւ լուրջ աստուածաբանական իմացութեան դրսեւորում:

Աղբիւրներ

1. Գաբրըրեան Յովսէփ, «Տիեզերական Պատմութիւն ի սկզբանէ աշխարհի մինչեւ ցմեր ժամանակ», Վիեննա, 1852, Հտ. Բ., 565-566.
2. Ware, Timothy, The Orthodox Church, London, 1964, p.15.
3. Տէր-Սիմասեանց, Երուանդ, «Ընդհանուր Եկեղեցական Պատմութիւն», Ս. Էջմիածին, 1908, 311-313.
4. Տէր-Սիմասեանց, Երուանդ, անդ, 120-133.
5. Թանգեան, Ն.Վ. Մելիք, «Հայոց Եկեղեցական իրաւունքը», Թեհրան, 2004, 140.
6. Թանգեան, Ն.Վ. Մելիք, անդ, 227-228: Ղլտճեան, Արսէն, «Կանոնագիրք Հայոց», Թիֆլիս, 1913, 267.
7. Արքայ Կեթէի, «Հերձուածող պապութիւն կամ Հռովմ ի յարաբերութիւն ընդ Արեւելեան եկեղեցիս», քարգմ. Սիաբանից Չարխափան Ս. Աստուածամի վանաց, յԱրմաշ, 1869. 19-20.
8. Թանգեան, Ն.Վ. Մելիք, անդ, 227: Ղլտճեան, Արսէն, անդ, 266.
9. Nersessian, Vrej, The Council of Chalcedon, in Treasures from the Ark. 1700 years of Armenian Christian Art, The British Library, 2001, 37-42; Francis Dvornik, The Ecumenical Councils,

New York, 1961, 26-31. Պետրոսեան Եզնիկ Ծ.Վարդապետ, «Հայ Եկեղեցու պատմութիւն», Մասն Ա. (Սկզբից Մինչեւ 1441), Ս. Էջմիածին, 1995, 78-83.
10. Ներսէսեան, Ներսէս Ա. Քննյ. «Սուրբ Հոգու ըմբռնումը» (Filoque), «Հասկ» թիւ 9(2013), 942-956.

11. Հայ millet-ների [Ուղղափառ , Կաթողիկ եւ Բողոքական] ստեղծման պատմութեան համար տես - Մաղաքիա Արք. Օրմանեան, «Ազգապատում», Պէյրութ, 1961, Գ. հատոր Ա. գիրք. Hagop Barsamian, The dual role of the Armenian Amira Class within the Ottoman Government and the Armenian Millet (1750-1850) in Christian and Jews in the Ottoman Empire, ed. by Benjamin Braude and Bernard Lewis, London, 1982, vol. I, 171-184.

12. Ware, Timothy, The Orthodox Church, London, 1964, 15, 139-140.

13. Ware Timothy, ibid. Սրանք են Ուղղափառ աւանդութեան պատկանող ազգային եկեղեցիները- Ռուսաստան, Ռումինիա, Սերբիա, Յունաստան, Բուլղարիա, Վրաստան, Կիպրոս, Չեխոսլովակիա, Լեհաստան, Ալբանիա, Սինաի, Ֆինլանդիա.

14. Սուրբ Իգնատիոս Աստուածազգեսց, «Թղթեր», (Թարգ. Ս.Ս.), Երեւան, 2003,

Տրալիանոսացիներին, Գլ.Ա (բ)

15. Սուրբ Իգնատիոս, «Թղթեր»,

Զմիտնացիներին, Գլ.Գ (ը).

16. Սուրբ Իգնատիոս, անդ՝ Գլ.Գ (թ).

17. Սուրբ Իգնատիոս, անդ՝ Մագնեսիացիներին, Գլ.Բ (գ)

18. Սուրբ Իգնատիոս, անդ՝ Տփեսացիներին, Գլ.Բ(դ)

19. Սուրբ Իգնատիոս, անդ՝ Տրալիանոսացիներին, Գլ.Ա (գ)

20. Սուրբ Իգնատիոս, անդ՝ Զմիտնացիներին, Գլ. Գ(ը)

21. Meyendorff, John, What is an Ecumenical council? in Orthodoxy in the modern world. Klin, 2002, 28

22. Meyendorff, John, Apostle Peter and his succession in Byzantine Theology, in Orthodoxy in the modern world, 141.

23. Meyendorff, John, 'Apostle Peter and his succession in Byzantine Theology', ibid, 136.

24. Meyendorff, John, What is an Ecumenical Council?, ibid, 136.

25. St.Cyprian, The Lapsed, The unity of the Catholic Church, translated and annotated by

Maurice Bevenot, London 1957, chapter 5, 47-48 (Ancient Christian Writers).

26. Թանգեան, Ն. Վ. Մելիք, «Հայոց Եկեղեցական իրաւունքը», Ա գիրք, անդ, 91, 118, .

27. Գրճեան, Արսէն, «Կանոնաց գիրք Հայոց», 238-39; Ն.Վ.Մելիք Թանգեան, «Հայոց եկեղեցական իրաւունք», 134, 222.

28. Օրմանեան, Եպս. Մաղաքիա, «Աբոռ Հայաստանեայց», Վարդաշապատ, 1886 (Ս.Էջմիածին, 1972), Ն. Եպս. Շովական (Պողարեան), «Հայոց Եկեղեցին», «Սիոն» Յունուար (1963), 14-19 (գրախօսական Գեր. Լ. Ս. Կոզեանի հեղինակութեամբ. լոյս տեսած «Հայոց Եկեղեցին մինչեւ Փլորենտեան ժողովը» ուսումնասիրութեան), Եղիշէ Վարդապետ Տէրտէրեան, «Ականայ Անդրադարձութիւնը Տ. Գրիգոր Պետրոս ԺԵ. Աղաջանեան Կարդինալին իր Հովուական Թուղթերուն Առօր» Էջմիածին Ապրիլ-Յունիս (1951), 25-37. Դերենիկ Եպիսկոպոս (Փղատեան), «Թուղթ Հերքման: Պատասխան Կարդինալ Աղաջանեանի «Հովուական Թուղթ»ի: Երրորդ տպ. Անթիլիաս, 1951.

29. Bathrellos Demetrios Fr. St. Symeon of Thessaloniki and the question of the primacy of the Pope, Sobornost 30:1(2008), 54-71.

30. Ford, John T., Infallibility, Teaching of the Second Vatican Council, Infallibility Debates, The Harpercolins Encyclopedia of Catholicism, Richard P. McBrien(ed), New York, 1989, 664-665, Hans Kung, Infallible? An Enquiry. Translated from the German by Erich Mosbacher, London, 1972.



Նիկիոյ Ժողովի 318 Հայրապետները, 325 թ.



Նիկիա քաղաքի մուտքերէն մին



Կը խմբագրուի Նիկիոյ Հանգանակը



**ԵՐՈՒՍԱԼԷՄԻ ՊԱՏՐԻԱՐԹՈՒԹԵԱՆ
ՍԿԻՋՔՆ ՈՒ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ**

Հին թուղթերու տրցակին մէջէն գտայ ութածալ պրակ մը՝ 26 էջերէ բաղկացած, մասամբ ջուրէն արուած, շեղագիր գրչութեամբ, վերի խորագրով: Գրութիւնը՝ իւրաքանչիւր էջը 17 տողով, կը հասնի մինչեւ էջ 11-ի, տետրակին վարի մասը պարապ ըլլալով: Հոս կը հրատարակեմ տետրակին պարունակութիւնը եղածին պէս:

«Քրիստոնէական եկեղեցին իւր վարչութիւնը առաքելներէն տեսածին համեմատ շարունակեց մինչեւ Նիկիոյ ժողովը, այսինքն ինչպէս առաքելք զանազան սահմաններու մէջ եկեղեցիները հաստատելէ ետք՝ տեսուչներ եւս կը ձեռնադրէին, եւ նոքա իրենց ձեռնհասութենէն վեր եղած խնդրոց մէջ ուղղակի առաքելոց կը դիմէին, այսպէս ալ իւրաքանչիւր եկեղեցոյ տեսուչ՝ իւր երկրին ազգային միութեան հետ յարաբերութիւն ունեցող տեսչին կը դիմէր առաքելներէն վերջն, եւ այս կը լինէր առաւելաբար քաղաքական իշխանութեանց յարուցած հալածանաց կամ որեւէ պատճառաւ յառաջ եկած յարաբերութեանց վերաբերեալ հանգամանաց առթիւ»:

«Հետեաքար, առաքելոց օրերէն մինչեւ Նիկիոյ ժողովը, ինչպէս ամէն առաքել իւր քարոզած եկեղեցիներուն ամէն պէտքերն կը հոգար, այսպէս ամէն տեսուչ եկեղեցին կը կառավարէր առանց ուրիշ տեսչէ մը կախում ունենալու»:

«Նիկիոյ ժողովին մէջ խնդիր եղաւ թէ ինչպէ՞ս զգուշանալ պէտք է որպէսզի Արիոսական աղանդաւորներէն քահանայ և եպիսկոպոս կամ քարոզիչ ձեռնադրուին այնուհետեւ, ի սպառ անհետին այն աղանդոյն մոլորեալները: Որոշեցին որ ձեռնադրելի

եպիսկոպոսներն քննուին, և իւրաքանչիւր եպիսկոպոս իրենց ձեռնադրելի քահանաներն քննէ: Եւ որպէսզի այս քննութիւնն աւելի զգուշութեամբ լինի, մասնաւոր տեղեր նշանակեցին քրիստոնէութիւն տարածուած երկիրներէն այն սահմաններուն մէջ, ուր որ այն աղանդաւորներն աւելի շատ տարածուած էին, եւ այս որոշուած տեղերն էին Աղեքսանդրիա Եգիպտացոց, Կեսարիա Պաղեստինի, Անտիոք Ասորոց, և Եփեսոս Ասիական յունաց: Այնուհետեւ այս տեղերու եպիսկոպոսներն՝ պատրիարք (բարձր. եպիսկոպոս) հասկցան: (Եթէ հետաքրքրութեամբ նկատուին պատմութիւններն, եպիսկոպոսաց ընտրութեան և ձեռնադրութեան այս պայմանն կամ կանոնն յօրինեցաւ միայն այն երկիրներու համար, որովհետեւ այն սահմաններուն մէջ միայն կը գտնուէին այն աղանդաւորներն, իսկ ուրիշ երկիրներ, ինչպէս Հայաստան, Ասորեստան (ոչ Ասորիք), Բաբելաստան, Պարսկաստան, Աղուանք, Վիրք եւ բոլոր Եւրոպա այս կանոնին չէին ենթարկուեր, ըստ որում այն կողմերն այն աղանդաւորներէն չկային: Սուտ է այն պատմութիւնն թէ Նիկիոյ ժողովն և ի Հռովմ պատրիարք նշանակեց»:

«Այս նշանակուած չորս պատրիարքներն՝ իրենց յանձնուած տեսչութիւնն կը տնտեսէին Եկեղեցոյ միութեան ոգոյն համեմատ, առանց որեւէ ազգային խտրութեան և այս հայրապետական կամ բարձր տեսչական իրաւունքն չէր վերաբերեր որեւէ ազգի այլ հասարակաց էր քրիստոնէայ ազգաց: Դժուարին է հետեւցնել թէ յունաց ազգն իրեն համար չորս կամ հինգ պատրիարք նշանակէր, եւ կայսրութիւնն ընդունէր այնպիսի ժամանակի մը մէջ, յորում պատրիարքաց կը հպատակէին կայսերք»:

«Եւ այս պատրիարքաց հսկողութեանն յանձնուած երկիրներն եւս նշանակուած կամ գծուած են, որոց իւրաքանչիւրին մէջ կը գտնուէին զանազան ազգէ քրիստոնէայք: Պաղեստինու Պատրիարքին յանձնուած սահմաններն են, Սիդովնէն մինչեւ Գազայ, եւ Կարմիր ծովէն մինչեւ Արաբիոյ հարաւային սահմաններն: Որոց բնակիչք քրիստոնէայք են, բուն Պաղեստինու մէջ եբրայեցի հաւատացեալք, որոնք Աղրիանոսի հալածանաց ժամանակ եւս թոյլատրուեցան մնալ յԵրուսաղէմ: Նոյնպէս Երուսաղէմի մէջ կը յաճախէին հետզհետէ հեռաւոր սահմաններէ եւս ամենայն ազգի քրիստոնէից, որոց կառուցած եկեղե-

ցիներուն ատերակներն մինչեւ այսօր վկայք են: Նոյն սահմաններու բնակիչն էին դարձեալ Փինիկք, Ատրիներն, Արաբացիներն և ուրիշ հին ազգաց մնացորդներն:

Նիկիոյ ժողովին մէջ որոշուած Պաղեստինու պատրիարքութիւնն շարունակեց իր վարչութիւնն մինչեւ Եփեսոսի ժողովն, և այս ժամանակներուն Երուսաղէմի մէջ բնակող ամէն քրիստոնէայ ազգաց եպիսկոպոսներն եւս Կեսարիոյ (Պաղեստինացոց) պատրիարքէն կը ձեռնադրուէին: Եփեսոսի ժողովն Կիպրոսի եպիսկոպոսին պատրիարքական պատիւ տուաւ, որ այնուհետեւ իր տեսչութեան տակն եղող եպիսկոպոսներն ձեռնադրէ, և ինքն չձեռնադրուի Անտիոքայ պատրիարքէն (որուն համար նշանակուած սահմանքն կը վերաբերէր Կիպրոս) և այս որոշումն առաւ Եփեսոսի ժողովն հակառակ Անտիոքայ Պատրիարքին, որ Նեստորին վարդապետ եւ աղանդակից էր: Եփեսոսի ժողովոյն այս որոշումն յոյս առած, Երուսաղէմի եպիսկոպոսն եւս առաջարկեց ժողովոյն, թէ ինքն Երուսաղէմի մէջ բազմաթիւ եկեղեցիներ ունի եւ ծանրութիւն կը լինի եկեղեցեաց միշտ Կեսարիա դիմել իրենց խնդիրներու, և առաջարկեց որ Երուսաղէմն բաժնեն Կեսարիայէն: Այս եւս որոշուեցաւ, և Կեսարիոյ Պատրիարքութիւնն վերջացաւ քիչ ժամանակէն եւ Երուսաղէմի Պատրիարքութեան կը դիմէին այն ամէն երկիրներն, որոնք երկու դարու չափ ժամանակ սովորած էին պատրիարքութեան ապահովութեան տակ անդորր մնալ (վասնզի այն կողմերն խիստ յաճախ կ'երեւէին զանազան հերձուածներ: Եպիսկոպոսներն իրենք եւս չէին համարձակեր ինքնագլուխ լինել):

Երուսաղէմի Պատրիարքութիւնն, որ Պաղեստինու և Արաբիոյ սահմաններու մէջ գտնուած բոլոր քրիստոնէայ ազգաց հայրապետութիւնն էր, ուր այնպէս եկեղեցիներ ալ կային որ հասարակաց ազգաց կը վերաբերէր՝ ինչպէս մինչեւ ցայսօր, Նիկիոյ ժողովոյն սահմանացն համեմատ՝ առանց հակառակութեան շարունակեց մինչեւ Քաղկեդոնի ժողովն, (մինչեւ Ե. դարու կէսերն 452-453): Յորճաղ Երուսաղէմի Պատրիարքն Քաղկեդոնի ժողովն ընդունած վերադարձաւ յԵրուսաղէմ, եւ գտաւ բոլոր եկեղեցիներն բոբոքեալ իրեն դէմ, որք միաբերան կը նզովէին գձաղկեդոն, այս յեղափոխութեան առաջն չկրցաւ առնուլ Յորճաղ և փախաւ ի Կեսարիա: Մարկիանոս (կայսրն) բռնութիւն ի ձեռք առաւ, բայց

դարձեալ չկրցաւ հանդարտեցնել: Վերջապէս Յորճաղ իր վերջին երկու տարին եւս պատրիարքութեամբ անցուց, բայց Քաղկեդոնի ժողովն մերժել կեղծելով, որմէ ետքն յաջորդեցին պատրիարքներ միշտ Քաղկեդոնի ժողովն մերժելով: (Յաւուրս Ձեռնոն և Անաստասայ կայսերաց):»

«Վերջապէս Յուստինիանոսի կայսրութեան օրերուն հասան, յորում եկեղեցիք կը բռնադատուէին Քաղկեդոնի ժողովն ընդունիլ: Եւ վերջապէս եկեղեցոյ միութեան ոգւոյն հակառակ՝ Քաղկեդոնի ժողովոյն պատճառած երկպառակութիւնն, որ Ձեռնոնի և Անաստասայ կայսրութեան օրերն մարած էին Երուսաղէմի սահմաններուն մէջ, այլ եւս սաստկութեամբ սկսաւ բոբոքիլ, և իրարու հակառակ պատրիարքներ կը կառավարէին, բաժանեալ եկեղեցին միեւնոյն ժամանակ: Որոնք մէկզմէկ կ'անուանէին **միաբնակ** և **երկաբնակ** հերձուածի անուամբ: Այս միեւնոյն հերձուածն կը հերձոնյր Անտիոքայ պատրիարքութիւնն եւս, որոյ միաբնակներն Եդեսիոյ մէջ շարունակեցին իրենց առաջնորդութիւն, իսկ երկաբնակներն ի Դամասկոս: Նոյնպէս Աղեքսանդրիոյ պատրիարքութիւնն եւս բաժանեալ, և Աղեքսանդրիոյ մէջ իրարու հակառակ առաջնորդել ետքն, միաբնակներն փոխուեցան ի Գահիրէ: Իսկ երկաբնակներն մնացին յԱղեքսանդրիա):»

«Երուսաղէմի պատրիարքութեան այս հերձուածն (միաբնակ և երկաբնակ) միմեանց հակառակ և գայթ ի գայթ շարունակեցին մինչեւ Չաքարիա պատրիարքի գերութիւնն, այն ժամանակ կայսերաց ազդեցութիւնն Երուսաղէմն պակսած լինելով, Մոպեստոս տեղակալն համարձակ միաբնակաց կողմ յարեցաւ):»

«Չաքարիա պատրիարքն մինչդեռ Պարսկաստան կը գտնուէր, Հայոց եպիսկոպոսաց, Պարսից եպիսկոպոսաց խնդրանօքն և Խոսրով Ապրուէզ թագաւորի հրամանաւ կազմեալ ատենի մը մէջ հերքեց Քաղկեդոնի ժողովն, հաստատելով միայն նախկին Երեք Տիեզերական ժողովներն: (Տես Աստղիկ, էջ 98 տպ. ի Փարիզ (1), էջ 9, լուսանցքին վրայ ծանօթագրութեամբ): Աստղիկի մէջ բերած և Դունայ ժողովոյն առ Հերակլ գրած բողոքին, որոյ սկիզբն է «զաւ լիցի մեռանել, քան փոխանակել զվարդապետութիւն և տոմարին Լեւոնի...» գորս բարձր աղաղակաւ կանչեցին ժողովոյն մէջ գտնուողները (Աստղիկ, էջ 92) գոր

նամակին սկիզբն եւս յաւելցուցին ի վերջոյ ինչպէս կ'երեւի նաեւ Սէրբոսի մէջ բերածէն»:

«Չաքարիա պատրիարք Ներուսաղէմ սիրով ընդունուեցաւ գերութենէ վերադարձին, քիչ ժամանակէն երբ վախճանեցաւ, (Հերակլի պարսից վրայ տարած յաղթութենէն սիրտ առած) երկաբնակ եկեղեցականներն առանց հաճութեան միւս կողման՝ պատրիարք ընտրեցին Սոֆրոնիոս երկաբնակն, որուն դէմ ելան բոլոր միաբնակներն. Սոֆրոնիոսին չընդունեցին Հայրապետանոցին մէջ, որ յանձնուած էր արդէն Մոպեստոս տեղակալին: Սոֆրոնիոս երկաբնակն շարունակեց իւր պատրիարքութիւնն արտաքոյ Հայրապետանոցին, առանց բնաւ ճանչցուելու միաբնակներէն»:

«Սոֆրոնիոս տակաւին կենդանի էր, երբ միաբնակներն միացեալ, Աբրահամ Պատրիարքն ընտրեցին Մոպեստոսի մահուանէն անմիջապէս ետքն որ նստաւ Հայրապետանոցին մէջ, Սոֆրոնիոս Դամասկոսի երկիրներուն վրայ տիրապետող Սարակիճոսաց (Մահմետի փոխանորդաց) մտադրութեամբ: Աբրահամ եպիսկոպոսն և բազմութեամբ միաբնակ ժողովրդեան և Դամասկացոց՝ հասկացուց Էօմէրին երկաբնակաց հերձուածոյն խնդիրն և հրովարտակով հաստատուեցաւ Աբրահամու Պատրիարքութիւնն»:

«Ասկից վերջն երկաբնակաց բազմութիւնն եւս դիմեց Էօմէրին, միեւնոյն իրաւամբ, Էօմէր նոցա խնդրանօք Սոֆրոնիոսին եւս տուաւ հրովարտակ իբրեւ պատրիարք երկաբնակաց, առանց իրաւունք ունենալու երկաբնակաց վերայ: (Մինչդեռ Աբրահամու հրովարտակն կը հաստատէ թէ ամենայն Երուսաղէմի պատրիարք է)»:

«Անկէց մինչեւ ցայսօր կը շարունակուի այս պատրիարքաց յաջորդներն մէկ մէկու ընդդէմ, որ միջին դարու ազգայնական խտրութեանց ժամանակ միաբնակաց պատրիարքութիւնն անուանեցաւ Հայոց Պատրիարք (վասնզի Երուսաղէմ գտնուող միաբնակ ազգաց մեծագոյնն էր զօրաւոր մասն կը կազմէին Հայք), իսկ երկաբնակաց պատրիարք ասուեցաւ Յունաց պատրիարք, (վասնզի նոյն հերձուածոյն մեծագոյնն և զօրաւոր մասն կը կազմէին Յոյնք)»:

«Այս այսպէս ճշմարիտ պատմութիւնն է ըստ արեւելեան պատմչաց, բայց սուտ կարելի է դատել ըստ լատին և յոյն պատմչաց, որոնք գրեթէ ամէն ժամանակ իբրեւ հերետիկոս միաբնակներն նգովելով՝ քրիստոնեայ իսկ չեն

համարեր»:

«Նաեւ Երուսաղէմի նախկին հայրապետաց ժամանակէն Հայրապետանոցին մէջ գտնուած կենաց փայտի խաչն՝ որ քլաչափ (քիլ-բթամատի եւ ցուցամատի միջեւ եղած բացուածքի չափ) ունեցող երկու մասերէն կը բաղկանայ, մինչեւ ցայսօր Հայոց Պատրիարքարանի եկեղեցին կը գտնուի»:

«Դարձեալ Հայոց Պատրիարքն իբրեւ իրենց Հայոց Հայրապետն կ'ընդունին Երուսաղէմի սահմաններուն մէջ գտնուող բոլոր արեւելեան ազգերն՝ որոնք Քաղկեդոնի ժողովն չեն ընդունած, և նոցա վանականներն թէպէտ ինքնին կ'ընտրեն իրենց վանահայրերն, բայց Հայոց Պատրիարքն է հաստատողն: Նոյնպէս, թէ՛ ասորոց և թէ՛ եգիպտացոց կաթողիկոսի ընտրութեան և ձեռնադրութեան ժողովին նախագահ է մինչեւ ցայսօր Հայոց Երուսաղէմի Պատրիարքն, և նա իւր կողմէն եպիսկոպոս մի կ'ուղարկէ նոյն ժողովին անդամակցելու: Ասորեստան դրկուած է միշտ Երուսաղէմի Ասորոց եպիսկոպոսն, իսկ Եգիպտոս դրկուած է Հայ եպիսկոպոս՝ վասնզի ասորոց ձեռնադրութիւն արարողութիւն քաղղէացոց լեզուաւ կը կատարուի, եւ վերջին ժամանակներս այդ լեզուն գիտցող եպիսկոպոսներն ու վարդապետներն իսկ պակասած են Երուսաղէմի մէջ, բայց Ղպտաց ձեռնադրութիւն արարողութիւն կը կատարուի արաբերէն լեզուաւ, և արաբերէն գիտցողներ կը գտնուին տակաւին Երուսաղէմի միաբանաց մէջ»:

Դժբախտաբար սոյն գրութեան հեղինակը կը մնայ անձանօք: Յետոյ, ուրիշ աւելի վարժ գրիչ մը առաջին էջին ներքին լուսանցքին վրայ գրած է «յանձնապատասխան գրութիւն և տեսութիւն»: Թէ՛ բուն գրչութիւնը և թէ՛ այս վերջին գրութիւնը ծանօթ կ'երեւան, սակայն նոյնացում ընելու վիճակի մէջ չեն: Ամէն պարագայի տակ գրողը եկեղեցական պատմութեան ծանօթ և խմբագրելու կարողութիւն ունեցող մէկն է: Իւրաքանչիւր թողթի վերի աջ անկեան անմեղան դրոշմուած է Ռուսերէն *Ֆապրիք Սերկիէվա*, որ անշուշտ թղթաշինութեան կը վերաբերի:

Սեր նախնեաց կորստեան մատնուելիք պատառիկ մը հրատարակած ըլլալու գոհունակութեամբ կը վերջացնեն:

Հրատարակիչ՝
Յարութիւն Քիրտեան

«Սոյն հետաքրքրական գրութեան հե-

ղինակը երուսաղէմացի կը բուի ըլլալ. թեկնածունքէն ամենահաւանականը Սկրտիչ Վրդ. Արծրունին է, որ Երուսաղէմի մասին տեղագրական գրքոյկ մը հրատարակած է Ս. Աբողի տպարանէն: Անոր կենսագրութիւնը տրուած է Աղաւնունի Սրբազանի «Միաբանք և այցելութք» գործին մէջ:

Գրութեան մէջ պարզուած տեսակետը, ինչպէս որ նշուած է գործին մէջ, արեւելեան պատմիչներու աւանդածն է: Սկրտիչ Վրդ.ի պէս մէկը այդ տեսակետին կրնար ծանօթանալ մեր մատենագրութենէն, թէ՛ ինքնագիր եւ թէ՛ քարգմանածոյ: Սկրտիչ վրդ. եղած է Ս. Աբողի միաբան եւ Ս. Յակոբեանց տպարանի տեսուչ: Ատեն մը դաւանափոխ ըլլալով միացած է Չմմառի հայ կաթողիկ միաբանութեան, բայց մի քանի տարի ետք վերադարձած է Ս. Յակոբեանց վանք: Ան քաջածանօթ եղած է Յովհաննէս Կաթողիկոս Դրասխանակերտացոյ «Պատմութեան», որ տպարանի տեսչութեան իր օրերուն լոյս տեսաւ: Ըստ Նորայր Սրբազանին՝ Սկրտիչ վարդապետն է հրատարակիչը այդ կարեւոր գործին:

Խուսափած եմ քառացի քարգմանութենէ. տեղ-տեղ ալ ստիպուեցայ քառեր աւելցնելու, որպէս զի աւելի հասկնալի դառնայ բնագիրը: Հարկ եղած պարագաներուն ընդմիջարկեցի թուականներ՝ տրուած տեղեկութեան ժամանակը ցոյց տալու համար: Նման յաւելումներ սրածայր փակագծերու մէջ, <...>, ներկայացուած են: Երուսաղէմի ոչ հայ եպիսկոպոսներու, օտար գահակալներու եւ քաղաքներու անուանց ուղղագրութիւնը ստուգուած է ըստ արդի պատմական աշխատասիրութեանց մէջ ընդունուածին»:

Հ. Գրիգոր Վրդ. Մագսուտեան



THE ORIGIN OF THE JERUSALEM PATRIARCHATE AND ITS CONTINUITY

Published by H. Kurdian

Իր շահեկանութեան համար նախորդ տետրակին անգլիերէն տարբերակը կը նրատարակենք ի պէտս անգլիախօս բանասէրներուն: Քարգմանութեան հեղինակն է Հ. Գրիգոր Վրդ. Մագսուտեան: (Խմբ.)

In a large pile of old papers I found a folded folio making eight leaves and consisting of 28 pages; it is partially damaged by water and the writing is in sheghagir ["slanted script"], bearing the above headline. The text, with seventeen lines on each page, goes as far as page eleven; the remaining pages in the pamphlet are empty.

Below I shall publish the contents of the pamphlet as is.

The Christian Church maintained the same administrative structure that it had inherited from the Apostles until the Council of Nicea, <AD 325>. Just as the Apostles ordained overseers over the churches that they had established within <specific> geographical limits and these overseers turned directly to the Apostles in matters beyond their competence, so also those who came after the Apostles did the same, with the head of each church turning to the overseer who was in communion with all the churches in his jurisdiction. This took place for the most part on occasions when issues came up as a result of persecutions perpetrated by political authorities or other reasons.

Therefore, just as each Apostle tended to the needs of the churches <in the area> where he was preaching, so also each overseer governed his church independently from the others until the Council of Nicea.

In the Council of Nicea the issue was raised as to how to take guard so that no Arian heretic would thereafter be ordained as priest, bishop or preacher and that those misguided by that heresy would become entirely extinct. It was resolved that those about to be ordained bishop be investigated and that each bishop would investigate those about to be ordained priest. In order to conduct these inquiries with greater care, special sites were designated within the borders of lands where Christianity was well established and especially where there were greater concentrations of Christian heretics. The designated sites were: Alexandria, Egypt; Caesarea, Palestine; Antioch, Syria; and Ephesus in Asiatic

Greece. Thereafter the bishops of these places were recognized as patriarchs. (It is interesting to note that this method or *canon* of electing and ordaining bishops was created only for the above lands because heretics resided within their borders. But other countries such as Armenia, Assyria [Adiabene], Babylon, Persia, Caucasian Albania, Georgia and all of Europe were not subject to this *canon*, since the above heretics did not operate in these regions. (The opinion that the Council of Nicea also established a patriarch in Rome is false.)

These four designated patriarchs governed the jurisdictions entrusted to them with a spirit of unity in a church where there was no national discrimination, as the patriarchal or sublime episcopal authority was not the prerogative of one nation but was commonly held by <all> the Christian nations. It is difficult to imagine that the Greek nation would appoint four or five patriarchs over itself and that <Roman> imperial authority would accept it at a time when the emperors acquiesced to the patriarchs.

Furthermore, the regions entrusted to the care of these patriarchs were designated or demarcated. In each one of these there were Christians of various ethnic origin. The boundaries <of the lands> entrusted to the patriarch of Palestine extended: from Sidon to Gaza, and from the Red Sea to the southern borders of Arabia. The Christian inhabitants within these <limits> included the Jewish Christians <living> in Palestine proper, who had been allowed to remain in Jerusalem even at the time of <Emperor> Hadrian's persecutions, <c. AD 132-135>. Likewise, Christians of all kinds from distant lands gradually frequented Jerusalem; ruins of buildings built by them bear testimony to this. These same lands were also inhabited by Phoenicians, Syrians, Arabs and the remnants of other ancient nations.

The patriarchate of Palestine designated by the Council of Nicea continued its administrative authority until the Council of Ephesus, <AD 431>. During that time the bishops of all Christian ethnic groups living in Jerusalem were ordained by the patriarch of Caesarea (Palestine). The Council of Ephesus bestowed on the bishop of Cyprus the honorific <title> of patriarch, so that thereafter he would be the one ordaining bishops in his jurisdiction, and <ruled that> he himself not be ordained by the patriarch of Antioch (in whose designated boundaries was Cyprus). The Council of Ephesus resolved to make this change in order to oppose the <incumbent> Patriarch of Antioch whose teacher and fellow heretic was Nestorius. Encouraged by the resolution of the Council of Ephesus, the bishop of Jerusalem as well -- arguing that he had numerous

churches in Jerusalem and that it would be difficult for these churches to turn to Caesarea at all times for local issues, proposed to the Council <of Ephesus> to separate Jerusalem from Caesarea. A resolution was also made in this regard and soon thereafter the patriarchate of Caesarea <*Palaestinae*> ceased to exist. All those lands that had been for almost two centuries accustomed to abide quietly under the authority of a patriarchate, <now> turned to the patriarchate of Jerusalem. (The reason for this was because different heresies frequently emerged in these regions and the bishops themselves did not venture to take action on their own.)

The patriarchate of Jerusalem--which was a patriarchal jurisdiction overseeing all the Christian peoples within the borders of Palestine and Arabia-- where there were <certain> sanctuaries that all the <Christians> held in common, as they still do--continued <to function> according to the canons of the Council of Nicaea until the Council of Chalcedon (that is, until the middle of the fifth century, 452-453). Juvenal, the patriarch of Jerusalem, returned to his see after <agreeing to> accept the <teachings of the> Council of Chalcedon but confronted the unanimous opposition of the churches <in Jerusalem> anathematizing <the Council of> Chalcedon. Unable to control the situation, Juvenal fled to Caesarea. The Emperor Marcian employed oppressive means to establish tranquility but was unable to do anything. Finally Juvenal pretended to reject the Council of Chalcedon and spent his final two years, <456-458> in office. The patriarchs who succeeded him always rejected the Council of Chalcedon. (This was during the reigns of the emperors Zeno and Anastasius, <474-518>.)

At last, early in the reign of Emperor Justin, <c. 518 and thereafter> the churches <in the Eastern Roman Empire> were pressured to accept the <teachings of the> Council of Chalcedon. And finally much against the spirit of unity in the Church, the schism within the borders of Jerusalem, which had been initiated by the Council of Chalcedon and had waned during the time of the emperors Zeno and Anastasius, began to rage more fiercely than ever before and patriarchs opposed to each other governed a divided church simultaneously. They referred to each other as <followers> of Monophysite or Dyophysite heresy. This same schism also overwhelmed the patriarchate of Antioch, whose Monophysite <party> continued <its activities> in Edessa, whereas the Dyophysites went to Damascus. In like manner, the patriarchate of Alexandria was also divided with opposing prelates <presiding>; <finally> the Monophysites fled to Cairo and the Dyophysites remained in Alexandria.

The schism in the Jerusalem patriarchate—that is, (the Monophysite and Dyophysite <parties>) faltering in their conflict with each other—continued to prevail until Patriarch Zachariah was taken captive <by the Persians in 614>. At that time Modestus, locum tenens <of the patriarchate>, openly leaned towards the Monophysite side.

During Patriarch Zachariah's exile in Persia, two Armenian bishops and the bishops of Persia put in a request and the King of kings Khusro (Aparvez) ordered a church council be held. The council convened and refuted the Council of Chalcedon, while accepting only the first three ecumenical councils. (See <Stepanos Asoghik, Paris, <1859>, p. 98)1 On his return from captivity, Patriarch Zachariah was greeted with affection in Jerusalem but soon thereafter he passed away, <632>. (Encouraged by <Emperor> Heraclius' victory over the Persians) the Dyophysite clergy, not seeking the consent of the other side, elected the Dyophysite clergyman Sophronius patriarch, against whom all the Monophysites rebelled. Sophronius was not welcome in the patriarchal headquarters, which had already been handed over to the locum tenens Modestus.

The Dyophysite Sophronius continued to preside as patriarch outside the premises of the patriarchate, without ever receiving recognition from the Monophysites.

Sophronius was still alive when the Monophysites united right after the demise of Modestus (<634>) and elected Abraham as patriarch. The latter resided in the patriarchate. Having the intention of taking over the patriarchate, Sophronius appealed to the Saracen [sic] authorities (Muhammad's successors) ruling over the lands around Damascus. Bishop Abraham and a large number of Monophysites as well as <the Monophysite residents> of Damascus explained to <Caliph> Umar, <634-644>, the issue concerning the Dyophysite schism. <Thereupon> Abraham's patriarchate was established by <the caliph's> edict.

Subsequently a large number of Dyophysites also appealed to Umar, presenting a similar request. Complying with their wishes, Umar also gave an edict to Sophronius, <recognizing him> as patriarch of the Dyophysites but with no jurisdiction over the Monophysites. (Patriarch Abraham's edict, however, confirms that he was patriarch over all of Jerusalem.)

From that time until this day, the successors of the above patriarchs continue to compete against each other. At the time of the segregation among national groups in the Middle Ages, the designation of the Monophysite patriarch was changed to "Armenian patriarch." (This was because the Armenians were the

larger and powerful element among the Monophysites of Jerusalem.) The patriarch of the Dyophysites was renamed "Greek patriarch" (because the Greeks were the majority among the adherents of the above schism.)

This is the historical truth according to eastern historians, but Latin and Greek historians -- who almost always curse the Monophysites by calling them heretics and by not even considering them Christians -- may insist that it is false.

Furthermore, the Relic of the Holy Cross that was in the patriarchate <of Jerusalem> since the time of the ancient patriarchs -- which consists of two parts that are about six inches long -- is until this day in the cathedral of the Armenian patriarchate <of Jerusalem>.

Also, all the eastern nations that do not accept the <the teachings of the> Council of Chalcedon and live within the boundaries of Jerusalem consider the Armenian patriarch as their head, and though their monks elect their respective priors, the Armenian patriarch is the one who confirms them. To this day the Armenian patriarch of Jerusalem is the one presiding at the election and ordination of the Syriac and Egyptian [Coptic] catholicoi. On his part <the Armenian patriarch> sends a bishop to participate in their election. The Syriac bishop <in Jerusalem> is the one who is always dispatched to Assyria and an Armenian bishop <is sent> to Egypt. This is so because ordinations in the Syriac church are in Chaldaean [=Syriac], and in recent times bishops and archimendrites knowing that language are scarce in Jerusalem, but ordinations in the Coptic church are done in Arabic and there are still monks who know Arabic among the members of the <Armenian> Brotherhood of Jerusalem.

Unfortunately the author of this write-up is unknown. At a later time, a more skilled hand has written on the inner margin of the first page: "A presumptuous writing and view." Both the original handwriting as well as the subsequent one cited above look familiar but I am in no position to make an identification. Be it as it may, the writer is acquainted with church history and has writing-editing skills. Pressed at the top of the right corner of each page, with no trace of ink, is: Fabrik Sergieva, which obviously has to do with the manufacturing of the paper.

I conclude expressing my gratification for publishing a fragment of our forefathers that was destined to perish.

Publisher H. Kurdian

The Armenian original of this article was published in Hask, 1958, pp. 207-210.

1) A note on the margin of p. 9.

The following is the beginning of a letter sent by <the <fathers of the> Council of Dvin to <the Emperor> Heraclius that <the 10th-11th century Armenian historian> Asoghik has cited: **"It shall be better for us to die than exchange the teaching of St. Gregory <the Illuminator> with that of the Council of Chalcedon and the Tome of Leo."** Those who were present at that council professed this in a loud voice and finally added it to the beginning of the letter as is apparent from the citation made by <the 7th century Armenian historian> Sebeos.



Հայոց Պատրիարքարանի փողոցը եւ Հայոց Վանքի գլխաւոր մուտքը



Ք Ա Ր Ո Ջ ԱՆԻՐԱՒ ՏՆՏԵՍԻՆ ԱՌԱԿԸ



S. Բագրատ Վրդ. Պարծեբան

«Եւ թող մեզ գպարտիս մեր, որպէս և մեր թողումք մերոց պարտապանաց...» Մատթ. 6:9

«Եւ ներք մեզի մեր պարտքերը, ինչպէս մենք ալ կը ներենք մեր պարտապաններուն...»:

Ք առասնօրեայ պահեցողութեան շրջանին, քրիստոնեայ հաւատացեալը լաւագոյն առիթը ունի հոգեւոր դաստիարակութիւն ստանալու և մնալու հոգեւոր արթնութեան մէջ, որպէսզի խոնարհ, արթուն ու գիտակից հոգիով ապրի մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի կեանքին վերջին շաբաթը, չարչարանաց շաբաթը, խաչելութիւնը, մահը ... ու կարճ տխրութենէ ու սուգ վերջ՝ անոր հրաշափառ ու փառաւորեալ Յարութիւնը:

Մեր քարոզի բնաբանը առնուած է Տէրունական աղօթքէն, գոր մեր Տէրը սորվեցուց մեզի: Տէրունական աղօթքը կ'ընդգրկէ գրեթէ մեր բոլոր խնդրանքները առ Աստուած՝ խտացուած կերպով: Այդ խնդրանքներէն մին է. «Եւ ներք մեզի մեր պարտքերը, ինչպէս մենք ալ կը ներենք մեր պարտապաններուն»: Տէրունական աղօթքին մէջ այս հատուածը անմիջապէս մեր միտքը կը բերէ մեր Տիրոջ առակներէն մի քանին, որոնց օրինակով մեր Տէրը ցոյց կ'ուզէ տալ Հայր Աստուծոյ անսահման սէրն ու գթառատ հոգին հանդէպ մեղաւոր մարդուն, եւ թէ մեր Երկնաւոր Հայրը ներող է եւ ողորմած: Այդ առակներէն կը վերցնեն «Անիրաւ Տնտեսի Առակը», խորհրդածելու՝ Հայր Աստուծոյ ներողամտութեան ոգիին, անսահման սիրոյն և բարեխղճութեանը վրայ:

«Եւ Յիսուս ըսաւ իր աշակերտներուն. «Հարուստ մարդ մը կար, որ տնտես մը ունէր. անոր վրայ ամբաստանութիւն եղաւ, իբր թէ կը վատնէր իր տիրոջ ինչքերը: Տէրը կանչեց զինք եւ ըսաւ անոր, այս ի՞նչ բան կը լսես քու մասիդ, տո՛ւր քու տնտեսութեանդ հաշիւը, որովհետեւ չես կրնար այլեւս տնտես ըլլալ: Տնտեսը իր մտքէն ըսաւ. ի՞նչ պէտք է ընեն, քանի որ տէրս ինձմէ կ'առնէ տնտեսութիւնս. աշխատիլ չեն

կրնար, մտրալ կ'ամչնամ: Գիտենք թէ ինչ պէտք է ընեն, որպէսզի երբ տնտեսութենէս հեռացուիմ՝ զիս ընդունին իրենց տուները: Եւ իր տիրոջ պարտապաններէն իրաքանչիւրը մէկ առ մէկ բովը կանչելով՝ առաջինին ըսաւ. դուն իմ տիրոջս որքա՞ն պարտք ունիս: Եւ ան ըսաւ. հարիւր մար ձէք. եւ տնտեսը ըսաւ անոր. ա՛ն քու պարտագիրդ եւ նստէ ու անմիջապէս գրէ «յիսուն»: Ապա ըսաւ միսին. դուն որքան պարտք ունիս: Եւ ան ըսաւ. հարիւր թող ցորեն: Տնտեսը ըսաւ անոր. ա՛ն քու պարտագիրդ եւ նստէ՛ ու գրէ «ուրսուն»: Եւ տէրը գովեց անիրաւ տնտեսը, որովհետեւ իմաստութեամբ գործեց, քանի որ այս աշխարհի որդիները իրենց սերունդին մէջ աւելի իմաստուն են, քան լոյսի որդիները»:

«Եւ ես կ'ընենք ձեզի՝ անիրաւ մամոնայէն ձեզի բարեկամներ շինեցէք, որպէսզի երբ այդ պակսի՝ յափտենական յարկերուն մէջ ընդունին ձեզ: Քիչ քանի մէջ հաւատարիմ եղողը շատի մէջ ալ հաւատարիմ է, իսկ քիչի մէջ անիրաւը, շատի մէջ ալ անիրաւ է»: Գուկաս 16:1-10:

«Անիրաւ Տնտեսի Առակ»ը դարերէ ի վեր ծայր տուած է տարբեր, այլազան մեկնաբանութիւններու ու շփոթ վիճակի մէջ դրած է քրիստոնեայ հաւատացեալը այս առակին ներշնչած իմաստին ու բովանդակութեան վրայ: Իսկապէս, դիւրին չէ մեկնաբանել անմիջապէս: Առաջին հայեացքէն, քրիստոնեայ անհատը անմիջապէս կը յանգի տարօրինակ եզրակացութեան մը, որու համաձայն՝ մեր Տէրը Քրիստոս քաջալերողը կը հանդիսանայ գողութեան եւ կամ անիրաւ գործողութեանը ի տես: Սակայն սիրելիներ, այդպէս չէ՛: Մեր Տէրը միշտ առակներով խօսած է զինքը լսողներուն, որպէսզի կեանքէ և բնութենէ առնուած պատկերաւոր ու պարզ պատմութիւններով հասկցնել տայ Աստուծոյ միտքն ու մտածողութիւնը հանդէպ իր ստեղծուածներուն՝ մարդկութեանը, հասարակութեանը և անհատին, ուսեալին և անուսին, հարուստին ու աղքատին, հասկցողին ու չհասկցողին, անխտիր: Մեր տիրոջ պատմած առակներէն մի քանին թէեւ ունին ժխտական մօտեցումներ և կամ կոշումներ, ինչպէս մեր այսօրուան մէջ բերուած առակը, սակայն անոնց եզրակացութիւնը միշտ ու միշտ կը յանգի դրական եզրակացութեան: Ու պիտի տեսնենք այդ, երբ մէկ առ մէկ մեկնաբանելու ըլլանք առակին մութ ու խրթին կողմերը եւ

ասոնց պատկերաւոր իմաստը փնտռելով նոյնինքն մեր Տիրոջ այլոր խօսած առակներու եւ խօսքերուն մէջ:

Հարուստ մարդը նոյնինքն մեր Երկնաւոր Հայրն է: Հայր Աստուած ստեղծեց՝ մեզի տեսանելի տիեզերքն ու անով մէջտեղ եկած բոլոր հրաշալիքները, մեր այս աշխարհը ու ստեղծագործութեան պսակը հանդիսացող՝ մարդը: Ուրեմն պարտինք մաւել ընդունիլ, թէ ինչ որ ստեղծուեցաւ Հայր Աստուծոյ կողմէ, կը պատկանի Իրեն: Տէր Աստուած, երբ ստեղծեց մարդ արարածը, իշխան ու տնտես նշանակեց զայն իր բոլոր ստեղծագործութեանը վրայ: Մարդուն տրուեցաւ ինքնիշխան կերպով բոլոր բարիքներն ու հասոյթը տնտեսելու իրաւունք: Տնտեսել՝ այս աշխարհի բոլոր բարիքները ի պէտս Արարչին՝ Հայր Աստուծոյ: Առհասարակ, տնտեսը պաշտօնեայ մըն է, վարձուած՝ տնտեսելու տանտիրոջ տունն ու ունեցումը, կալուածներն ու ինչքերը՝ հսկելու այդ տան բոլոր ծառաներուն վրայ և ընել լաւագոյնը ի շահ տանտիրոջ: Պատմուած առակէն կարելի է հասկնալ, որ տնտեսին մասին չարախօսութիւններ եղած են իբր թէ վատնած է անոր ինչքերը ու մսխած առանց հաշիւի, ու տանտէրը կ'որոշէ արձակել զայն, անշուշտ իր հաշիւները փակելէ յետոյ: Տնտեսը զարմանքի եկած եւ ուշացածի պէս աշխատանքի կը լծուի անմիջական ծրագիր մը կազմելու, փրկելու իր պատիւը, ապահովելու իր վաղուան կենցաղը եւ հարթելու իր հաշիւը հանդէպ տանտիրոջ: Հետաքրքրականն այն է, որ տնտեսը՝ իբրեւ սոսկ մահկանացու, կը մտածէ իբրեւ մարդ՝ գտնելու ելք մը իր այս անել կացութենէն, ու կը գործէ այնպէս ինչպէս մեր Երկնաւոր Հայրը պիտի գործէր: Երբեմն մեր մտածումն ու գործը կը համագործակցին, սակայն արդիւնքը միշտ նոյնութեամբ դուրս չի գար: Տնտեսը մօտեցաւ պարզ մարդու մտահոգութեամբ, երբ կ'ըսէր. «Աշխատիլ չեմ կրնար, մուրալ կ'ամչնամ: Գիտեմ թէ ինչ պիտի ընեմ, որպէսզի երբ տնտեսութենէս հեռացուիմ՝ զիս ընդունին իրենց տուները», ու գործեց աստուածայինը այնպէս ինչպէս Հայր Աստուած պիտի կամենար: Տնտեսը կը յաջողի ընել այդ, կանչելով մէկ առ մէկ տանտիրոջ պարտականները:

Պարտականներէն մէկը, որ պարտ էր հարիւր մար ձէթ, անոր կը ներէ յիսուն տոկոսը, միւսն ալ որ պարտք ունէր հարիւր բոռ ցորեն՝ կը ներէ անոր քսան տոկոսը: Եւ մեր Տէրը գովեց անհրաւ տնտեսը, որովհետեւ իմաս-

տութեամբ գործեց: Մարդկային տրամաբանութեամբ՝ կատարուածը անհրաւ արարք մըն էր և առանց տանտիրոջ Աստուծոյ աչքով դիտուած՝ Աստուածահաճոյ արարք ըլլալը պիտի դատենք ուրիշ առակի մը մէջբերումով, որովհետեւ «Անհրաւ Տնտեսի Առակ»ին մէջի «Հարուստ Մարդը» և «Անխիղճ Պարտատէր Ծառայ»ի առակին մէջի «Քազաւորը» նոյնինքն Աստուած է, մեր Երկնաւոր Հայրը: Համաձայն «Անխիղճ Պարտատէր Ծառայ»ի առակին, թազաւորը կը ձեռնարկէ կարգադրել իր ծառաներուն միջեւ եղած հաշիւը: Ծառաներէն մին պարտական էր իրեն տասը հազար քանքար: Եւ թազաւորը հրամայեց, որ վաճառեն զայն, անոր կինն ու որդիները և ամէն ինչ որ ան ունէր, որպէսզի պարտքը հատուցուի: Եւ ծառան գետին իյնալով՝ աղաչեց տիրոջ ըսելով. «Համբերող եղիւ ինձի հանդէպ, և ամբողջը կը վճարեմ քեզի»: Տէրը գթաց ծառային և ներեց անոր ամբողջ պարտքը: Ծառան դուրս ելլելով, տեսաւ մին իր ծառայակիցներէն, որ հարիւր դահեկան պարտք ունէր իրեն: Իր ծառայակցին կոկորդէն բռնելով՝ սպառնաց ըսելով. «Վճարէ՛ ինձի, ինչ որ պարտք ես: Իսկ ծառայակիցը անոր ոտքը իյնալով աղաչեց անոր ու ըսաւ. «Համբերող եղիւ ինձի հանդէպ, կը վճարեմ քեզի»: Բայց առանց լսելու անոր, տարաւ բանտ նետել տուաւ զայն, մինչեւ որ պարտքը վճարէր: Ծառային տէրը՝ լսելով պատահածին մասին, կանչել տուաւ այդ անխիղճ ծառան ու հարցուց. «Չար ծառայ, քու ամբողջ պարտքդ շնորհեցի քեզի, որովհետեւ աղաչեցի ինձի, իսկ պէտք չէ՞ր որ դուն ալ գթայիր քու ընկերոջդ, ինչպէս որ ես գթացի»: Տէրը բարկանալով դահիճներուն յանձնեց զայն, մինչեւ որ վճարէր ամբողջ պարտքը: Մեր Տէրը Քրիստոս, առակի վերջին, կ'աւելցնէ ըսելով. «Նոյնը պիտի ընէ ձեզի իմ Հայրս, որ երկինքն է, եթէ ձեզմէ իւրաքանչիւրը սրտանց չներէ իր եղբօր յանցանքները»:

Անհրաւ տնտեսին ըրածը, այսինքն այդ երկու պարտապաններուն պարտքերը տոկոսաւոր ձեւով ներելը, աստուածային արարք մըն էր, և տնտեսը գործեց մարդկօրէն՝ մտահոգուելով իր վաղուան կենցաղին մասին, սակայն արդիւնքը արտացոլացումն էր սիրող ու գթառատ ու ողորմած Աստուծոյ հոգիին: Դիշոյ ատոր համար էր, որ մեր Տէրը գովեց անհրաւ տնտեսի իմաստուն արարքը, որովհետեւ ան կատարեց ճիշդ այն, ինչ որ մեր Երկնաւոր Հայրը կը կամենար, ինչ որ մեր

Երկնատր Հայրը պիտի ընէր, ներող ոգի ցուցաբերելով՝ ներել մեր եղբայրներուն ու քոյրերուն յանցանքները եւ կամ պարտքերը, ինչպէս որ ինք կը ներէ մեր յանցանքները: Մեր Տէրը այլուր ըսած է. «Եթէ սեղանի վրայ քու ընծադ մատուցանես եւ այնտեղ յիշես, թէ քու եղբայրդ քեզի դէմ ոխ ունի, թող ընծադ սեղանին առջեւ եւ գնա՛ նախ հաշտու՛՛ եղբորդ հետ եւ ապա եկուր ընծադ նուիրէ»: Մտք. 5:23-24:

Օր մը Պետրոս առաքեալ մօտեցաւ մեր Տիրոջ եւ հարցուց. «Տէր, եթէ եղբայրս մեղանչէ ինծի դէմ՝ քանի՞ անգամ պէտք է որ ներեմ անոր. մինչեւ եօթն անգամ»: Յիսուս ըսաւ անոր. «Չեմ ըսեր քեզի թէ՛ մինչեւ եօթն անգամ, այլ՝ մինչեւ եօթանասուն անգամ եօթը»: Մտք. 18:21-22:

«Գթած եղէք» կ'ըսէ մեր Տէրը, ինչպէս որ ձեր Հայրը գթած է»: Ղուկ. 6:36: Մի՛ դատէք, եւ պիտի չդատուիք, մի՛ պատժէք եւ պիտի չպատժուիք, ներեցէ՛ք, և ներում պիտի գտնէք»: Ղուկ. 6:37:

Եթէ քրիստոնեայ հաւատացեալի սրտանց գղջումը լայնօրէն կը բանայ արքայութեան դռները անոր առջեւ, ապա վստահ եղէ՛ք, որ ներողամտութիւն ցուցաբերելը հանդէպ մեր եղբայրներուն և քոյրերուն կ'ապահովէ մեր տեղը՝ արքայութեան յախտենական կայքերուն մէջ:

Դրամը եթէ ճիշդ նպատակներու չօգտագործուի, կը դադրի միջոց ըլլալէ եւ կը վերածուի մեղսագործութեան խթանի ու գործիքի: Ատոր համար է որ մեր Տէրը առակի վերջին կ'աւելցնէ ըսելով. «Եւ ես կ'ըսեմ ձեզի՝ անիրաւ մասնաւոր ձեզի բարեկամներ շինեցէք, որպէսզի երբ այդ պակսի՝ յախտենական յարկերուն մէջ ընդունին ձեզ: Քիչ քանի մէջ հաւատարիմ եղողը շատի մէջ ալ հաւատարիմ է, իսկ քիչի մէջ անիրաւը, շատի մէջ ալ անիրաւ է»:

Այս աշխարհը եւ աշխարհի բոլոր բարիքները մեզի տրուած են, շնորհուած են, որպէսզի մենք տնտեսենք ի շահ մեր ստեղծողին: Անոնք մեզի չեն պատկանիր, այլ անոր որ մեզ ստեղծեց և կեանք տուաւ: Ինչ որ կը ցանենք ու կը հնձենք, ինչ որ կ'ամբարենք, ի վերջոյ դառնալու է անոր՝ որ մեզի կեանք տուաւ ու տնտես նշանակեց մեզի այս աշխարհի վրայ: Այս աշխարհը տուն է, երկինքն ալ Անոր առաստաղը: Տանտէրը նոյնինքն Աստուած է ու մենք՝ այդ տան տնտեսը: Աշխարհը բաց

ճաշասեղան մըն է, որ ձրիօրէն կը բաշխուի բոլորիս համար անխտիր: Պարտապան ծառաներուն ու աղքատ Ղազարոսի նման եղբայրներուն պարտինք պարտքերը ներել և կամ ներողամտութեան ոգի ցուցաբերել, օգտակար ըլլալ, սրտանց ներող ըլլալ: Բոլորս ալ մահկանացու ենք, գնալուն ենք եւ ոչ մնալուն: Կու գանք այս աշխարհ ժամանակի մը համար, եւ երբ ժամանակը գայ մեկնումի, պարտինք մեր տեղը տալ նորին: Հետեւաբար, անիրաւ տնտեսին արարքը ներողամտութեան ոգիի ցուցաբերութիւն մըն էր. աւելի ճիշդ իր տիրոջ ակնկալած արարքը ըրաւ առանց իր տիրոջ ըսելուն: Ու երբ գայ ժամանակը, ուր մենք դէմ յանդիման պիտի կենանք մեր Արարչին՝ վստահ եղէք, որ այդ պարտապան ծառաներուն նման մարդիկ պիտի վկայեն ու բարեխօսեն ձեր ներողամտութեան ոգիին մասին, գոր դուք ցուցաբերեցիք ձեր կեանքի ընթացքին, ու այս ձեռով պիտի կարողանաք տեղ ապահովել ձեզի համար մեր Տիրոջ յախտենական յարկերուն մէջ: Անիրաւ տնտեսին մտահոգութիւնը վաղուան մասին, անգիտակցաբար թէ գիտակցաբար մտահոգութիւն մըն էր, գոր իւրաքանչիւրս պարտի մտահոգուիլ, որպէսզի մեզի համար տեղ ապահովենք՝ յախտենական յարկերուն մէջ, այնպէս ինչպէս անիրաւ տնտեսը մտահոգուեցաւ եւ գործեց այնպէս ինչպէս պէտք էր: Ներողամտութեամբ ու բարեգործութեամբ դուք քիչին ու շատին մէջ հաւատարիմ պիտի նկատուիք ու Վերջին Դատաստանի Օրը, մեր Տէրը պիտի կանչէ ձեզ ըսելով. «Եկէ՛ք, իմ Հօրս օրհնեալները, ժառանգեցէ՛ք աշխարհի սկիզբէն ձեզի համար պատրաստուած արքայութիւնը»:

**Դրամը եթէ ճիշդ
նպատակներու ուղղութեամբ
չօգտագործուի, կը դադրի
միջոց ըլլալէ և կը վերածուի
մեղսագործութեան խթանի ու
գործիքի:**



Ա Յ Ժ Մ Է Ա Կ Ա Ն

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆԸ 21-ՐԴ ԴԱՐՈՒ ՍԵՄԻՆ

Չենոբ Քինյ. Նալպանտեան

*«Երբ կը կատարէ՞ ինչ որ ձեզի
հրամայուած է, ըսէ՞ք թէ՛ անպիտան
ծառաներ ենք. ինչ որ
պարտաւոր է ինք ընել՝ ըրի՞նք»:
(Ղուկ. ԺԷ. 10)*



Հայ Եկեղեցին եւ Հայ Եկեղեցականը կանգնած են մեծ մարտահրաւերի մը առջեւ՝ ապրելու եւ գործելու, ծառայելու եւ ծաղկելու՝ ուժականութեամբ (dynamism) լի դարի մը մէջ, որ մեզմէ կը պահանջէ իմացական հզօր պատրաստութիւն, հոգեկան նուիրում, մշտատես զգաստութիւն եւ հոգեւոր արթնութիւն:

Եկեղեցւոյ գոյութիւնը պայմանաւորուած է աշխարհի վրայ արագօրէն փոփոխութիւն կրող ու զարգացող հասարակական, քաղաքական, ընկերային ու մշակութային փոփոխում ու երեւոյթներով: Ժամանակի պայմաններուն համապատշաճելու, պահանջներուն լիակատար գոհացում տալու, ինչպէս նաեւ ժողովուրդի նուիրական զգացմունքներուն դրականապէս արձագանգելու համար, անհրաժեշտ է որ Եկեղեցին արթուն ու պատրաստ ըլլայ եւ միշտ բաց պահէ իր մտքի լուսարձակը:

Արդարեւ, դարս յառաջացած է գիտութեան, ճարտարարուեստի ու արուեստի բոլոր բնագաւառներուն մէջ հաւասարապէս: Ներկայի պահանջները, մանաւանդ՝ հոգեւոր, հասարակական եւ հոգեբանական, աւելցած են ու բարդացած: Այժմ, բազմապիսի նոր ու անլոյծ հարցեր կու գան բարդուելու հիներուն վրայ: Աւետարանի շունչով մշտանորոգ ու աստուածային յանրաժան լոյսով ողորուն Եկեղեցին Հայոց ձեռնածալ ու անտարբեր չէ մնացած երբեք, այլ իրովսանն աջակցած ու շինիչ գործունէութիւն ցուցաբերած է ծովածաւալ կարիքներուն հանդէպ՝ պարզելով հայուն հոգեւոր մխիթարանք եւ սփոփանք,

աւետարանական կրթութիւն եւ հայեցի դաստիարակութիւն:

Հայաստանի վերանկախացումէն ի վեր, Հայոց Եկեղեցին տենդագինս գործի լծուած է վերագտնելու այն ամէնը, ինչ կորսնցուցած էր Խորհրդային տարիներուն, որք են՝ կրօնի ու խղճի ազատութիւն, անհատական ու կրօնական արժանապատուութիւն, հոգեւոր կեանքի զարթօնք եւ աշխուժացում, բռնագրաւուած վանքերու եւ մենաստաններու ազատագրում, վանքապատկան գոյքերու եւ կալուածներու վերադարձ են: Հայրենի պետութիւնը, ներկայիս, ամենայն յարգանքով կը վերադարձնէ այն ամէնը ինչ կը պատկանի Հայոց Եկեղեցիին: Միջանկեալ կ'արժէ նշել, որ Եկեղեցի-Պետութիւն յարաբերութիւնը սիրալիք է ու յարգալիք: Հետեւաբար, այժմ պատմութեան նոր էջ բացուած է այս երկուքին միջեւ եւ օրըստօրէ կը սերտանայ անոնց բարեկամութիւնը եւ արդիւնաւոր գործակցութիւնը:

Հայրենի երկրի անկախութիւնը եւ մանաւանդ 21-րդ դարը իրենց հետ կը բերեն բազում հարցեր, որոնց կ'արժէ անդրադառնալ՝ եթէ կը փափաքի՞նք պահել Հայ Եկեղեցին եւ Հայ Եկեղեցականը իրենց կոչումին բարձրութեան վրայ՝ անսակարկ ծառայութեան պատրաստ իրենց Բանաւոր Հօտին:

Յիշեցնենք, որ Հայ Եկեղեցւոյ առաքելութեան վերաշխուժացման սուրբ գործին հրաւիրուած են ոչ միայն եկեղեցական դասին պատկանողներ, այլեւ՝ աշխարհականներ: Մեր եկեղեցին խիստ կարիք ունի այս երկու տարրերուն հոգեւոր, բարոյական ու իմացական ներդրումին, ինչպէս նաեւ նիւթական աջակցութեան: Իբրեւ Ազգային Եկեղեցի, ամենքին մասնակցութիւնը պարտաւորիչ է՝ անկախ սեռէ եւ տարիքէ, վասնզի հաւատքը խտրականութիւն չի ճանչնար:

Ապահովել էտք ազգին բոլոր զաւակներուն օժանդակութիւնը, այժմ նշենք թէ նոր դարասկզբին ինչպիսի պարտակա- նութիւններ ունին Հայ Եկեղեցին եւ Հայ Եկեղեցականը:

Ա. Արտագաղթի Կասեցում Հայաստանի Մայր Հողէն

Հայ Եկեղեցւոյ առաջնակարգ ու բարոյական պարտականութիւնն է ահագանց հնչեցնել, որ հայութիւնը հետզհետէ կը պարպուի Հայաստանէն: Հայ Եկեղեցին դառնապէս կ'ողբայ որ իր հարազատ զաւակները կ'արտա-

գաղթեն դէպի աշխարհի բոլոր ծագերը ու կը ցրուին: Մեր մայրենի երկրի ազգաբնակչութեան թիւը իջած է վտանգաւոր գիծին: Արտագաղթը, մանաւանդ փոքր ազգի մը համար մեծ աղէտ է ու դժբախտութիւն: Մարդուժն է որ կը պակսի, ստեղծագործական միտքն է որ կ'անհետանայ, աշխատող բազուկն է որ կը դադրի: Հայրենիքը դատարկել հայութենէ, համարժէք է գայն սնանկացնելու և արծաթեայ սկուտեղին վրայ ոտխին յանձնելուն:

Բնական է, որ լուրջ պատճառներ կան որ մեր հայրենակիցները կը թողուն հայրենիքը ու մէկընդմիջտ կը հեռանան: Չենք ըսեր որ կը թողլքեն գայն ու կը մոռնան: Շատեր հեռուէն կը սիրեն ու կը փայփայեն գայն, վասնզի կը վախճան, որ «կ'այրէ, եթէ շատ մօտենան»: Հայրենիքի կարօտը սակայն, ճշմարիտ հայրենասէրին համար, հեռուէն ալ կը տոչորէ անոր հոգին: Իրօք, դժուար է ապրիլ հայրենիքէն դուրս եւ տառապիլ հայրենաբաղձութենէ (nostalgie): Ատենօք, Հայ Եկեղեցին կոչ ըրաւ արտասահմանի հայութեան՝ ներգաղթելու մայր հայրենիք և զբաղելու հայրենաշինութեամբ: Արեւմտահայր ամենայն պարտաճանաչութեամբ անսաց այդ հրամանին, թէպէտեւ վիրաւոր հայրենիքը ի վիճակի չէր ամենեւին ընդունելու մեծ ներհոսք մը: Եկեղեցին իր բարձր կոչումին վրայ գտնուեցաւ և կատարեց իր խղճի պարտը՝ հայրենադարձելով տասնեակ հազարաւոր հայորդիներ: 21-րդ դարու սեմին, թող Հայ Եկեղեցիին և Եկեղեցականին առաջնահերթ եւ սրբազնագոյն պարտականութիւնը ըլլայ քաջալերել որ հայը, ցուպն ի ձեռին, շղատնայ աստանդական և շրջի զանազան քաղաքներ և հիւծի: Հայրենիքը, իր բոլոր դժուարութիւններով հանդերձ, մեր ամէնքին կեդրոնն է: Անցումային շրջան ապրող բոլոր երկիրները ունին լուրջ հարցեր, որոնց բարօք լուծումը ժամանակի կը կարօտի: Անմահ Գուսանը ճիշդ երգեց՝ «Ձախտող օրերը ճմրան մման կու գան ու կ'երթան, վիատելու չէ»:

Հարկ է Հայրենիքը պահել ու պահպանել, զօրացնել ու բազմացնել ի գին ամէն գոհողութեան: Հայոց Աշխարհը հայութեան է վայել: Ի վերջոյ, չկայ ազգ առանց հայրենիքի:

Բ. Հայ Եկեղեցոյ Միութիւն

Հայ Եկեղեցոյ երկփեղկումը մեծ տագնապ է որ դեռեւս կը շարունակուի: Տասնեակ

տարիներէ ի վեր մեծ չարիք եղած է բաժանումը փոքր ազգի մը համար: Ներկայիս, երբ Մայր Հայաստանը վերանկախացած է և ունի իր ուրոյն կառավարչածելը և հպատակ չէ ոչ ոքի, մի՞թէ ատենը չէ որ ցանկալի միութիւնը իրագործուի, որպէսզի ի սպառ վերանան անտեղի վէճերը, հակառակութիւնները, անհամաձայնութիւնները, կրկնակի ծախսերը, վատնումները, ատելորդ ձեռնարկները, եւն: Վիրաւոր հայութեան համար, ներկայ դարու պահանջներէն կարեւորագոյնը կը համարենք Հայ Եկեղեցոյ միութիւնը, որպէսզի վերջ գտնեն բոլոր տգեղ երեւոյթները և ժողովուրդը միանգամընդմիջտ միանայ մէկ դրօշի ու գմբէթի ներքոյ: Հոգեւոյս Կաթողիկոսները տարիներով ժողովներ գումարեցին, խօսեցան, գրեցին, աշխատեցան, յորդորեցին, երազեցին, ու յաւերժութեան անցան՝ առանց դոյզն արդիւնք մը տեսնելու: Այսօր, երբ կը խօսուի 21-րդ դարու պահանջներու մասին, Հայ Եկեղեցին չկողմացնելու և ինքնամփոփ կամ ինքնապարփակ չդարձնելու, և գայն կենդանի հաստատութեան վերածելու մասին, ինչպէ՞ս կարելի է մտահան ընել մեր բաղձալի միութիւնը, որ դեռեւս կը յամենայ: Բաժանման տուն տուող պատճառները անհետացած են վաղուց, բայց միութեան մասին բացարձակապէս խօսք չկայ: Միութեան աշխատանքները յառաջ տանող յանձնախումբերը վաղուց հանգստեան կոչուած են: Բաժանեալ եկեղեցին կը շարունակէ կաղն ի կաղ քալել և քայլերը ուղղել դէպի կատարեալ անորոշութիւն: Այսպիսով, վերին իշխանութիւնները նոր սերունդին, նոր դարաշրջանի սեմին, կը պարզեւն վարչականօրէն բաժնուած եկեղեցի մը՝ բաժան-բաժան ժողովուրդով: Ի՞նչ տխուր մտածում: Հայոց Եկեղեցին ժամանակի շռայլութիւնը չունի սպասելու տարիներ եւս իրագործելու միութիւնը: Ծաւալուն աշխատանքներ կան, որոնց դէմ յանդիման կը գտնուինք, և որոնց յաջողութեան համար միասնականութիւնը կենսական է: Չոյզ Աթոռներուն սերտ գործակցութիւնը ատելի քան անհրաժեշտ է ու հրամայական ներկայ դարուն: Աշխոյժ գործակցութիւնը անշուշտ որ կենսական է, բայց միութիւնը՝ շատ ատելի բաղձալի, օգտակար ու բարեբար: Կանոնադրութիւնը անշուշտ մեծ դեր պիտի կատարէ ապագայի համախոհ ու համերաշխ գործակցութեան: Հարկ է վերակենդանացնել Միութեան Յանձնախումբը և անյապաղ գործի մղուիլ, վասնզի կարելի չէ

հաշտուիլ ներկայ անբաղձալի կացութեան հետ:

Միութեամբ կը զօրանանք և ուժերու համախմբումով կը յառաջանանք:

Գ. Հայ Լեզուի Պահպանում

Հայ Եկեղեցիին ու Եկեղեցականին համար մեծ հարց է հայոց լեզուի նահանջը: Հայերէնը, որ դարերու մրրիկներուն ընդմէջէն մեզի կը հասնի իբրեւ մի կտոր նշխար, այսօր, Մփիւռքի բովանդակ տարածքին, հետզհետէ կ'ընկրկի, մեծ քայլերով կը նահանջէ անվերջ: Ինչ որ մեր ոսոխը չի կրցաւ, մենք ենք որ կը կատարենք այն՝ սիրով և անտարբերութեամբ: Այո, մենք ենք որ կը լքենք մեր լեզուն, կը սպաննենք, կ'աղճատենք, կ'այլաստենք, կ'արհամարհենք, կը մոռնանք: Արեւմտեան այս ամերուն վրայ, հայ լեզուն կը ցամաքի, վասնզի «անգործնական» է, «շահարէր» չէ, «շուկայական» լեզու չէ: Շատ հայորդիներ կը ցփին, որ հայերէն չեն կրնար խօսիլ, որովհետեւ իրենց ծնողները չեն գործածած տան մէջ: Ծնողները չեն խօսած, որովհետեւ փափաքած են անգլերէն խօսելով ընդունիլ տեղական հասարակութեան կողմ ու մերուիլ անոնց հետ: Բնականաբար, տուժած է հայոց լեզուն:

Հայոց լեզուն է որ գմեզ օղակաւորած է այսքան դար և պահած մեր ինքնութիւնը: Այսօր, այդ լեզուի մշտագոյությունը լրջօրէն վտանգուած է: Հայ Եկեղեցին, խորապէս մտահոգ այս ծանր կացութեամբ, Հիւսիսային Ամերիկայի մէջ, դիմած է բազում միջոցներու, որպէսզի կարենայ փրկել կորստեան ճամբան բռնած մեր մայրենի լեզուն: Յորձանքին դէմ կուրծք դրած, տասնեակ տարիներէ ի վեր կը պայքարի Եկեղեցին՝ ստեղծելով շարքօրեայ կամ կիրակնօրեայ Հայ Դպրոցներ: Գնահատելով հանդերձ կատարուածը, պէտք է նշել որ եղածը խիստ անբարար է, չըսելու համար՝ անյուսալի: Հիմնական լուծում է հարկաւոր, և այդ կապուած է թէ՛ Հայ ամենօրեայ դպրոցի գոյութեան, եւ թէ՛ տան մէջ հայերէնախօսութեան հետ: Ուրիշ ելք չկայ: Անոնք որոնք կը խորհին թէ առանց հայերէն խօսելու կրնան հայ մնալ, շատ բարի, առարկութիւն չունինք: Պահ մը սակայն թող մտածեն թէ ի՞նչ պիտի ըլլայ ճակատագիրը հայ լեզուին, եթէ ամէն մէկը այդպէս մտածէ: Ո՞վ պիտի գրէ եւ կարդայ, խօսի ու երգէ այդ լեզուով: Ոմանք կը պատճառաբանեն թէ լեզուն կարելոր չէ՛ հայ

ապրելու եւ մնալու համար: Նման կարճատեաներ չեն կրնար տեսնել որ լեզուն մարմնացումն է հայ հոգիին, հայ կեանքին, մտածումին ու ապրելակերպին: Հայ լեզուի մէջ է հայ կեանքը և առանց անոր, մեր գոյութիւնը կը դադրի շուտով: Հրեաներ իրենց հազարամեակներու լեզուն կենդանացուցին և պետական մակարդակին բարձրացուցին: Երբայերէնը այսօր պաշտօնական ու պետական լեզուն է որ ամէն ոք Իսրայէլի մէջ պարտի սորվիլ ու գործածել: Մենք մեր կենդանի լեզուն ոչ միայն կ'այլափոխենք, կ'եղծենք, այլեւ առ ճանապարհաւ կը լքենք: Այս այն լեզուն է, որ ազգ դարերով «դալիմ» պահած է, անշարժ ու անասան: Մեր նախահայրերը այս լեզուով հաղորդակցած, աղօթած, երգած, խնդացած ու լացած են: Ան այսօր հասած է անդունդի եզրին եւ ... ի մօտոյ կը կորչի՝ եթէ հիմնապէս չփոխուի մեր դիրքը եւ վերաբերմունքը անոր հանդէպ:

Քսանմէկերորդ դարուն, Հայ Եկեղեցիին առաջնահերթ ու սրբազան պարտականութիւնն է կոչ ուղղել համայն հայութեան, մանաւանդ հայ երիտասարդ սերունդին, սորվիլ մայրենին ու անոր ուժգին փարիլ, կաթոզին ու կարօտագին սեղմել կրծքին ու բաց չթողել:

Լեզուն հասարակութեան բերնին մէջ հաղորդակցութեան միջոց է: Չայն գործածող զանգուածը պարտի յարզանք ցուցաբերել մեր դարաւոր լեզուին հանդէպ, որ չըլլայ թէ աղմուտի ան, այլափոխուի ու դառնայ անհասկանալի: Այս է որ կը կատարուի քիչ մը ամենուրեք, երբ ականատես ու ականջալուր կ'ըլլանք աղաւաղուած, ռամկացած հայերէնի մը, որ լոկ ամօք ու նախատինք կը բերէ մեր ժողովուրդին: Մեր հայ բառագանձը, որոշ մարդիկ, խճողած ու ծանրաբեռնած են տգեղ, օտարախունչ ու զգուելի բառերով: Փոխառութեանց չափ ու սահման չէ մնացած: Հայոց լեզուն խեղդած են օտար բառերով այն աստիճան, որ երբեմն կարիք կը զգացուի բառարանին դիմելու՝ հասկնալու համար արտայայտուած միտքը: Քերականական տարրական օրէնքները խախտած խօսակցութիւններ ու գրութիւններ կարելի է հանդիպիլ ամէն տեղ: Մարդ ուղղակի կ'ամչնայ ու կ'արգահատի ի լուր աղճատուած ու խեղափոխուած հայերէնի գործածութեան: Այս ապերասան ու անպատասխանատու ընթացքը մեր լեզուն նսեմացուցած ու աստիճանագրկած: Յարզանք է պէտք հայ լեզուի հանդէպ:

Դ. Ամուր եւ Անխախտ Հայ Քրիստոնէական Հաւատք

Հայ առհասարակ հաւատքն է խնդրոյ առարկայ ի Հայաստան և ի սփիւռս աշխարհի: Մեր պապերու նուիրագործուած ու սուրբ հաւատքն է որ կ'առկայ յայտարար: Քիչ մը ամէն տեղ, աշխարհի չորս ծագերուն, Լուսա-տրչի լուսաւոր կանթեղն է որ կը հանգի: Հայոց աղօթքներն ու շարականներն են որ կը ցամքին հայ շրթներուն վրայ: Սուրբ միտոնն է որ կը սրբուի հայու ճակատէն: Երկաթագիր աղօթագիրքերն են որ կը լրտին: Հայը՝ ազդուած Հեռաւոր Արեւելքի կրօններուն մատուցած իմաստասիրական ուսուցումներէն ու ճարպիկ քարոզիչներու ճամարտակութիւններէն, հետզհետէ կը շեղի իր նախնիներու հաւատքէն և կը զլորի աղանդաւորներու ճանկերուն մէջ, ուրկէ չիք փրկութիւն, այլ կայ՝ կորուստ, այլասերութիւն: Հայաստանի ներկայ աղանդներէն գէթ յիշենք՝ Էմոնները (Էմոնցիոնալները, Emotionalists, Դիրագգացները), Եհովայի Վկաները, Հոգեգալստականները կամ Յիսունականները, Պապիստները (Baptists) եւ Աւետարանի Քրիստոնէաները (Սկրտական յարանուանութիւն), Մորմոնները, Ատվենտիստները (Adventists), Սատանայապաշտները, «Կեանքի Խօսք»ի աղանդին հետեւողները եւ: Այս վերջինը կը համարուի «հակահայկական, հակազգային, հակաքրիստոնէական, հակաբարոյական և հակաանդրոյթային»: Աղանդապետերը, անամօթաբար, իրենց ազգակործան ու հայրենաքանդ քաղաքականութեամբ, Հայոց Աշխարհը վերածած են Արշակաւանի: Անոնց ապերասան գործունէութեան հոգեկան ու հոգեբանական վնասները ահռելի են ու աննկարագրելի: Ինչպէ՞ս կարելի է թումբ բարձրացնել անոնց այս սանձարձակ քարոզչութիւններուն դէմ և ազատել անմեղ ու ազնի հայը: Ինչպէ՞ս բացատրել հայորդիին որ այս որոմները չորցնել է հարկաւոր, վասնզի հայոց ճշմարիտ հաւատքի հունտին հետ բացարձակապէս աղերս չունին:

Եկեղեցիին դերը մեծ է այս սուրբ գործին մէջ: Գիտակ ու խղճամիտ եկեղեցականներու կարիքը ունի Հայոց Եկեղեցին, որպէսզի լաւագոյնս մաքառի անոնց դէմ՝ խօսքով ու գրիչով: Չակնկալենք բիրով ու բռունցքով պայքարիլ գառան մորթով ծպտուած այս աղուէներուն դէմ, այլ միայն՝ մեր սրբազան մատենաներով, մեր ոգեշունչ

քարոզներով, մեր վարդապետութեան պարզ ու ոգեպնդիչ բացատրութիւններով: Աշուղ Ջիւանին շատ ճիշդ երգեց ստենին՝ «Գայլը վրան ոչխարի մորթի առած, գառներուն պահապան հսկող է դառած: Արլորը քարոզչու վերարկուն հագած, ամբիոն ելել, խելքի աշեցէք»:

Միշտ նկատի պէտք է առնել որ անոնք հետեւողականօրէն ու անձանձորոյ կ'աշխատին ի խնդիր իրենց նպատակներու լիակատար յաջողութեան: Նոյն ռազմավարութիւնը պէտք է որդեգրենք մենք եւս՝ մեր անզիջող դիրքով ու խստապահանջ կեցուածքով: Այլապէս, մեր եկեղեցոյ կորուստը աներկբայ է: Շատեր յարած իսկ են այդ նոր գաղափարախօսութիւններուն և բիրով ու բռունցքով կորսնցուցած իրենց նախնեաց հաւատքի ճշմարիտ ցոլքերը: Հաւաքական ուժերու գորակոչ է հարկաւոր մէկտեղելու մեր բարոյական կորովը եւ դիմադրողականութիւնը: Պայքարելու այլ ձեւ չկայ: Չգանգատինք որ անոնք ունին ամէն միջոց, իսկ մենք՝ ոչ: Մեծագումար յատկացումներ կը կատարուին բազմազան ձեռնարկումներու եւ հիմնարկներու: Առաջնահերթ մեր պարտականութիւնը թող ըլլայ հրապարակը ողողել քրիստոնէական ուսումը շեշտող և հայ դաստիարակութիւնը ընդգծող գրքոյկներով, տեսերիզներով, և բոլոր այն հնարաւոր միջոցներով, որ պիտի գան նպաստելու անոր հոգեւոր գիտելիքներու ամրապնդման: Անյապաղ կատարենք մեր գործը խղճմտօրէն, եւ արդիւնքը պիտի ըլլայ դրական ու շինիչ:

Ե. Հայ Եկեղեցին՝ Դէմ Յանդիման Այլ Յարանուանութիւններու

Մենք քաջատեղեակ ենք, որ Քրիստոնէական կարգ մը յարանուանութիւններ, Հայաստանի անկախացումէն ի վեր, գործի լծուած են տենդագինս՝ «դարձի բերելու» մեր հարազատ ժողովուրդի զաւակները: Անոնք տիւ և գիշեր կը տքնին մարդոքութեամբ և իրենց ուռկանները կը լեցնեն պարարտ որսերով: Օգտուելով մարդկանց իրաւանց ու յարգանաց թոյլատու օրէնքներէն, անոնք խտրութիւն չեն դնել հաւատացեալի ու անհաւատի միջեւ: Անոնք եկած են վերջնականապէս նուաղելու հայոց լոյսը, մարելու հայոց փարոսը: Այս ազգաքանդ գործունէութիւնը անցեալին եւս իր անհամար վնասները պատճառած է. ջլատած է մեր ներքին միասնականութիւնը (շատ մը հայեր

առաջնորդելով օտար փարախներ ...), վիրատրամ մեր կրօնական արժանապատուութիւնը, պակսեցուցած մեր ազգային եռանդը, խլած մեր ներանձնական ազատութիւնը: Մեր ազգի և եկեղեցւոյ դարաւոր արիւնալի պատմութիւնը ո՛չ մէկ նշանակութիւն ունի անոնց համար: Ընդհակառակը, անոնք կը խեղափոխեն հայ եկեղեցական դրուագներ ու թուականներ, կ'եղծեն ու կը խաթարեն հայ հոգեւոր կեանքի շքեղ երթը: Կրկին ու կրկին յիշեցնել է պէտք այս յարանուանութիւններու պետերուն, որ Հայաստանեայց Եկեղեցին ազգային նկարագիր ունի և կարելի չէ՝ անջատել հայ ժողովուրդը իր ազգային ու եկեղեցական պատմութենէն, մայր լեզուէն, դարաւոր սրբութիւններէն, սրբազան աւանդութիւններէն, եկեղեցահաստատ օրէնքներէն, տոհմիկ կամ ցեղային յատկութիւններէն, միով բանի՝ իր խորունկ ակունքներէն: Հայուն մէջ ազգայինը և եկեղեցականը ներհիստած են ու կը մնան անբաժնելիօրէն շողկապուած: Անցեալի ձախող փորձերը հարկ չկան կրկնելու, վասնզի մեր ժողովուրդը քաջ գիտակ է, որ անոր կեանքը ընդելուզուած է իր անմահ քաջերու եւ Քրիստոսասնունդ սուրբերու արեամբ: Այլ խօսքով, Հայոց պատմութիւնը կարելի չէ՝ տարանջատել եւ ներկայացնել իբր գատորոշ և ուրոյն պատմութիւն, որ ո՛չ մէկ աղերս ունի հայ եկեղեցւոյ կեանքին հետ: Նման չարափոխութիւններ անցեալին չարաչար պարտութեան դատապարտուեցան, որով հետեւ ճշոյլ մ'իսկ ճշմարտութիւն չէին պարփակեր: Աչքի լոյսի պէս պահենք Աշուղ Ջիւանիի մարգարտեայ խօսքերը՝ «Պահպանենք մեր լեզուն, մեր եկեղեցին, մեր սովորութիւնը, ծէսը առանձին: Պապերից մնացած գանձ են թանկագին, կը վկայեն երկինք ու երկիր, Հայեր»:

2. Հայ Երիտասարդ Սերունդի Հոգեւոր Կեանքի Կոչ

Երիտասարդ սերունդը հարկ է որ իր գործօն մասնակցութիւնը ցուցաբերէ մեր կեանքի բոլոր փուլերուն եւ ապրի հոգեւոր վերազարթօնը: Տասնեակ տարիներու անաստաժանեան վարչաձեւը մեծամեծ վնասներ պատճառեց հայաստանաբնակ հայ երիտասարդին՝ խլելով զինք իր եկեղեցւոյ մայր ծոցէն և այլասերելով: Համայնավարութիւնը քանդեց, կործանեց այն ամէնը ինչ մեր նախահայրերը

պատրաստեցին մեզի համար: Հայ երիտասարդը զրկուած մնաց այն հոգեւոր սնունդէն որ պիտի գար զինք խմորելու, սնուցանելու, յղկելու և մշակելու քրիստոնէական ոգիով: Այժմ պահն է վերստին որ Եկեղեցին Հայոց կոչ ուղղէ Հայ երիտասարդին գալու և տէր կանգնելու իր սրբազան հաւատքին, աւանդոյթներուն, սրբութիւններուն ու հոգեւոր մշակոյթին: Հայ սերունդի սեպուի ու անյետաձգելի պարտականութիւնն է սորվիլ, իրացնել ու ապրիլ հոգեւոր կեանքը: Կեանքի պէտք է կոչել մեր բոլոր արժէքները, որոնք բարոյականացնող են ու վեհացուցիչ: Մեր Եկեղեցին դերը շատ մեծ է ու կարեւոր՝ գիտելիքներու ու գանձերու փոխանցման մէջ: Եկեղեցին չի կրնար թերանալ այս սուրբ գործին մէջ, վասնզի իր առաքելութեան մէջ կորիզային նշանակութիւն ունի: Հայ նոր սերունդը մեր ներկան է ու ապագան: Անոր պիտի վըստահուին ու յանձնուին մեր սրբազան աւանդները: Արդ, մեր պարտականութիւնն է, որ ամէն ջանք թափենք երիտասարդ Հայը լուսաւորելու մեր նախնեաց հոգեւոր ժառանգութեամբ: Մեր ազգային հարստութիւնը մեր մշակոյթին մէջ է, զայն հարստացնել է հարկաւոր:

Մեր հոգեւոր մշակոյթը ի կեանս պէտք է վերակոչել: Հայ Եկեղեցականը սրբութեամբ ու աչալրջութեամբ մօտենալու է այս փափուկ գործին: Ան պեղելու է մեր նախնեաց մատենաները եւ ի յայտ բերելու այն բոլոր գեղեցկութիւնները, որ գուտ տոհմիկ են և հայավայել: Ան ուսուցանելու է այն ամէնը ինչ մարդս կը մարդացնէ, կ'ազնուացնէ ու կը վեհացնէ: Հոգեւոր կեանքի վերաշխուժացումով միայն կարելի պիտի ըլլայ երիտասարդին գետեղել ուղիղ ճանապարհի վրայ: Քրիստոնէայ հայուն նպատակակէտը պէտք է ըլլայ ապրիլ ազնիւ, պարկեշտ ու աստուածահաճոյ կեանք:

Արտասահմանի ափերուն վրայ շատ աւելի լուրջ է հայ երիտասարդ սերունդի հայապահպանումը և հոգեւոր կրթութիւնը, քանզի ամէն գաղութ չէ որ օժտուած է հայ կրթօճախով: Եկեղեցին կրկնակի պատասխանատուութեան առջեւ կը գտնուի, երբ ծուխին մէջ ամենօրեայ հայ դպրոց գոյութիւն չունի: Եկեղեցականը բազում պարագաներուն, կը գրտնուի իր խիղճին առջեւ եւ բարոյապէս կը պարտաւորուի կատարել իր կարելին: Բեմի քարոզները անբաւարար համարելով, ան կը ձեռնարկէ շաբաթօրեայ դպրոցին, որպէսզի հայեցի կրթութիւն ջանքէ նոր սերունդի

գաւակներուն: Քրիստոնէական դաստիարակութիւնը եւս կը ստանձնէ եկեղեցին այդ դպրոցին միջոցաւ, որպէսզի ներկայ սերունդը հաղորդակից դառնայ իր առհաւական ժառանգներուն: Արդարեւ, դժուարին պայմաններուն մէջ իրագործուող այս սուրբ առաքելութիւնը, տուած է իր բարերար արդիւնքը եւ հարկ է գայն շարունակել հակառակ բոլոր մեծամեծ խոչընդոտներուն ու խտրներուն:

Է. Հայ Եկեղեցականի Գիտական Պատրաստութիւն Եւ Մտապաշարի Մշտական Հարստացում

Մեր Երանաշնորհի Հայրապետները հաստատած են որ բարեկարգութիւնը կը սկսի եկեղեցական դասով: Մեր մեծ ու աննման աշուղ՝ Սայաթ Նովա եւս պատգամած է՝ «Յիրիք բան կայ՝ հոգու, մարմնու կարգումն է՝ գիր սիրէ, դալամ սիրէ, դավթար սիրէ»: Հայ Եկեղեցիին համար առաջնակարգ պարտականութիւնն է պատրաստել նուիրուած եկեղեցականներ, համեստ մշակներ, գիտական մտապաշարով ծառաներ և իրենց սրբազան կոչումին գիտակ ու առակ անհատներ: Բա՛ւ է ինչ Հայոց Եկեղեցին տառապեցաւ ի ձեռս միջակութիւններու եւ բախտախնդիրներու, որոնք մեր բազմաշարչար եկեղեցին քաշքշեցին իրենց անբարարար գիտելիքներով եւ շահագործեցին գայն իրենց եսին, փառքին ու հանգիստին համար: Անոնք իրենց երկրային վարձքը ստացան ու անշուքօրէն անցան ու մոռցուեցան: 21-րդ դարու Հայ Եկեղեցականը պարտի ըլլալ ճշմարիտ առաջնորդ իր Բանաւոր Հօտին՝ իր բազմակողմանի ու անծայրածիր գիտելիքներով: Եկեղեցականը պարտի գէթ մէկ քայլով առաջ ու մէկ մատնաչափով բարձր կանգնիլ ժողովուրդէն, ինչպէս անցեալին էր: Եկեղեցականը, ոչ շատ հեռու անցեալին, գրիչի ու խօսքի, մտքի ու հոգիի մարդն էր, և կ'ակնկալուի որ այդպէս ալ շարունակէ մնալ, վասնզի այդ իր կոչումին անբաժանելի մասը կը կազմէ: Կրօնաւորը պիտի չբարարարուի, այս լուսաւոր դարաշրջանին, սահմանափակուելու վանքերուն մատակարարած մակերեսային գիտելիքներով, այլ ան պիտի շարունակէ բարձրագոյն ուսումնական հաստատութիւններու ջամբած գիտելիքներով, ինչպէս նաեւ ինքնաշխատութեամբ՝ զարգացնել ու մշակել իր միտքը

նորանոր օգտակար յայտնաբերումներով, գիտներով, գանձերով: Ան պարտի բարձրանալ ծիսակատարութեան պաշտօնէն վեր և ընդգրկել նոր ոլորտներ գիտութեան ու արուեստի: Ժողովուրդը ո'չ միայն սքեմը պէտք է յարգէ, այլև՝ սքեմակիրը, ո'չ միայն վեղարը, այլև՝ վեղարակիրը: Կրօնաւորին միտքը պէտք է ըլլայ մշտաբոցն ու հոգին՝ բարեկիրք, գերագնի: Ան ապրելով քսանմէկերորդ դարուն մէջ, անոր միտքը պիտի ըլլայ հինգերորդ դարու մեր շնորհագարդ վարդապետներու գիտական ոլորտին մէջ, հոգին՝ ջերմացած Քրիստոսասնունդ խօսքերով, սիրտը՝ ջրդեղուած ու ամրապնդուած Աւետարանի ոգիով: Հոգեւորականը, ինչքան ալ կքած ու ընկճուած ըլլայ վարչական գործերու բեռան ներքոյ, ան ժամանակ պէտք է գտնէ առանձնական աղօթքի, խոկումի, վասնզի ան աղօթքի մարդն է, իր հոգեւոր սնունդը և նեկտարը ան կը քաղէ Աստուածաշունչէն, մեր խորունկ, պաղատալից աղօթքներէն, գեղահիւս շարականներէն: Իբրեւ ճշմարիտ հովիւ, իր անձը ան պարտի գոհաբերել իր հաւատացեալներուն համար, հասնիլ անոնց բիրաւոր հոգեւոր կարիքներուն, եւ պատրաստ ըլլալ խորհրդատուութեան ճանապարհով անոնց հոգեքթթեցնել, սփոփել անոնց կարեւոր սիրտերը եւ բարի ուղի հարթել ապագայի համար:

Ներկայ դարաշրջանի Հայ Եկեղեցականը արդի լայնահորիզոն մտածումով ու հոգեբանութեամբ, պայծառ աշխարհա հայեացքով զինուած ու թարմ շունչով տոգորուած, գիտութեան ժամանակակից բոլոր նուաճումներուն մօտէն պէտք է ծանօթ ըլլայ, և հաղորդակից՝ անոնց բարերար ազդեցութեան, որպէսզի, ի պահանջել հարկին, կարենայ գանոնք ի գործ դնել ի բարելաւումն և ի ծաղկումն իր ժողովուրդի կեանքին: Այլ խօսքով, եկեղեցականին մտքի սլաքը պէտք է մշտապէս ուղղուած ըլլայ դէպի բազմազան գիտելիքներու աշխարհը: Մտքի հարստութեամբ ու ճոխութեամբ միայն կարելի է պատուական տեղ գրաւել և լաւագոյնս օգտակար ըլլալ հայութեան ու մարդկութեան: Գովելի է ու ողջունելի, երբ եկեղեցականը, բացի կրօնական նիւթերէն, կ'ընդգրկէ նաեւ գիտութեան ու արուեստի այլ մարգեր: Անոր գիտական հետաքրքրութիւնը պէտք է ըլլայ անսահմանափակ ու անպարագիծ: Պէտք չէ՛ բնաւ ընթանայ մէկ ուղղութեամբ և կանգ առնէ: Ինչքան ընդարձակ է ինքզինքն ու ընդլայնէ իր

մտահորիզոնը, այնքան արեւի արդիւնաւէտ կ'ըլլայ անոր գրական, հովուական գործունէութիւնը: Այստեղ փակագիծի մէջ նշենք, որ մենք հանդիպած ենք օտար եկեղեցականներու, որոնք մասնագիտացած են պարտիզամշակութեան, միջատաբանութեան, աստղագիտութեան, իրաւաբանութեան, լեզուաբանութեան, բառարանագրութեան, երաժշտութեան եւ այլ ճիւղերու մէջ: Այս ամբողջը ոչ միայն միտքը կը զարգացնեն, այլեւ եկեղեցականը կը դարձնեն արժէքաւոր, ընտրուած ու փնտռուած անձնաւորութիւն: Ոմանց համար, դժբախտաբար, եկեղեցականութիւնը դարձած է ժամանակավրէպ, կամ կեանքի մէջ ձախողած անձերու ասպարէզ: Ներկայ գօրեղ դարը, ընդհակառակը, ճնշում կը բանեցնէ եկեղեցականութեան թեկնածուներուն վրայ, որ այս սուրբ գործին համար հարկաւոր են պէսպիսի շնորհներ, կարողութիւններ, բացառիկ տաղանդներ, գիտութեան ատակութիւն, ուսումնառութեան յանձնառութիւն, կոչում, հաւատք, ծառայելու ոգի եւայլն: Հարկ է մեր Ե. Դարը՝ Ոսկեդարը վերակենդանացնել, և գիտական, բանասիրական, եկեղեցագիտական, կանոնագիտական եւայլն աշխուժութիւն յառաջացնել: Ըստ բան կայ ուսուցողական մեզի այդ դարաշրջանէն: Մեր Ոսկեդարի Թարգմանիչները, եկեղեցական լուսամիտ դէմքերը, երախտագէտ գործ տեսած են, որոնց հանդէպ յարեժօրէն կը մնանք անվճար պարտապաններ:

Ը. Քարոզխօսութեան Բնոյթը

Հայաստանեայց Եկեղեցին՝ քսանմէկերորդ դարու սեմին խիստ կարիք ունի քարոզխօսութեան վերանայման ու զարգացման: Մեր ամենախոցելի բնագաւառներէն մէկն է այս: Քարոզխօսութիւնը անհրաժեշտ է մեր եկեղեցիէն ներս, վասնզի հաւատացեալը կ'ակնկալէ ստանալ աստուածաշնչական շինիչ, դաստիարակիչ պատգամ: Արդի եկեղեցականը, նախ եւ առաջ, լաւ սերտած պէտք է ըլլայ Աստուածաշունչը, աստուածաբանութիւնը, կրօնական մատենաները, հայոց պատմութիւնը, հայ եկեղեցական պատմութիւնը, մատենագրութիւնը եւ այլ յարակից նիւթեր, որպէսզի, ի պահանջել հարկին, կարենայ պատշաճ մէջբերումներ ընել հայ և օտար մատենագիրներէն, եկեղեցւոյ երանաշնորհ Հայրերէն եւն: Քարոզիչ եկեղեցականին հայրերէնը պէտք է ըլլայ անսայթաք,

վճիտ, պատկերները՝ տեղին, շինիչ ու բովանդակալից, (արտերկրի մէջ, ան պէտք է տիրապետէ նաեւ տեղւոյն լեզուն): Ժամանակավրէպ պատմութիւններ ու վերացական կամ վերամբարձ ոճով խօսքեր պիտի իյնան ապառաժի վրայ ու մնան ապարդիւն: Եկեղեցականը, բնական է, իր քարոզխօսութեան նիւթերը պիտի ընտրէ Աստուածաշունչէն, տօներէն, անոնց խորհուրդներէն: Յաւուր պատշաճի քարոզները պարտին ընդարձակուիլ ու մշակուիլ, և մանաւանդ՝ աղերսուիլ և կամբջուիլ մեր ներկայ կեանքին հետ: Աստուծոյ խօսքը կենդանի դարձնելու համար, քարոզիչը պէտք է խօսի վառ օրինակներով եւ ջանայ կապել խօսածը՝ հասարակութեան հետաքրքրող, մտահոգող ու եռեւեփող հարցերու հետ: Այլապէս, քարոզը կը մնայ անարձագանգ ու անազդեցիկ:

Քարոզխօսութեամբ է որ քարոզիչը Բանաւոր Հօտին պիտի ուսուցանէ, ուղղութիւն տայ, բացատրէ, լուսարանէ, կրթէ, դաստիարակէ, մխիթարէ, ամոքէ: Քարոզները պէտք է ընդգրկեն նաեւ խիստ այժմեական ու բարոյականացուցիչ նիւթեր: Արեւմտեան ափերուն վրայ, ուր հասարակական, բարոյական ու կենցաղական հարցերը անթիւ են, քարոզիչը պարտի անդրադառնալ ժողովուրդը յուզող նիւթերուն, որպէսզի եկեղեցւոյ դիրքը յստակ ընէ այս կամ այն հարցի վերաբերեալ: Բարոյագիտական հարցեր արժարժող (վիժում, գրամահ, դիակիզում, միասեռականութիւն, նախամուսնական յարաբերութիւն, յղարգելութիւն եւն) գրքոյկներ պէտք է հայթայթուին հովիւներուն, ուր մանրամասնութեամբ բացատրուած ըլլան Հայ Եկեղեցւոյ դիրքը, աստուածաբանութիւնը և առնուելիք գործնական քայլերը: Նման աշխատանք մը անյետաձգելի կը դառնայ, երբ հովիւր երբեմն ստիպուած անձնական մօտեցում կը ցուցաբերէ զանազան հարցերու շուրջ: Նման բարդ հարցեր սաստիկ վիճելի են և դժուարալոյծ: Խորանը չէ՝ տեղը մտածելու թէ ինչպէ՛ս կարելի է պատասխանել նման հարցերու: Այս և յարակից քարոյական հարցեր, լուրջ, մանրագին բնութեան կը կարօտին: Պատասխաններու միօրինակութիւն ստեղծելու համար, հարկ է որ հովիւր ի ձեռին ունենայ պաշտօնական գրքոյկ մը եկեղեցւոյ վերին իշխանութենէն, որպէսզի բռնադատուած չզգայ իր անձնական կարծիքը յայտնելու և թիրիմացութեանց տեղի տալու: Ի դէպ, յիշենք որ

մեր քոյր եկեղեցիները վաղուց կատարած են այս գործը՝ մեծապես դիրացնելով հովիին պարտականութիւնը:

Ներկայ երիտասարդ համալսարանական սերունդը կարիք ունի բարձրորակ, իմաստալից, գործնական քարոզներու, պատգամներու, որպէսզի կարելի ըլլայ զանոնք պահել Հայ Եկեղեցիէն ներս: Պարագաներ կան, երբ երիտասարդը իր իմացական ու հոգեկան յագուրդը փնտռած է այլ՝ օտար եկեղեցիներու մէջ եւ վերջնականապէս հեռացած: Հայ եկեղեցականին առաջնակարգ պարտականութիւնն է՝ խնամուած, կոկիկ, տեղեկալից ու ոգետրիչ քարոզներ խօսիլ որպէսզի հաւատացեալը ոգեպնդուած զգայ իր հաւատքին մէջ եւ հոգեկան գոհունակութեամբ մեկնի եկեղեցիէն:

Թ. Հայ Եկեղեցական Երաժշտութեան Ներկայացում

Այս դարու սեմին, Հայ Եկեղեցին և Եկեղեցականը պարտին կարգի բերել հայ եկեղեցական երաժշտութիւնը՝ մատուցելով զեղեցիկ ներկայացում մեր հաւատացեալ ժողովուրդին: Բազմիցս գրուած ու շեշտուած իրողութիւն է, որ եկեղեցական երգեցողութիւնը մեծաւ մասամբ կը գտնուի չափազանց աղքատիկ, անխնամ ու անփառունակ վիճակի մէջ: Մեր հոգետր երգերը՝ անման ու չքնաղ գանձերը, կ'երգուին անհոգատարութեամբ ու անտարբերութեամբ: Չկայ ձայներու ներդաշնակութիւն: Երգէ անելի գոռոռոց է որ կը լսուի և՛ սուրբ խորանէն, և՛ երգեցիկ դասէն: Այս ահաւոր երգեցողութիւնը տհաճութիւն կը պատճառէ հաւատացեալին, որ եկած է աղօթելու, հոգեպարար արարողութեան ներկայ գտնուելու և ոգեշնչուելու:

Նոր մտահոգութիւն մը չէ՛ որ այստեղ կ'արտայայտենք: Սա ցաւ մըն է որ տասնեակ տարիներէ ի վեր նեղած ու չարչրկած է մեզ ու դեռես կը շարունակուի մնալ անդարման: Կոմիտաս Վարդապետ քանիցս անդրադարձած է այս կարեւոր հարցին և՛ ընդվզումը արտայայտած: Ան շատ աշխատանք տարած է այս ուղղութեամբ՝ մշակելու ձայները, ազնուացնելու եւ բիրեղացնելու կատարողական արուեստը: 1913 թուականին Մարկոյին գրուած նամակին մէջ, Կոմիտաս Վրդ. կը նկարագրէ Էջմիածին վանքին անխնամ երգեցողութիւնը՝ «Վանքի երգեցողութիւնը դար-

ծել է գիղականէն ստոր. ժխոր, աղաղակ, խառնածայն ճչեր, ահա բեզ երգեցողութիւն ...»: Կոմիտաս Վրդ.ին նամակներուն մէջ յաճախակի կարելի է հանդիպիլ նման սրտցաւ նկատողութիւններու:

Ներկայիս, բարի ձգտում կայ Ս. Պատարագը երգելու եռածայն կամ քառածայն՝ յատկապէս տօնական օրերուն: Անշուշտ որ զեղեցիկ կը հնչէ մեր Պատարագը, եթէ երգուի բազմածայն, բայց անկար ու խոպոտ ձայներով, ճիչերով, առանց բաւարար փորձի, կարելի չէ նման բան ձեռնարկել: Մշակուած ձայներ են հարկաւոր եկեղեցական երգեցողութեան համար: Թոյլ տալ որ համբակները իրենց թերուս վիճակին մէջ առաջնորդեն մեք սրբազան երգերը, խաթարեն ու խաղրի վերածեն, կատարեալ յանցագործութիւն է: Այս ուղղութեամբ Կոմիտաս Վրդ. վշտահար սիրտով, 1910 թուականին, Մատթեոս Բ. Հայրապետին ուղղուած նամակին մէջ կը գրէ՝ «Ազգային ճաշակն օտարացած և խորբացած, անելին կ'ասենք, ծաղրի առարկայ դարձած՝ յանձինս տգէտ և յանձնապաստան դպրապետների, որոնք չգիտեն իրանցը, չեն էլ ուզում որոնել, սովորել եւ արհամարհելով ամէն ինչ՝ բերում են իբր զեղեցիկ, ընտիր, բայց իբր կործանարար երաժշտութիւն: Ուստի և զարմանալի չէ՛ այն ամայութիւնը, որ տիրում է հոգետր երաժշտութեան մէջ»: Յատօր սրտի, շատ բան չէ փոխուած այդ օրերէն ...:

Արդարեւ, շատ վիրաւորած ենք հաւատացեալին նուիրական զգացմունքները մեր անկատար երգարուեստով, գոռիւն-գոչիւնով: Ժամանակն է որ մեր հոգետր երգերը զետեղուին պատուանդանի վրայ, ուր և մնալու արժանի են: Սիրել, յարգել ու փայփայել են պէտք դարբերուն ընդմէջէն մեզի հասած այս երգերը, այս սուրբ մասունքները: Ծայր աստիճան բժախնդրութիւն պէտք է ցուցաբերել հայ երգեցողութեան հանդէպ, վասնզի հայ երգը կը ցոլացնէ հայ մարդը, իր ոգին, իր նկարագիրը և ինքնութիւնը: Աղօթերգերը՝ աղօթքի տրամադրութիւն պէտք է ստեղծեն և թոյլ չտան որ հաւատացեալի լսելիքը վիրաւորուի: Միանգամընդմիջտ պէտք է վերջ տրուին անելորդ զլգոցներուն, օտար ձեքծեքուն խաղերուն և զեղեղոցներուն: Հայ երգին վեհութիւնը իր պարզութեան մէջ է ու անբարատութեան: Հայ երգի մեր մեծագոյն ուսուցիչը՝ Կոմիտաս Վրդ. յստակ է այս մասին. «Շարականի երգեցողութեան անկման շատ

նպաստել են երկար ու ձիգ, անմիտ ձգձգումները (անյարիր նախատոնակները, հանգստեան շարը, քաղուածոյ շարը, անտեղի ճոխացումները), որոնք փոխանակ ոգեւորութիւն առաջ բերելու, խեղդել են մարտին ու պարզը ... հասարակութիւնն այլեւս ճանձրացել է երկարաբանութիւններից, որոնք միայն և միայն վերջին տարիների անճաշակ նորանուծութիւններն են»:

Արդ, ի՞նչ ընել այս անհաճոյ վիճակէն դուրս գալու համար: Մի՞թէ կայ բարերար լուծում այս անել կացութեան: Կոմիտաս Վրդ. կը գրէ հետեւեալը. «Քանի ուշ չէ, պէտք է ձեռք զարնել վերքը բուժելու, ինչքան էլ որ թանկ նստէ մեր վերայ, թէ չէ վերջնական կորուստը աներկբայ է»: Անբաղձալի վիճակը բարելաւելու համար Վարդապետը կու տայ հետեւեալ խորհուրդները՝ «Չթոյլատրել կամայականութիւններ, չթողնել, որ դպրապետներն ու երգչապետներն այնպէս տնօրինեն, որպէս նոցա քմահաճոյ է» եւ ապա «Կանոնատրել եւ բարութիւն դպրաց դասը»: Ի վերայ այս ամենայնի, կանոնատր փորձեր կատարել, երգեհոնահարներ պատրաստել, և թոյլ չտալ որ ամէն պատահական նուագող իր գիտցածին ու քմահաճոյքին համաձայն նուագէ: Հովիին դերը այս գործին մէջ մեծ է: Ծանր, լուրջ ու պատասխանատու աշխատանք է, այո, բայց արդիւնքը պիտի գնահատուի ամէնքին կողմէ:

Ժ. Հայ Նահատակաց Սրբացման Հարց:

Այս տարի (2015) Հայ Ժողովուրդը միասիրտ ու միակամ ոգեկոչեց հարիւր ամեակը մեր բիրատու նահատակաց, «որք կատարեցան յընթացս առաջին համաշխարհային պատերազմին»: Յայտնենք, որ Հայ Եկեղեցին ԺԵ. Դարէն սկսեալ սրբադասում չէր կատարած: Հետեւաբար մեր եկեղեցին սրբադասման համար նոր կանոն եւ սահմանեց: Վերջին հայագգի սուրբերը եղած էին՝ Յովհան Ռոտմեցին (1315-1386) և Գրիգոր Տաթևացին (1346-1409):

Ստոյգ որ մեր նահատակները մահացան Հայ ինքնութեան ու քրիստոնէական հաւատքին համար: Մահը դիմակալող հայ բարեպաշտը չուրացաւ իր հաւատքը և նահատակուեցաւ վասն իր կրօնին ու ինքնութեան: Շատ առիթներ տրուեցան հայերուն, կրօնափոխութեան ճանապարհով, սուրէն ազատիլ ու ապրիլ, բայց ան նախընտրեց իր նախնեաց

սուրբ կրօնը, հաւատարիմ մնաց իր ակունքներուն և կեանքը կորսնցուց: Մեր նահատակներուն աղեխարշ կանչը դեռեւս կը լսենք մեր հոգիներէն ներս: Անոնց լացակումած պաղատանքները կը լսենք ամէն օր ու ամէն վայրկեան: Ո՞ր է արդարութեան ձայնը այս անմեղ մարդոց համար: Ո՞վ յաւերժական հանգիստ պիտի պարգեւէ այս ճենճերող հոգիներուն: Մայր Եկեղեցին է որ արձագանքը պիտի հանդիսանայ անոնց անվերջ ճիշերուն: Եկեղեցին է, որ սրբացնելով պիտի անմահացնէ անոնց սուրբ յիշատակը, քանզի մեռան վասն Յիսուսի և վասն արդարութեան, խաղաղ, հաշտ ու բարօր կեանքի: Պատմական արձանագրութիւնները կը վկայեն որ նահատակներուն ջախջախիչ մեծամասնութիւնը հաւատացեալ էր և իր արիւնը հեղեց իր սուրբ կրօնին համար: Չենք յիշեր այլեւս եկեղեցիներուն, վանքերուն, եկեղեցականներուն թիւը, որ պարզապէս անհամար է, իսկ մեր սուրբ ատերակներուն անվկանդ ամրութիւնները դեռեւս կը վկայեն Հայուն անպարտելի ոգին ...:

*
* *

Նոր դարը իր հետ կը բերէ նոր պահանջներ, բայց եւ՝ նոր հնարարութիւններ, որոնց իմաստուն օգտագործումով միայն պիտի կարենանք փոփոխութիւններ կատարել հայ եկեղեցիէն ու հայ կեանքէն ներս:

Մեր պաշտելի նախնիք կատարեցին ինչ որ հարկն էր և մնացածը թողուցին մեզի: Անոնք իրենց հոգու բաժինը անմնացորդ կերպով մատուցեցին ու մեկնեցան:

Կատարենք ինչ որ հրամայուած է մեզի կատարել, և ըսենք թէ՛ «Անպիտան ծառաներ ենք. ինչ որ պարտատու էինք ընել՝ ըրինք»:

Յրանսացիք ճիշդ ըսած են՝ «Քաղելու համար պէտք է ցանել»:

2015



Քարոզխօսութեամբ է որ քարոզիչը
 Բանատր Հօտին պիտի ուսուցանէ,
 ուղղութիւն տայ, բացատրէ, լուսարանէ,
 կրթէ, դաստիարակէ, մխիթարէ, ամոքէ:
 Քարոզները պէտք է ընդգրկեն նաեւ
 խիստ այժմեական ու բարոյակա-
 նացուցիչ նիւթեր: Արեւմտեան աիերուն
 վրայ, ուր հասարակական, բարոյական
 ու կենցաղական հարցերը անթիւ են,
 քարոզիչը պարտի անդրադառնալ
 ժողովուրդը յուզող նիւթերուն որպէսզի
 եկեղեցոյ դիրքը յստակ ընէ այս կամ
 այն հարցի վերաբերեալ:



Օձունի եկեղեցոյ Կոթողը (Ձ. դար)
 Լոռիի մարզ, հիւս. Հայաստան

ՀՈԳԵՇՈՒՆՉ ՔԱՌԵԱԿՆԵՐ

Գրեց՝ Նազարէք Չափատարեան



*
 **

Սիրոյ կանչն է Յիսուս մեզ համար,
 Ապահով ճամբան, փայլող Աստղ անմար.
 Սիրտէ սիրտ հասնող Բանն է իբր նշխար,
 Լոյսի Ակն է Ան ու Կեանք կենարար:



*
 **

Դուն ես Աստղն Արեւելքի, Տիրամայր,
 Գթութեան վրտակ, սիրոյ շատրուան.
 Դուն՝ սպեղանի ցաւերուն անծայր,
 Հրաշագործ դեղ՝ մեր տկարութեան:

Երուսաղէմ



Կ Ա Ր Ե Ի Ո Ր Ն Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ի Ե Ն Ե Ր

«ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՇԱՐԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ 5-ՐԴ ԴԱՐԷՆ 14-ՐԴ ԴԱՐ

ՀԵՂ. ԳԵՈՐԳ ՍՐԿ. ՓԱՆՈՅԵԱՆ

Լոս Անճելըս 2011

Դոկտ. Ջալեն Ա. Քինյ. Արգումանեան

Ա.-Գիրքը

Գ Էորգ Սարկալազ Փանոյեան իր այս համապարփակ եւ ներամփոփ գործին մէջ կը հաստատէ նաեւ որ շարականներու հեղինակներուն մեր ունեցած սկզբնական ցուցակը «ՇԱՐԱԿՆՈՅ»-ի բացման էջին վրայ կը կարդանք: Անոնք աւանդաբար մեզի հասած են, ոմանք շատ ճշգրիտ անունով եւ ստորագրութեամբ նոյնիսկ, այսինքն անուններու սկզբնատառերով, ինչպէս Ներսէս Շնորհալիի («Նորաստեղծեար», «Նայեաց Սիրով», «Նորահրաշ»), կամ Խաչատուր Տարօնեցիի («Ճորճուրդ Խորին»): Նոյնպէս Սարգիս Սեւանցի Կաթողիկոսին եւ Յակոբ Սանահնեցիի շարականներու պարագային:

Սոյն հաստատումը ճիշդ է եւ կը համապատասխանէ պատմական հանգրուաններու, որոնք սակայն ճշդուելու են: Այդ հանգրուանները կը սկսին Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետի հաստատած Քրիստոնէութեան առաջին շրջանէն մինչեւ Սահակ-Մեսրոպեան շրջանը երբ 125 տարիներ ոչ գիր կար եւ ոչ Աստուածաշունչ:

Ա.- Նախամեսրոպեան Շրջան

Առաջին հանգրուանին հերոսական գործ կատարեցին Լուսաւորչի անմիջական յաջորդները, պահելու համար Հայ Եկեղեցին Հայաստանի մէջ, առանց գիրի եւ մանաւանդ առանց Ս. Գիրքի: Անոնց կարգին 9 նուիրեալ հայրապետներէն Վրբանէան ու Արիստակէսը, Յուսիկն ու Մեծն Ներսէս ինչպէ՞ս ապահովեցին նորաստեղծ Եկեղեցոյ գոյատեւումը: Արդեօք Սուրբ Գիրքը գոնէ մասամբ կար-

դացի՞ն, եւ կամ հոգեւոր երգեր երգեցի՞ն: Անպայման թէ՛ կարդացին թէ՛ երգեցին թարգմանաբար եւ բերանացի աւանդութեամբ:

Այս կարեւոր հարցումներուն պատասխանն այն է որ բերանացի գրաբար լեզուն լիակատար տիրապետող լեզուն եղած էր հինէն ի վեր, որ թարգմանաբար ստացուած բերանացի Ս. Գիրքի որոշ մասեր, Յունարէն եւ Ասորերէն բնագիրներէն, յիշողութեամբ եւ աւանդաբար, պիտի թարգմանուէին այդ 9 երանելի հայրապետներուն կողմէ եւ բերանացի փոխանցուէին ժողովուրդին: Անոնք միայն տիրապետած էին այդ երկու հնագոյն քրիստոնէայ լեզուներուն եւ տեղեակ էին անոնց պաշտամունքին:

Պատկերացնել պահ մը որ այդ 125 երկար տարիները կը կազմէին առաջին հանգրուանը, 301 թուականէն մինչեւ 425 թուական, հինգ յաջորդական սերունդներով, երբ 406 թուականին Ս. Մեսրոպ Մաշտոց, հայերէն լեզուին գիր տուաւ, ձայնը գիրի վերածեց, խօսքը՝ գրականութեան, եւ անմիջապէս Ս. Գիրքն ալ «Աստուածաշունչ» դարձուց Հայ ժողովուրդին համար որպէս առաջնահերթ անհրաժեշտութիւն Ս. Սահակ Պարթեւ Հայրապետի բարձր լեզուագիտութեամբ, իմացականութեամբ եւ հեղինակութեամբ:

Բ.- Սաղմոսերգութիւն

Անոնք անպայման հոգեւոր երգեր ալ երգեցին այդ 125 բախտորոշ անգիր տարիներուն, եկեղեցոյ գոյատեւումը ապահովելու համար որպէս պաշտամունք, հինգ սերունդներու յաջորդականութեամբ: Ի՞նչպէս երգեցին: Անոնք «սաղմոսերգեցին», հրաշալի եւ միակ կերպը որուն արձագանքը մերօրեայ Ս. Պատարագին մէջ տեսական կը հնչէ: «Սաղմոս ասացէք. Սաղմոսերգութիւն» «Սաղմոսիք եւ օրհնութեամբ եւ երգօք հոգեւորօք»: Անոնք պատահական խօսքեր չեն: Մտքիս մէջ կասկած չկայ որ նախնական այդ շարականները, որոնք վերագրուած են Մեսրոպ Մաշտոցին, յատկապէս Մովսէս Խորենացիին եւ Սահակ Պարթեւ Հայրապետին, այդ շրջանէն եկան բերանացի երգերով, ինչպէս նաեւ բերանացի աղօթքներով, հիմնուած գլխաւորաբար Սաղմոսներուն վրայ:

ԳԷՐԳ ՓԱՆՈՅԵԱՆԻ շարականներու կատարած իր քծախնդիր խմբաւորումներէն

դատելով եւ տրամաբանական կը գտնեն որ քախտորոշ այդ հինգ սերունդները Յունարեն բնագրէն քաղեցին, և իմ համոզմամբ զանոնք քաղեցին Սաղմոսաց Գիրքէն բարգմանաբար բերանացի, և սաղմոսերգեցին՝ շարականներուն հիմը դնելով բարգմանաբար, քանի որ Հայերէն գրաբար մաքուր լեզուն կը տիրապետէր հայ ժողովուրդի վերին խաւերէն ներս եւ առհասարակ ժողովուրդին լեզուն էր, թէկուզ առանց մէկ հատիկ գիրի, առանց մագաղաբայ մէկ հատիկ էջի, եւ մանաւանդ առանց Աստուածաշունչ Մատեանին: Եթէ Հայ Եկեղեցին տարածուն և գործօն վիճակի մէջ էր այդ մութ տարիներուն, Գրիգոր Լուսատրիչ սկիզբէն 33 թեմեր հաստատած էր Հայաստանի մէջ, ինչպէս կը վկայէ աւելի ուշ շրջանի Ուխտաւնէս Պատմիչը: Անոնք պահեցին այդ եկեղեցին անպայման անգիր և սակայն ներուժ հոգեւոր երգերով և աղօթքներով:

Այդ շրջանի արձագանքը եղաւ իմ կարծիքով Ս. Մեսրոպի գրի առած ապաշխարութեան շարականները եւ կամ Մովսէս Խորենացիի գրի առածները, բոլորն ալ հիմնուած աւանդաբար հասած Սաղմոսաց Գիրքէն: Եթէ թել առ թել քակել ուզէք այդ հնագոյն շարականները՝ բոլորին արմատը գրեթէ բառացի Սաղմոսաց Գիրքէն քաղուած կը տեսնէք: Ոսկեղարու առաջին շարականագիրները բերանացի առաջը ունենալով, զանոնք մագաղաբի վրայ գրեցին, նորահնար սրբագան այբուբենով: Մեր օրերուն ամէն կիրակի կ'երգենք «Փառք ի բարձունս» երգը և չենք անդրադառնար որ երկրորդ մասը՝ «Եւ յամենայն ժամ օրհնենք զքեզ» լիովին սաղմոսներու համարներ են, առանց բացառութեան, Սաղմոսաց Գիրքէն քաղուած համարներ եւ երգի վերածուած:

Սակայն ինձ համար հերոսական այդ հեղինակութիւններէն անդին հարց կը ծագի թէ Ոսկեղարեան մեր Սուրբ Թարգմանիչները, գլխաւորութեամբ Ս. Սահակի եւ Ս. Մեսրոպի, որքան ժամանակ կրնային տրամադրել Ս. Գիրքի շատ կենսական բարգմանութենէն զատ ուրիշ բաներով զբաղելու: Իմ կարծիքով հին անուններուն հետ կապուած շարականները վերագրումներ են, և լաւագոյն պարագային բերանացի սաղմոսերգութիւններ, որոնք կոկոտեցան, գրական լեզուի վերածուեցան և երգուեցան 5-րդ դարուն:

Գ.- Երկրորդ հանգրուանը

Շարականներու գրութեանց Տիեզերական Երեք Ժողովներուն տուած աստուածաբանական խորքը կը կազմէ, դարձեալ շատ խճողեալ աշխատածներու ընթացքին, 325 թուականէն մինչեւ 431: Աստուածաշունչի բարգմանութիւնը առանձինն կը պահանջէր 25-30 տարիներու կեդրոնացեալ և միացեալ աշխատանք, և տակաւին անկէ առաջ նորահնար գիրերը Եղեւիա պիտի տարուէին Մեսրոպ Մաշտոցի սուրբ ձեռքերով՝ վերջնական ձեւ ստանալու համար՝ համաձայն բառերու ձայներուն, եւ վերադարձին Վաղարշապատ՝ Աստուածաշունչը պիտի բարգմանէին: Երկու Մեծ Սուրբերը վախճանեցան Աստուածաշունչի հսկայ աշխատանքի ճիշդ աւարտին, Սուրբ Սահակ 439-ին և Ս. Մեսրոպ 440 թուին:

Դ.- Երրորդ եւ Չորրորդ Հանգրուաններ Կոմիտաս Ա. Աղցեցի Կաթողիկոս

Շարականներու զարգացման երրորդ եւ չորրորդ ամենէն ապահով հանգրուանները ճշդուեցան եօթներորդ դարու առաջին կիսուն՝ 618 եւ 645 թուականներուն, վերջինս ժողովական կանոնական որոշումով՝ արձանագրուած մեր պատմիչներուն կողմէ: Որպէս մասնագետ Գեորգ Փանոյեան բացթողում չի ճանչնար, ամէն շարական կը յիշէ իրենց յարակից բոլոր մանրամասնութիւններով, երբ կը մէջբերէ Կոմիտաս Աղցեցի Կաթողիկոսի գրած եւ երգած «Անձինք նուիրեալք»՝ 36 տուն ընդարձակ եւ գեղահիւս շարականը, այբեանական կարգով, Հռիփսիմեանց ու Գայեանեանց Կոյսերու յիշատակին նուիրուած:

Այստեղ պահ մը կանգ առնել կ'ուզեմ հաստատելու որ «Անձինք Նուիրեալք»ը պէտք է նկատել ամենէն առաջին շարականը որ թուականով եւ հեղինակով ճշդուած է և անվիճելի է: Ժամանակակից պատմիչ Մեթոս եպիսկոպոսի վկայութեամբ Կոմիտաս Աղցեցի Կաթողիկոս երեք մեծագոյն վաստակ բողոց Հայ Եկեղեցիին 618 թուականէն սկսեալ: Առաջինը «Անձինք» շարականը, երկրորդը Ս. Հռիփսիմէի հոյակապ տաճարը իր ճարտարապետական գերագանց ոճով, եւ երրորդն ալ իր խմբագրած «Կնիք Հաւատոյ» անուն աստուածաբանական հատորը որ ճիշդ 100 տարի առաջ գտնուեցաւ ձեռագիր հաւաքածոյի մը մէջ Կարապետ Եպս. Տ. Սկրտչեան

բանասեր գիտնականին կողմէ Դարաշամբի Ս. Ստեփանոս Նախավկայ վանքին մէջ, ու զայն հրատարակեց 1914-ին:

Իրաւամբ Կոմիտաս Կաթողիկոսն առաջ վերագրուած շարականները Գէորգ Փանոյեան դասաւորած է շատ խղճամիտ կերպով, շարականներու կանոնական յաջորդականութեամբ, ինչպէս ինք ըսած է արդէն, և ո՛չ թէ պատմական յաջորդականութեամբ: Ամէն մէկ Կանոն տօն մը կը յիշատակէ, և տօներու յիշատակման կարգով է որ կ'ընթանայ այս հատորին բովանդակութիւնը, թէև քիչ մը շփոթեցուցիչ ըլլալու աստիճան: Փանոյեանին կատարածը կանոնականն է: Եթէ ես ըլլայի պիտի նախընտրէի հեղինակներու պատմական տուեալներուն և թուականներուն հետեւելով խմբաւորել մեր շարականները, անոնց հետ կապելու համար իւրաքանչիւր հեղինակի աստուածաբանական, Ս. Գրային և նոյնիսկ պատմական ներդրումը՝ շարականներու զարգացման ընթացքին: Փանոյեանի ընտրած կերպը շիտակ կերպն է անշուշտ, այսինքն Զեռաց Շարականին էջ առ էջ հետեւիլն է Կանոններուն կամ տօներուն հետեւողութեամբ:

Ե.- Շարականներու Կանոնները

Երբ կը խօսինք Կանոններու, այսինքն առանձին տօներու մասին, ակներեւ բացբողում մը կը տեսնենք Շարակնոցին մէջ, եւ այս մէկը Գէորգ Սրկ. Փանոյեանի աշխատասիրութեան հետ երբեք կապ չունի: Վստահ եմ ինք ալ գիտէ որ թերութիւնը շարականներու հեղինակներէն կու գայ: Մեր Առաջին Լուսաւորչիներուն Ս. Թաղէս վստահ եմ Ս. Բարթողիմէոս Առաքեալներուն յատուկ ո՛չ մէկ Կանոն կայ: Տէրունի վստահ եմ սուրբերու կամ երկրորդական դէպքերու մասին յատուկ կանոնները հոն են կարգաւ, վստահ եմ սակայն Հայ Եկեղեցւոյ Շարակնոց ըլլալով մեր Առաջին Լուսաւորիչները կը բացակային անկէ: Կայ միայն «Շարական Երկոտասան Առաքելոց» գլխազրին տակ 12 Առաքեալներուն նուիրուած գոյգ անուններով վեց տուններ՝ բովընտի կարեւորութեամբ: Հոն յիշուած են «Հայաստանեայց հայր հոգեւոր Բարթողիմէոս եւ Թաղէոս»: Այս է բոլորը հսկայ Շարակնոցին մէջ: Փնտռեցի և ուրիշ հետք չգտայ:

Զ.- Դուինի 645 Թուի Եկեղեցական Ժողովը

Երաժշտագետներու կարծիքը, ինչպէս նաեւ Գէորգ Սարկաւագ Փանոյեանի եզրայանգումը համոզիչ կը գտնենք Բարսեղ Վրդ. Ծոնի արդիւնալից ներդրումի մասին: Փանոյեան զինք որպէս ընտիր երաժիշտ կը կոչէ, թէև առանց յիշելու Բարսեղի կատարած գործին նկատմամբ ժողովական որոշումն ու կանոնականացումը, ինչ որ կարելոք է գիտնալ: Խնդրոյ առարկայ Եկեղեցական Ժողովը գումարուեցաւ Դուինի մէջ 645 թուին, նախագահութեամբ Ներսէս Գ. Շինող Կաթողիկոսին որ շինել տուած էր հռչակաւոր Զուարթնոցի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցին Վաղարշապատի մէջ, որուն ատերակները բարձրագոյ կը խօսին մեզի:

Ժողովին ներկայ էին 16 եպիսկոպոսներ իրենց անուններով յայտնի: Հոն էր նաեւ Շիրակի Դպրանոցին տեսուչ Բարսեղ Վրդ. Ծոն, որ հիմնական բարեփոխութիւն մտցուցած էր շարականներու երաժշտութեան մէջ: Բարսեղ ժողովին ներկայացուցած է իր աշխատանքը եւ Ներսէս Գ. Կաթողիկոս հաստատած է զայն որպէս գործադրելի: Այդ բարեփոխութիւնն էր որ պատմութեան անցաւ որպէս «Ծոնընտիր», այսինքն դաշնաւորուած իր կողմէ: Վստահ եմ պատմիչ Վարդան Արեւելցիի ճշդածը թէ՛ շարականներու ուր ձայները, չորս ձայն վստահ եմ չորս կողմ, վերջնական ձեւի բերուած են Բարսեղ Ծոնի կողմէ:

Է.- Ս. Ներսէս Ծնորհալի Հայրապետ

Եթէ Թարգմանիչ վարդապետներ հիմը դրին նախնական շարականներուն, Կոմիտաս Կաթողիկոս եղաւ առաջին յայտնի և հաստատ շարականագիրն ու մանաւանդ երգիչը իր «Անձինք Նուիրեալը» շարականով, սակայն Շարակնոցի հանճարեղ ճարտարապետը անտարակոյս եղաւ մեր անգուգական Ս. Ներսէս Դ. Ծնորհալի կամ Կլայեցի Հայրապետը, որ հինգերորդ հանգրուանին հասցնելով մեր շարականները, պայծառացուց ու յստակ վստահ եմ վճիտ կերպով ռոռոգեց լայնածաւալ հոգեւոր դաշտը մեր պաշտամունքին:

Հետեւելով Գէորգ Փանոյեանի Ծնորհալի լրիւ շարականներուն մանրակրկիտ դասաւորումին, թէև ցրուած և ոչ կեղրոնացած իր այս հատորին մէջ, կարողացայ ատելի յստակացնելու միտումով զանոնք հինգ միա-

տրներու վերածել և աւելի մասնագիտական արժեւորումի արժանացնել Շնորհալիի հիւնալի երգերն ու շարականները: Յիշեմ պարզապէս այդ հինգ միատրները՝ հիմնուած Փանոյեանի այս հատորին վրայ:

ա) Արարչագործութիւնը իր բոլոր մանրամասնութիւններով և Քրիստոսի Յարութիւնը, Կիրակիէն մինչեւ Շաբաթ օր, Կիրակին «Նորաստեղծեալ» շարականի բաժինով, և մնացեալ վեց օրերը այբեմական շարքով 36 տուներու վրայ բաշխուած՝ «Արարչական Բանին հրաման» վեց պատկերներով, իւրաքանչիւրը վեց տուներով: Համաչափ և անփոխարինելի:

բ) Յիսուսի երկրային կեանքին վերջին Աւագ Շաբաթը իր բոլոր ներքին ծալքերով, յայտնի՝ որպէս «Այսօր Անճառ» և «Տարածեալ» շարականներով, դարձեալ այբբենական շարքով 36 տուներով:

գ) Արեւագալի, Խաղաղականի և Հանգստեան ժամերը որպէս «Քրիստոս Լոյս Աշխարհի»:

դ) Վարդանանց Գոյամարտը՝ «Նորահրաշ Պսակաւոր» շարականով:

ե) Ի Քրիստոս մնչեցեալ հոգիներուն հանգիստը՝ «Աստուած Անեղ» 36 տուն շարականով:

Փանոյեան իմ կազմած միատրներու շրթային օղակները մէկիկ մէկիկ քակելով Շնորհալի Հայրապետի շարականներու թիւը կը հասցնէ 75-ի, իսկականին մէջ աւելի քան 20 ընդարձակ կամ համառօտ միատր շարականներու հիմամբ: Օր մը հարկ պիտի ըլլայ վերելի հինգ միատրները լիովին ուսումնասիրել տեսնելու համար Ներսէս Շնորհալի Հայրապետին Աւետարանի panoramic սրբազան բեմադրութիւնը որպէս ամենէն բացառիկ հեղինակն ու շարականագիրը Հայ Եկեղեցոյ, որ ապրեցաւ 12-րդ դարուն՝ 1103-1173 թուականներուն:

Շնորհալիէն դար մը ետք ապրեցաւ Յովհաննէս Երզնկացի Պոլով վարդապետը, որ յայտնի եղաւ իր ուսուցչապետի և քարոզչի հանգամանքով: Գրեց մաւր շարականներ, յատկապէս «Այսօր գուարճացեալ ցնձայ» շարականը Ս. Գրիգոր Լուսաւորչի Մուտն ի Վիրապի եւ բազմաշարչար սուրբի յիշատակին, բացառիկ ոճով և գերազանց լեզուով այբբենական շարքով 36 տուներով: Լեզուն գերազանցապէս գրական, պատկերաւոր և չարչարանքներուն յատուկ աննախընթաց բառանքերով:

Տաղանդաւոր բազում այլ հեղինակներ, ինչպէս Պետրոս Գետադարձ Կարողիկոս, Ստեփանոս Սիւնեցի, Յովհան Մանդակունի, Կիրակոս Երզնկացի և այլք, լրիւ թիւով 30 հեղինակներ, ինչպէս ցանկագրած է Պրն. Փանոյեան, որոնք պայծառացուցին Հայ Եկեղեցին: Կը մնայ որ մենք պայծառացնենք մեր կարգին այդ շարականները երգելով եւ հասկնալով, սակայն դժբախտաբար երգողները նօսրացան, երաժշտութիւնը նուաղեցաւ, Շարակնոցը մէկդի դրուեցաւ ու Հայ Եկեղեցոյ պաշտամունքը միայն Ս. Պատարագի սահմանին մէջ մնաց:

Մեր շարականները ամրակուռ բերդն են մեր եկեղեցոյ, աստուածաբանական, վարդապետական և պատմական պարիսպներով ամրացած: Վերջացնելէ առաջ իմ խօսքը, ուսանելի կը նկատեմ նշել «Շարակնոց»ին մէջ ակնառու պարագայ մը:

Շարակնոցին մէջ շուայլ կերպով հարիւրաւոր անգամներ գործածուած է ԱՅՍՕՐ բառը, թէ՛ շարականներուն սկիզբը և թէ՛ անոնց բովանդակութեան մէջ: Պիտի ըսեմ ԿԸ ՅՆԾԱՅ այդ պարզ բառը առանց ձանձրոյթ պատճառելու: Երգողը կ'երգէ այդ բառը այնքան սահուն ու մաքուր, որովհետեւ ներկան կը հնչէ, իր գրաբար իմաստով միայն, և ոչ աշխարհիկ մեր ամէն վայրկեան կրկնած ճիշդ և անճիշդ, մաքուր և անմաքուր բովանդակութեամբ: Մեր սրբազան շարականագիրները ԱՅՍՕՐ կը գրեն անցեալի դէպքերը այժմեականացնելու համար: Ծնունդը կը կրկնուի այսօր, Խաչելութիւնը կը կրկնուի այսօր, Յարութիւնը կը կրկնուի այսօր, և բոլոր տէրունի եղելութիւնները անցեալին քանուած չեն մնար, այլ ամենօրեայ ներշնչումի և ուսուցման դեր կը կատարեն: Կը ծնինք ամէն օր Յիսուսի հետ, կը խաչուինք Իր հետ ամէն օր, և յարութեան կ'արժանանանք ամէն օր Քրիստոսի հետ:

Շնորհաւորութիւններ մեր սիրելի վաղեմի բարեկամ Գէորգ Փանոյեանին իր կատարած մնայուն աշխատանքին համար:



ՄԱՔՐԱՉՏԵԼ ՀԱՅԵՐԷՆԸ

(Սրտցաւ նամակի մը առթիւ)

«Սիոն»ի վերջին երկու թիւերուն մէջ ի շարս այլ պատմա-բանասիրական, կրօնաբարոյախօսական ու տեղեկագրական գրութիւններու, լոյս տեսան նաեւ յօդուածներ՝ Հայոց լեզուին և յատկապէս Արեւմտահայերէնին սպառնացող վտանգներուն մասին, շօշափուեցաւ նաեւ օտարախունչ մեր մակամունները հայացնելու խնդիրը: Այս նիւթերուն վերաբերեալ ստացած ենք քաջալերական խօսքեր, գրատր եւ բանատր, ինչպէս նաեւ շինիչ ու բարեմիտ քննադատութիւններ «Սիոն»ի վերահրատարակման առթիւ:

Այդպիսիներէն կ'առանձնացնենք պարբերաբերթիս խմբագրին յղուած շահեկան գրութիւն մը անգլերէն լեզուով՝ Սաղիմահայութեան և օտար դպրոցներէ ներս մեծ ծառայութիւն մատուցած պատուական կրթական մշակէ մը, վաստակաշատ ուսուցիչ՝ **Տիար Եղիա Տիգրանեան**: Մեզի յղուած նամակը հոյակապ առիթ մը ծառայեց մօտիկէն շփուելու իր հետ եւ կիսելու մեր հասարակաց մտահոգութիւնները:

Պրն. Եղիա Տիգրանեան իր նամակին առաջին կէտին մէջ մակաբերելէ ետք անգլերէն լեզուով լոյս տեսած կարգ մը գրութիւններու լեզուական և ուղղագրական սխալները՝ երկրորդ կէտին մէջ կ'անդրադառնայ հայերէնի ներկայով ու ապագայով մտահոգ մտաւորականներս յուզող կարեւոր հարցի մը: Իր շահեկանութեան համար թարգմանաբար կը ներկայացնենք իր մատնանշումները, որոնք կը բխին սրտցաւ հոգիի մը խորքէն:

«Ըանի մը ամիսներէ ի վեր դիտելով հայկական պատկերասփիւռի հաղորդումները, հասարեցի օտար բառերու ցանկ մը, դասատրեցի զանոնք այբբենական կարգով և ահաւասիկ կը յանձնեմ ձեր (խմբագրութեան - Մ.Գ.) ուշադրութեան: Չիս զարմացնողը այն է, թէ նշուած բառերը ո՛չ թէ միայն կը գործածուին հասարակ ժողովուրդին կողմէ, այլեւ բարձրաստիճան պետական անձնատրութիւններու, կրթուած անձերու, կառավարական և հոգեւոր դասի մարդոց կողմէ: Մի՞թէ մեր հայերէնին մէջ կը պակսի՞ն նշուած օտար բառերուն համարժեքները, բառեր, որոնք թափանցած են մեր

ոսկեղնիկ լեզուին մէջ: Կը զարմանամ ու կը մտահոգուիմ: Չեր (խմբագրութեան) հայեցողութեան կը բողոք մնամակիս ամբողջական կամ մասնակի հրապարակումը»:

Պարզ ու յստակ և առանց բառերը ծամծմելու ըսուած է ամէն ինչ: Պրն. Եղիա Տիգրանեան ո՛չ առաջինն է և ո՛չ այլ վերջինը, որ մատը վերքին վրայ դնելով տարիներու վաստակատր փորձառութեան մը բարձունքէն կոչ կ'ուղղէ տէր կանգնիլ մեր ոսկեղնիկ լեզուին: Ի տես այս օտար բառերու և եզրերու առատ օգտագործման, կը թուի թէ Հայերէն-Անգլերէն-Լատիներէն-Ռուսերէն բառարանի մը օգնութեամբ պէտք է նստիլ պատկերասփիւռին դիմացը:

Միայլ չհասկցուինք, չենք ուզեր ըսել թէ ժամանակակից հայերէնը մոլեգին կատաղութեամբ պէտք է մէկդի շարտէ **որքէ** բառ կամ եզրոյթ որ ծնունդ կ'առնէ գիտութեան քառասմբակ յառաջխաղացումէն: Նոյնիսկ Ե. դարու մեր թարգմանիչները այդպէս չվարուեցան, եւ չէին կրնար վարուիլ, այլ դիմեցին բառին հայացման, այնքան ատեն որ բառը կամ եզրը կ'արտայայտէր առարկային ու գաղափարին իմաստը: Մեր ընդդիմութիւնը կը վերաբերի **անհարկի** օտար բառերու ներխուժման: Հայ մամուլին մէջ քիչ չէ թիւը այն սրտցաւ մտաւորականներուն, որոնք հայոց լեզուի անաղարտութեան պահպանման համար կոչ կ'ուղղեն և բժախնդրութիւն կը պահանջեն: Բայց այնպէս կը թուի թէ հսկողութեան զգալի թերացում մը կայ քիչ մը ամէն տեղ, որուն արդիւնքը այն կ'ըլլայ որ մարդիկ անփութօրէն կը գործածեն օտար բառեր: Ո՞ր մէկը ըսես: Ահաւասիկ նմոյշ մը՝ *ֆիկսել, էնցիա, իմէճ(ջ), կորրուպցիա, կլիմիկա, ակցիա, պիկէտինգ, ստրես, աննոտացիա...*, թէ «եսպէս շարունակես ի՞նչ դուրս կը գայ...»:

Ստորեւ կը ներկայացնենք մեր նամակագրին լսած օտար բառերը՝ յուսալով որ անոնք կ'արժանանան համապատասխան յանձնախումբերու կամ մարմիններու ուշադրութեան:

Մեր կողմէ նշում. Նախ տրուած է օտար բառը անգլերէն լեզուով, ապա անոր արեւելահայացումը հայաստանեան ուղղագրութեամբ և տառադարձութեամբ, իսկ քովը՝ տուեալ բառին հայերէնը, իսկ այն բառերը, որոնց արեւելահայերէնը չենք գտած՝ դրած ենք (?):

Aspect- ասպեկտ-տեսակետ, երևոյթ
 antipode- անտիպոդ-հակոտնեայ
 active- ակտիվ-գործօն
 analyze- անալիզ-վերլուծում, քննարկում,
 քաղաղութիւն
 abnormal- աննորմալ-անբնական,
 արաստվոր
 aesthetic- էստետիկ-գեղագիտական
 academia-ակադեմիա-կաճատ
 association-ասոցիացիա-ընկերակցութիւն
 advocate- ադվոկատ-փաստաբան, դատա-
 պաշտպան
 allegoric-ալլեգորիկ-այլաբանական
 archive-արխիվ-վաւերագիր
 aggressive-ագրեսիվ-յարձակողական
 allergy-ալերգիա
 actual-ակտուալ-իրական, տեսանելի
 aftershock-աֆտերշոկ-(^o)
 absurd-աբսուրդ-վերացական, անիմաստ
 archaic-արխայիկ-հնաբոյր, հնաոճ
 alternative-ալտերնատիվ-այլընտրանքային
 anecdot-անեկտոդ-գուարճախօսութիւն,
 մանրավէպ
 acceleration-ակսելերացիա-արագացում

-B-

Blender-բլենդեր-ճգմիչ, քամիչ, հիւքահան
 Budget-բյուջետ-ամսվարկ
 Band-բանդ-նուագախումբ, աւագակախումբ
 Balance-բալանս-հաշուէկշիռ, հաշուեցոյց
 Business-բիզնես-գործարք
 Bonus-բոնուս-պարգէւ, նուէր

-C-

Chaos-քաոս-խառնիճաղանճ, խառնաշփոթ
 Consolidate-կոնսոլիդացնել, ամրապնդել,
 ապահովել
 Cycle-ցիկլ-շրջան
 Compensation-կոմպենսացիա-հատուցում
 Consensus-կոնցենսուս-համաձայնութիւն
 Charismatic-խարիզմատիկ-հրապուրիչ
 Context-կոնտէկստ-համատէկստ, պարունակ
 Concise- (^o) ամփոփ, համառօտ
 Coalition-կոալիցիա-դաշնակցութիւն
 Content-կոնտենտ-բովանդակութիւն, պարու-
 նակութիւն
 Cosmopolitan-կոզմոպոլիտ-աշխարհաբաղա-

բացի

Classic-կլասիկ, կլասիցիզմ-դասական
 Criminal-կրիմինալ-քրեական, ոճրային
 Comparative-համեմատական, քաղդատական
 Consession-կոնսեսիա-զիջում, փոխզիջում
 Chantage-շանտաժ-սպառնալիք, բռնանք
 Compromise-կոմպրոմիս-զիջում, համաձայ-
 նութիւն
 Conflict-կոնֆլիկտ-բախում, առճակատում
 Collective-կոլեկտիվ-հաւաքական
 Cultural-կուլտուրական-մշակութային,
 քաղաքավար
 Contre-կոնտր-հակ-, հակառակ
 Combination-կոմբինացիա, կապակցութիւն,
 համամտութիւն, կցագգեստ (ներքնահա-
 գուստ)
 Creative- (^o) ստեղծագործ
 Compositeur-կոմպոզիտոր-երաժշտահան,
 յօրինող, երգահան
 Concrete-կոնկրետ-որոշակի, յստակ
 Consultation-կոնսուլտացիա-խորհրդակցու-
 րիւն
 Concentrate-կոնցետրատ-խտացում (ուտելիք)
 Cosmetics-կոսմետիկա-արդուզարդ, շպար
 Complex-կոմպլէկս-բարդ
 Concept-կոնցեպտ-հասկացութիւն
 Collega-կոլեգա-գործընկեր, գործակից
 Chanson-շանսոն-երգ
 Cooperation-կոոպերացիա-համագործակցու-
 րիւն
 Combine-կոմբին-կապակցել
 Conventsia-կոնվենցիա-համագումար, համա-
 ձայնութիւն
 Carousel-կարուսել
 Component-կոմպոնենտ, քաղաղրիչ
 Capital-կապիտալ-դրամագլուխ
 Champion-չեմպիոն-ախոյեան, մրցանակա-
 կիր
 Contact-կոնտակտ-շփում
 Campus- (^o) ջամբար
 Configuration-կոնֆիգուրացիա, կերպարանք,
 ձեւ
 Course-կուրս-դասընթացք, լսարան
 Constructive-կոնստրուկտիվ-կառուցողական

-D-

Decorative-դէկորատիվ-զարդարուեստային
 Dominant-դոմինենտ-գերիշխող
 Donor-դոնոր-նուիրատու
 Dividend-դիվիդենտ, բաժանարար,

շահարածին	-G-
Document-դոկումենտ-փաստաթուղթ, վաւերաթուղթ, վաւերագիր	Genocide-գենոցիդ-ցեղասպանութիւն
Dogmatic-դոգմատիկ-դասանարանական, վարդապետական	Genre-ժանր-սեռ
Depression-դիպրեսիոն/դիպրեսիա-անկումայնութիւն, անկումային	Global-գլոբալ-համաշխարհային
Discourse-դիսկուրս-	Genetic-գենետիկ-ծագումնաբանական
Diagnose-դիագնոզ-ախտաճանաչում	General-գեներալ-հրամանատար, ընդհանուր
Deficit-դեֆիցիտ-պակասող	-H-
Dirigeur-դիրիժոր-խմբավար	Humanitar-հումանիտար-մարդասիրական, մարդկային
Diversia-դիվերսիա, խափանարարութիւն	Hermetic-հերմետիկ-փակ
Dynamic-դինամիկ-մարտունակ, ուժական	Hectic-հետիկիկ-տենդայից
-E-	Hobby-հ(խ)ոբբի-զբաղմունք
Effect-ive-էֆեկտիվ-ազդեցիկ	Humor-հումոր-երգիծանք
Ethnic-էթնիկ-ազգային	Hypnotism-գիպնոտիզմ-քննաժողով
Emotion-էմոցիա-զգացմունք	Hysteria-հիստերիա-զղագարութիւն
Extase-էկստազ-վերացում	-I-
Energia-էներգիա-ներուժ	International-ինտերնացիոնալ-միջազգային
Experiment-էքսպերիմենտ-փորձառկութիւն	Integral-ինտեգրալ-անբաժան, անքակտելի
Expert-էքսպերտ-մասնագէտ, փորձագէտ	Intrusive-ինտրուսիվ-պնդերես, աներես
Exclusive-(*) բացառիկ	Interpretation-ինտերպրետացիա-մեկնաբանութիւն
Ecran-էկրան-պաստառ	Insturmental-ինստրումենտալ-ոտնոձգական
Erotic-էրոտիկ	Improvise-իմպրովիզացիա-յանկարծաբանել
Exterior-(*) արտաքին	Institute-ինստիտուտ-հաստատութիւն
Elite-էլիտա-ընտրանի, սեռուցք	Ideology-իդյոլոգիա-զաղափարաբանութիւն
Expression-էքսպրեսիա-արտայայտութիւն	Intellectual-ինտելեկտուալ-մտաւորական
Essential-(*) էական, կենսական	Infection-ինֆեկցիա-ախտահարում
Erection-իրեկցիա-կանգնում,	Interior-ինտերյեր-ներքին
Egotism-էգոտիզմ-անձնագովութիւն	Information-ինֆորմացիա-տեղեկագրութիւն, տեղեկութիւն
Egoist-ism-էգոյիստ-եսասէր, էսամոլ	Implant-իմպլանտ-տարատնկում
Ecologia-էկոլոգիա-բնապահպանութիւն	Interview-ինտերվիու-հարցազրոյց
Extreme-(*) ծայրահեղ	Intrigue-ինտրիգ-խարդախանք
Ethics-էթիկա-կենցաղավարութիւն	Intonation-ինտոնացիա-հնչերանգ
Ensemble-անսամբլ-համոյթ	Immunity-իմմունիտետ-դիմադրողականութիւն
Etap-էտապ-քայլ, հանգրուան	-J-
Echelon-էշելոն-շարասիւն	Jargon-ժարգոն-բարբառ, խօսուացք
-F-	Journalist-ժուրնալիստ-լրագրող, թղթակից
Favorite-(*) նախընտրելի	L-
Funtional-ֆունկցիոնալ	Laconic-լակոնիկ-լակոնական, կարճ
Fantastic-ֆանտաստիկ-երեսակայական	Legend-լեգենդ-առասպել, հերոս, դիւցազն
Finance-ֆինանս-ելեւմտական, ելեւմտ	Legal-լեգալ-օրինական
Ferment-ֆերմենտ(ացիա)-խմորում	Liquidation-լիկվիտացիա-չլզոքացում, զեղչում
Fundamental-ֆունդամենտալ-հիմնական	
Facultet-ֆակուլտետ-բաժանմունք	
Fix-el -ել-ֆիքսել-կիտել, սեւեռել, յատել	

Lexicon-լեքսիկոն
 Laboratoire/Laboratory-լաբորատորիա տարրա-
 լուծարան, գիտաշխատանոց

-M-

Minimal-մինիմալ-նուազագոյն
 Maximal-մաքսիմալ-առաելագոյլ
 Mentality-մենտալիտետ-մտածելակերպ
 Migration-միգրացիա-գաղթ
 Mechanism-մեխանիզմ
 Minister-մինիստր-նախարար
 Monitor-մոնիտոր-հսկիչ
 Management-(^o) վարչարարութիւն
 Meeting-միտինգ-հանրաժողով, ցոյց
 Method-մեթոդ-ոճ, եղանակ, կերպ
 Museum-(^o) թանգարան
 Morgue-մորգ-դիագնոստիկայի սենյակ
 Monopole-մոնոպոլիա-մենատիրութիւն
 Monistic-մոնիստիկական-
 Mendate-մանդատ
 Mobilization-մոբիլիզացիա

-N-

Nostalgia-նոստալգիա-կարօտախտ
 Nuance-նուանս-նրբութիւն, նրփերանգ, երփն
 Norm-նորմ-չափ, ընդհանուր անոն, օրինակ
 Normalization-նորմալիզացիոնժիա-բնականո-
 նացում
 Nerve-ներվ-ջիղ

-O-

Organism-օրգանիզմ-մարմին
 Organ-օրգան-կազմած
 Objective-օբյեկտիվ-առարկայական
 Original-օրիգինալ-իմքնատիպ
 Obstructive-օբստրուկտիվ-խանգարիչ
 Obsession-օբսեցիա-մտասնեռում
 Operateur-օպերատոր-նկարահան (ժապատէն)

-P-

Preparation-պրեպարատ-պատրաստուկ
 Poet-պոետ-բանաստեղծ
 Picnic-պիկնիկ-դաշտահանդէս,
 դաշտազնացութիւն
 Poesia-պոեզիա-քերթողութիւն
 Pioneer-պիոներ-ռահվիրա, նախաձեռնող
 Process-պրոցես-գործընթաց

Provocation-պրովոկացիա-
 Producteur-արտադրիչ
 Producer-պրոդյուսեր-արտադրիչ
 Professional-պրոֆեսիոնալ-արհեստավարժ
 Premiere-պրեմիերա-բացում
 Project-պրոյեկտ-ծրագիր, նախագիծ
 Pragmatic-պրագմատիկ-գործնական
 Problem-պրոբլեմ-հարց, խնդիր
 Practica-պրակտիկա-գործունէութիւն
 Physicakan (physical)-ֆիզիկական-բնական
 Platform-պլատֆորմ-յատակ, ամբիոն, բեմ
 Popular-պոպուլյար-ժողովրդական
 Phenomenon-ֆենոմեն-երեւոյթ
 Passive-պասիվ-կրաւորական
 Punctual-պունկտուալ-ճշդապահ
 Potential-պոտենցիալ-կարողականութիւն
 Permanent-պերմանենտ-մշտական
 Photo-ֆոտո-լուսանկար
 Pilot-(^o) օդաչու
 Piece-պիեսա-կտոր, բեկոր, հատուած
 Panic(a)-պանիկա-խուճապ
 Paradox-պարադոքս-յարակարծիք, հակասա-
 կան
 Puzzle-(^o) հանելուկ

-R-

Regime-ռեժիմ-վարչակարգ, վարչաձեւ, սննդա-
 կանոն
 Repertoire-ռեպերտուար-յայտագիր
 Retrospect-ռետրոսպեկտ-յետահայեաց
 Rational-ռացիոնալ-արմատական,
 տրամաբանական, բանական
 Rythm-ռիթմ-կշռոյթ
 Restaurant-ռեստորանտ-ճաշարան
 Respublica-ռեսպուբլիկա-հանրապետութիւն
 Reportage-ռեպորտաժ-հաղորդում,
 քրթակցութիւն
 Requiem-ռեկվիեմ-մահերգ
 Reform-ռեֆորմ-բարեփոխութիւն
 Rating-ռեյտինգ-արժեւորում, գնահատում
 Resource-ռեսուրս-աղբիւր
 Recession-(^o) տնտեսական տագնապ
 Reaction-ռեակցիա-հակադարձութիւն,
 յետադիմական
 Revenge-ռեվանշ-վրէժ, փոխվրէժ
 Regisseur-ռեժիսոր-բեմադրիչ
 Rector-ռեկտոր-ուսումնապետ
 Racism-ռասիզմ-ցեղապաշտութիւն,
 ցեղամոլութիւն
 Residentia-ռեզիդենցիա-բնակարան

-S-

Standard-ստանդարդ-չափանիշ
 Symbolic-սինվոլիկ-խորհրդանշական
 Scandal-սկանդալ-գայթակհութիւն
 Sport-սպորտ-մարզական
 Sex-սեքս-սեռ, կենակցութիւն
 Subsidize-սուբսիդացիա-նպաստ
 Speculative-սպեկուլատիվ-շահադիտական-
 չարաշահում
 Stimulus-ստիմուլ-գրգռիչ
 Stress-ստրես-լարուածութիւն
 Structure-ստրուկտուրա-կառուցուածք
 Sociologue-սոցիոլոգ-ընկերաբան
 Suppressive-սուպրեսսիվ-ճնշիչ,
 բռնատիրական
 Sketch-ակէշ-նորուագիծ, նախագիծ
 Subjective-սուբյեկտիվ-ենթակայական
 Showbusiness-շոուբիզնէս-
 Scenarist-սցենարիստ-բեմագրող

-T-

Tone-տոն-հնչեղութիւն-եղանակ-երանգ
 Technologia (technology)-տեխնոլոգիա-
 արհեստագիտութիւն
 Transport-տրանսպորտ-փոխադրութիւն
 Tradition-տրադիցիա-աւանդութիւն
 Transformation-տրանսֆորմացիա-
 փոխակերպում
 Thema-թեմա-նիւթ
 Tact-տակտ-փափկամկատութիւն, ամանակ
 (երաժշ.)

-U-

Unification-միացում

-V-

Variation-վարիացիա-փոխաձեւութիւն
 Vitrage-վիտրաժ- երփնանկար
 Virus-վիրուս-վարակ, մանրէ, թոյն, ժահր
 Vibration-վիբրացիա-բրբռացում
 Vulgar-վուլգար-գոեհիկ



Հայաստանի Հանրապետութեան
 Սահմանադրութիւն

ՅՕԴՈՒԱԾ 12.- ՀԱՅԱՍՏԱՆԻ
 ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
 ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԼԵԶՈՒՆ
 ՀԱՅԵՐԷՆՆ Է:

LORD BYRON

“By way of divertisement, I am studying daily, at an Armenian monastery, the Armenian language. I found that my mind wanted something craggy to break upon; and this — as the most difficult thing I could discover here for an amusement — I have chosen, to torture me into attention. It is a rich language, however, and would amply repay any one the trouble of learning it. I try, and shall go on; — but I answer for nothing, least of all for my intentions or my success.”

Sarah-Claire Jordan (Linguist)

Armenian is a unique language, classified as its own branch in the Indo-European language family. At first, it was thought to be an Indo-Iranian language, but later it was found that, despite many loanwords from Iranian languages, it didn't share enough other characteristics to be classified as such. The fact of the matter is, Armenian can't truly be classified any other way. This, among other things, makes it unique.

ՆԻԹԵՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՏԱՄԱՐ

Վ Ա Ի Ե Ր Ա Գ Ի Ա Յ Ի Ն

Ազգային Ժողովի Նիստերու Սեազիր Ատենագրութիւններ 1919-1922

Դոկտ. Վաչէ Ղազարեան

Չ աւն Արք. Տէր Եղիայեան, Պատրիարք Թուրքիոյ Հայոց, իր յուշերուն¹ հինգերորդ գլուխը նուիրելով իր պատրիարքութեան երկրորդ շրջանին (1919-1922), կը նշէ թէ իրաքեան արստրէն 1919-ի Փետրուար 19-ին վերադառնալէ ետք, հոն գործի վրայ կը գտնէ Տոքթ. Գ. Դաւիթեանի վարչութիւնը, որ առժամայէս իր պաշտօնին վերադարձած էր Ազգային Սահմանադրութեան վերահաստատումէն (19 Հոկտեմբեր 1918) ետք:²

Պատրիարքը կ'աւելցնէ. «Իմ Պոլիս հասնելէս անմիջապէս յետոյ իմ առաջին մտահոգութիւնս եղաւ Պատրիարքարանի ժողովներուն կազմակերպութիւնը: Պոլսոյ թաղերու կողմէ ընտրուած Ազգ. Ընդհանուր Ժողովի նահատակեալ եւ պակասեալ անդամներուն տեղ նորեր ընտրուեցան և անմիջապէս Վարչական երկու ժողովները³ վերակազմուեցան վարչապետական դրութեամբ:

«Ազգ. Ընդհ. Ժողովի 1919 Յուլիս 4-ի նիստին մէջ Դաւիթ Տէր Մովսէսեան առաջարկեց եւ պնդեց որ Քաղաքական Ժողովի ընտրութիւնը Պատրիարքին յանձնուի քանի որ Ժողովը իր վրայ վստահութիւն ունի և Ժողովը բացարձակ մեծամասնութեամբ ընդունեց այդ առաջարկը:

«Նկատի ունենալով Տոքթ. Դաւիթեանի անձնուէր աշխատութիւնները եւ իր ատենապետութեան ատեն ցոյց տուած կարողութիւնները՝ վերստին վարչապետութիւնը իրեն վստահեցայ եւ կազմեցի նոր Քաղ. Ժողով մը:

«Պատրիարքարանի Վարչական երկու Ժողովներուն ընտրութիւնը այլեւս մինչեւ 1922-ի վերջը այս կերպով տեղի ունեցաւ, 3 տարուան ընթացքին 4 անգամ ընտրութեան պէտք ներկայանալով:

«Այս չորս ընտրութիւններէն առաջին երկուքը, ինչպէս 1919 Յուլիս 4-ինը և 1920 Յունիս 29-ինը, Պատրիարքին կողմէ կազմուեցան, իսկ վերջին երկուքը Ազգ. Ժողովին կողմէ ընտրուեցան վարչապետները և անոնց բողոքեցաւ իրենց ընկերները որոշելը:⁴ Այս վերջին դրութեամբ 1921 Ապրիլ 8-ին ընտրուեցաւ նախ Դաւիթ Տէր Մովսէսեան և 1922 Փետր. 17-ին Յարութիւն Մոստիչեան»:⁵

Ազգային Սահմանադրութիւնը սկզբամբ վարչապետական դրութեամբ ընտրութիւն չէր նախատեսեր, բայց հիմնական տրամադրութիւններէն այս շեղումին կամ մասնակի փոփոխութեան համար արդարացուցիչ հիմք կը նկատուէր այն, որ «Անկարելի էր քուէարկութեամբ պատահօրէն իրարու քով բերել մարդիկ և զանոնք լծել կանոնաւոր աշխատանքի»:⁶

«Սիոն»ի յաջորդական թիւերով մեր լոյսին բերելիք վաւերագիրները անմիջակաւնօրէն կ'առնչուին Պատրիարքին նշած ժողովներուն:

Չանոնք Ամեն. Նուրիան Պատրիարք Մանուկեանի բարեացական կարգադրութեամբ լուսանկարած ենք Երուսաղէմ կարճատեւ այցելութեան մը ընթացքին, օգտուելով այն դիւանաթուղթերէն, որոնք ապահովական նկատառումներով Պոլսոյ Պատրիարքարանէն փոխադրուած էին Մարսել և այնուհետեւ հանգրուանած՝ Երուսաղէմ, ուր Չաւեն Արք. Տէր Եղիայեան խնդրած էր անոնց առաքումը՝ իր յուշերը վաւերական տուեալներով ներկայացնելու համար:

Ներկայացուելիք ատենագրութիւնները կը թուին ըլլալ Ազգային Ժողովի քարտուղարին կողմէ գրառուած սեւագրութիւններ, որոնք որոշապէս տղագրութիւններ չեն և շատ հաւանաբար ժողովականներու ելոյթներուն «իմաստը նշանակող» գրառումներ են, դատելով 4 Յուլիս 1919-ին գումարուած նիստի ընթացքին Տոքթ. Ա. Բարսեղեանի յայտարարութենէն: Անոնք կրնան լաւագոյն ձեւով վերարտադրած չըլլալ ժողովականներուն գործածած արտայայտութիւնները, որոնք բառացիօրէն թուրքին յանձնուած ըլլալու պարագային



S. Զատեն Պատրիարք Տէր Եղիայեան

կրնային անլի ամբողջական ու հարազատ ձեռով ներկայացնել ենթականերն ու իրենց կեցուածքները, մանաւանդ որ մէկէ անլի անգամ ակնարկութիւն կ'ըլլայ շրնթերցուած ատենագրութիւններու, որոնք վաւերացուելու նպատակով ընթերցուելու պարագային կրնային ենթադրաբար դուր բանալ ճշդումներու:

Ասով հանդերձ, վաւերաթուղթերուն մէջ կան էջեր, ուր կը տեսնենք զանազան ձեռագրերով ճշդումներ, գորս կը մատնանշենք իրենց տեղին: Այս ուղղումները կրնան կատարուած ըլլալ իրենց ըսածին հարազատօրէն արձանագրուած ըլլալու մտահոգութիւնը ունեցող ժողովականներու կողմէ:

Հրատարակելի ատենագրութիւնները կարեւոր լրացում մը կը նկատենք «Պատրիարքական Յուշերս» հատորին: Անոնք երեսան կը հանեն հետաքրքրական մանրամասնութիւններ և կը ծառայեն անլի լաւ պատկերացնելու ժամանակի մտայնութիւնները, հոգեխառնութիւնները, երեսփոխանական խմբակցութիւններու եւ կուսակցութիւններու կեցուածքները, վերապրող հայերու դիմագրաւած նոր մարտահրաւերները, թուրքերու շարունակած հայաջինջ քաղաքականութիւնը, Համաձայնական երկիրներու վերաբերումները, եւ այլն:

Վստահ չենք թէ մեզի ներկայացուած շատ կարճ ժամանակամիջոցին յաջողած ենք ապահովել պատճենները 1919-1922 շրջանի

նիստերու բոլոր ատենագրութիւններուն, բայց անլի չձգձգելու համար անոնց հրատարակութիւնը, որոշեցինք այնուամենայնիւ լոյսի բարիքին յանձնել ինչ որ կրցած էինք հաւաքել:

Նպատակ ունենալով հետագային հատորի մը մէջ ամփոփել այս ատենագրութիւնները, ապագայ ընդարձակ ծանօթագրութիւններու հաշուոյն հոս կը բաւարարուինք նուազագոյնով:

Անկիւնատր փակագիծերու մէջ տուած ենք համապատասխան փաստաթուղթերու ճակատը գտնուող թուահամարները և կատարած ենք կէտադրական ու խիստ հազուադէպ ուղղագրական փոփոխութիւններ:

1 Զատեն Արքեպս., «Պատրիարքական Յուշերս-Վտենագրութիւններ եւ Վկայութիւններ», Հրատարակութիւն ք. 7 Մտաւորական Սպասարկութեանց Գրասենեակի, Տպ. Նոր Աստղ, Գահիրէ, 1947:

2 Նոյն, էջ 277:

3 Ակնարկութիւն Քաղաքական եւ Կրօնական Ժողովներու:

4 Իմա՛ գործակիցները:

5 Նշու. Աշխտ., էջ 278-279:

6 Նշու. Աշխտ., էջ 279:

[57]

ԱԶԳ. ԺՈՂՈՎ

ՆԻՍ

27 Յունիս 1919

ՆԱԽԱԳԱՀ.- Ս. ՊԱՏՐԻԱՐԷ

ԱՏԵՆԱՊԵՏ.- ՍՏԵՓԱՆ ԷՖ. ԳԱՐԱՅԵԱՆ

(Ատենանը բացուեցաւ ի ներկայութեան 48 երեսփոխաններու, որոց թիւը յետոյ յանգեցաւ 50-ի)

ԱՏԵՆ. ԷՖ.- Ատենանը բացուած է: Մեր ներկայ երեսփոխաններու թիւն է 95, որոց 75-ը Պոլիս կը գտնուի եւ 20-ը արտասահման կամ Պոլսէն բացակայ: Հետեւաբար ժողովին օրինական մեծամասնութիւնն է 48. այսօր ալ նոյն թիւը ունենալով կրնանք ձեռնարկել աշխատութեան:

ՀԵՌԱԳԻՐ ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ ԲԱՇԱՅԻ

ԱՏԵՆ.- Ինչպէս կը յիշէք, մեր վերջին նիստին շնորհակալութեան հեռագիր մը ուղղած էինք Պօղոս Նուպար Բաշայի իր ազգանուէր ջանքերուն համար: Այս հեռագրին պատասխանած է հետեւեալ կերպով:

(Պատճեն ֆրանսերէն հեռագրի)

ՉԱՅՆԵՐ.- Հայերէն թարգմանութիւնն ալ պէտք է կցէք:

(Ատենապետ Էֆ. կարդաց հետեւեալ հայերէն քարգմանութիւնը)

«Այս պահուս կը ստանամ Ձեր 8 Ապրիլ թուակիրը, որ խորապէս կը յուզէ զիս: Այս առթիւ կ'արտայայտեմ իմ երախտագիտութիւնս ձեզ և ամբողջ ժողովին»:

ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ

(Այս հեռագիրը ընդունուեցաւ ծափերով):

ԱՏԵՆ.- Ինչպէս գիտէք, այսօր հրաւիրուած ենք նկատողութեան առնելու Քաղ. Ժողովի հրաժարականը:

ՏՐ. ԹԷՐԶԵԱՆ ԷՖ.- Քաղ. Ժողովի հրաժարականէն առաջ կարելոք է որ այս ժողովը ստանայ իր կանոնական կազմը, մանաւանդ ներկայ պատգամաւորներու մէջ, հետեւաբար կ'առաջարկեմ որ մնայուն դիւան ընտրենք եւ ձեռնարկենք գործի:

Յ. ԴԱՐԲԻՆԵԱՆ ԷՖ.- Կը կրկնեմ:

Ա. ԱԼՊՕՅԱՃԵԱՆ.- Առաջարկը օրինական է. դիտողութիւն չի կրնար ըլլալ:

[58]ՏՐ. Ա. ԲԱՐՍԵՂԵԱՆ.- Ընտրութեան ձեռնարկելէ առաջ, պիտի խնդրեմ ժողովէն որ նախ եւ առաջ լսէ իմ առաջարկս ու յետոյ որոշում տայ: Ժողովը ասկէ առաջ իր մէկ գումարման մէջ, իրական մեծամասնութեան վրայ 5 անդամներու ներկայութեամբ նիստ գումարելու որոշում տուեր է: Իր այս քայլը սահմանադրական ռեւէ օրէնքի եւ տառի առջեւ չէր արդարանար, այլ հետեւանք էր պետքին ու այդ պատճառաւ չէր հանդիպեր ռեւէ ընդդիմութեան: Այս վարկենին, երբ կը գումարուինք եւ օրինական մեծամասնութեան խօսք կ'ըլլայ, պետք կը զգամ յիշեցնելու մանաւանդ մեզմէ պակտող այն անդամները, որոնք վերջին 5 տարիներու եղեռնին զոհերը եղան, փոխելով նաեւ խմբակցութիւններու բնական վիճակը: Փարիզի խորհրդակցութեանց մէջ նկատողութեան առնուեցաւ նաեւ հայութեան թիւի խնդիրը, որուն մօտեցան ոչ միայն նիւթական այլ եւ բարոյական տեսակետով ու հիմ բռնուեցաւ ոչ թէ հայութեան ներկայ թիւը, այլ եւ պատերազմէ առջի թիւը: Այս սկզբունքը ընդունուեցաւ ոչ միայն համագումարի անդամներու կողմէ, այլ և անոնց կողմէ, որոնք ի միջի այլ խնդիրներու պաշտօն ունէին լուծել հայկական խնդիրը: Եւ արդէն առանց ասոր կարելի չէր մօտենալ արդարութեան, որովհետեւ հակառակ քայլ մը պիտի նշանակէր արդարացնել ռճրագործները:

Այս տեսակետով ներկայ պարագային մէջ նկատողութեան պետք է առնուէին մեր մեծ

նահատակները եւ ընկերները: Այն խմբակցութիւնը, որուն կը պատկանիմ ես, իր որոշ տեսակետները ունի սահմանադրութեան մասին և անոր գլխաւորներէն մէկն է ներկայացուցչական տեսակետը: Այսօր Ազգ. Ժողովը ատելի գրկուած է ընդհանուր ազգի ներկայացուցչութիւնը ունենալու հանգամանքէն, հետեւաբար ես կը բերեմ այսօր հետեւեալ առաջարկը. Ազգ. Ժողովը պետք է գտնէ որոշ ձեւ մը, որ լրացնէ իր կազմը և վերականգնէ փոխադարձ յարաբերութիւնները: Այստեղ ներկայ գտնուող երեսփոխանները պիտի գնահատեն հարկաւ այս բացայայտօրէն արդար առաջարկը, որովհետեւ այս առաջարկը չընդունիր պիտի նշանակէր արդարացնել գործուած այդ ռճիրը...

ՉԱՅՆԵՐ.- Կը բողոքենք...

[59]ՏՐ. Ա. ԲԱՐՍԵՂԵԱՆ (չարունակելով).- Կամ առնուազն օգտուիլ անոր յառաջ բերած նոր դրութենէն: Հետեւաբար նախ քան այդ առաջարկի քննութիւնը, ոչ կարելի է նոր ընտրութեան անցնիլ եւ ոչ ալ ուրիշ խնդիրներով զբաղիլ:

Հ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ ԷՖ.- Ազգ. Ժողովը իր ատենադրութիւնները ունի, որով իր յարգանքի արտայայտութիւնը կը մատուցանէ նոյնիսկ անհատաբար մեկնող երեսփոխաններուն, քաղաքական ինչ դաւանութեան ալ պատկանին անոնք: Եւ այս ժողովը իր նահատակուած ընկերներու յիշատակին նուիրեց առանձին եւ միակ նիստ մը, որուն նմանը չունի իր տարեգրութիւններուն մէջ: Ասիկա իր ընկերներուն յիշատակին փառաբանման մասն էր: Գալով մեծամասնութեան խնդրոյն, Ազգ. Ժողովը 1866-էն ի վեր կը գործադրէ իսկական մեծամասնութեան սկզբունքը, հիմնուելով իր իրական թիւին վրայ և այդ կերպով Պատրիարքի ընտրութիւնները կատարած է 40-45 ներկայացուցիչներով: Ի՞նչ էր ասոր պատճառը, որովհետեւ դիտուեցաւ որ երբ ժողովը կառչած մնայ օրէնքի տառին, ամլութեան պիտի դատապարտուի իր ամբողջ գործունէութիւնը եւ հետեւաբար ազատ նկատեց ինքզինքը մեկնելու օրէնքին այդ տրամադրութիւնը: Այսու հանդերձ, ժողովին ամբողջացման առաջարկը օրինաւոր է: Ես կ'առաջարկեմ որ յանձնաժողով մը կազմուի, որպէսզի ժողովին ամբողջացման ձեռնարկուի եւ պակասմաներու թիւը լրացուի:

Գ. ՍԻՄԶԷՇԵԱՆ ԷՖ.- Ժողովէն պակասած անդամներու տեղ նորեր ընտրել անհրաժեշտ է վարելու համար գործերը, բայց

անկէ առաջ անհրաժեշտ կը նկատեն ընտրել ժողովիս դիւանը, որ եթէ ասկէ առաջ ընտրուած ըլլար, այսօր Պողոս Բաշայի հեռագիրը իր քարգճանմութեամբ մեզ կը ներկայացնէր, քանի որ մեր լեզուն հայերէն է: Կ'առաջարկեն անմիջապէս կատարել դիւանի ընտրութիւնը, որ լրանալէ յետոյ կրնայ կազմուիլ յանձնաժողովը:

Ս. ՆԱԹԱՆԵԱՆ ԷՖ.- Ես ալ պէտք պիտի զգացնէի նախ դիւանի ընտրութեան, յաջորդին ալ կրնայ կատարուիլ Քաղ. Ժողովի ընտրութիւնը:

Հ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ ԷՖ.- Սկզբունքի խնդիր մը երեւան կու գայ: Կ'առաջարկուի որ ժողովը նախ իր դիւանը ընտրէ և յետոյ կազմին լրացման գործով զբաղի: Կրնանք ընտրել նախ յանձնաժողովը, որ այս երկու կէտերու մասին իր քննութիւնը ներկայացնէ ժողովին:

[60]ՏՐ. Ա. ԲԱՐՍԵՂԵԱՆ.- Փոքր քիւրի-մացութիւն մը կայ, գոր կը փափաքին ուղղել: Ժողովին ներկայ կազմը ռեւէ կերպով չի կրնար արդարացնել կատարուելիք ընտրութիւնները, այնպէս որ կը ստիպուին առաջարկելու իմ ընկերներուս, որոնք կը բաժնեն իմ տեսակէտը, որպէսզի կազմեն յանձնաժողով մը եւ մէկ երկու օրուան մէջ բերէ իր տեսակէտները, յետոյ կրնայ ընտրութիւն տեղի ունենալ: Առանց ասոր կարելի չէ ընտրել նոր Քաղ. Ժողով:

ԱՏԵՆ ԷՖ.- Ժողովին խորհրդակցութիւնները ամփոփելով կը տեսնենք որ նախ կը փափաքին դիւանի ընտրութիւն կատարել եւ յետոյ յանձնաժողով մը անուանել ժողովին կազմը լրացնելու համար:

ՉԱՅՆԵՐ.- Այո, այո:

ԱՏԵՆ ԷՖ.- Ուրեմն պիտի ձեռնարկենք դիւանի ընտրութեան:

(Քուէարկութեան եւ քուէամարի արդիւնքը եղաւ հետեւեալը.)

(Ա. ատենապետի ընտրութեան քուէի մասնակցեցան 48 երեսփոխաններ):

Քուէ

Պարզեւ ԷՖ. Փափագեան 27

Ստեփան ԷՖ. Գարայեան 13

(Բ. ատենապետի և ատենադպիրներու ընտրութեան մասնակցեցան 44 քուէարկու):

Յակոբ ԷՖ. Պահրի 37

Ատենադպիրներ

Կոպեռնիկ ԷՖ. Խաչատուրեան 43

Գեորգ ԷՖ. Սիմքէլեան 36

Պ. ՓԱՓԱՋԵԱՆ ԷՖ.- Հազիւ վերադարձած տարագրութենէ, ուր ես կ'ողբայի բոլոր

հայութեան կոտորումը, ու կը յիշէի մասնատրապէս իմ այն ընկերները, որոնք ինձմէ առաջ քախտակից եղած էին ինձ ու անհետացած, երբեք մտքս չէր անցներ որ օր մը ձեր պատուաբեր քուէներով պիտի հրաւիրուին գրաւելու այս աթոռը: Կը խոնարհիմ ձեր քուէին առջեւ և կը ձեռնարկեմ այս պաշտօնին: Բնական է որ այս հասակին մէջ պէտք չէ կորով փնտռել, այլ եթէ կարենամ փոքրիկ ծառայութիւն մը մատուցանել, [61]քաւական նկատուի այն ինձ համար: Արդար քննադատութիւնը փափաքելի է ինձ համար ամէն ատեն, միեւնոյն ատեն փափաքելի է նաեւ որ Պատժ. երեսփոխանք դիրացնեն դիւանի աշխատութիւնը:

Քիչ առաջ Ազգ. Ժողովը կարծեմ որոշեց յանձնաժողով մը կազմել, որպէսզի երեսփոխանական ընտրութեան համար ձեւ մը բերէ հոս, եթէ կ'ուզէր դադար մը տանք, որպէսզի համաձայնութեամբ ցանկ մը բերուի:

Յ. ՊԱՀՐԻ ԷՖ.- Ես կը խորհիմ որ մեր կատարելիք ընտրութիւնը սահմանադրական ընտրութիւն մը ըլլալու համար ընտրութիւն պէտք է կատարել, ինչ որ կարելի չէ եւ ասկէ զատ ռեւէ ձեւով երեսփոխաններու թիւը լրացնել հակասահմանադրական պիտի ըլլայ, ուստի կ'առաջարկեմ որ իբրեւ անդամ հրաւիրուին հայ կաթողիկ եւ հայ բողոքականներէն արդէն ընտրուած ներկայացուցիչները, որով կը լուծուի թէ՛ մեծամասնութեան խնդիրը եւ միեւնոյն ատեն Ազգ. Ժողովը բոլոր ազգ. հատուածները ներկայացնող իրական Ազգ. Ժողովի մը հանգամանքը կը ստանայ: Ուստի առանց ժամանակ կորսնցնելու անոնք ալ հրաւիրենք եւ անոնց ներկայութեան ընտրենք այդ ժողովը:

Հ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ ԷՖ.- Եթէ ամէն վայրկեան նոր առաջարկ մը քննուի, գործ տեսնել կարելի չ'ըլլար: Կ'առաջարկեմ ներկայացեալ անձերով կազմել յանձնաժողովը:

Հ. ԽՈՍՐՈՎԵԱՆ ԷՖ.- Կ'առաջարկեմ Խօճասարեան եւ Տ. Մովսէսեան ԷՖ.ները ղնել այդ յանձնաժողովին մէջ:

ԱՏԵՆ ԷՖ.- Յանձնաժողովը կազմուեցաւ հետեւեալ կերպով՝ Տեարք Դաւիթ Տ. Մովսէսեան, Հ. Խոսրովեան, Հ. Խօճասարեան, Պ. Խօրասանճեան, Ա. Հալաճեան և Ա. Բարսեղեան: Ժողովը կը հաւանի՞ այս կազմութեան:

ՉԱՅՆԵՐ.- Այո, այո:

Ա. ԲԱՐՍԵՂԵԱՆ ԷՖ.- Այս խնդիրը շատ ստիպողական է, հետեւաբար կ'առա-

ջարկեմ բացառիկ Ազգ. Ժողով մը գումարել: Չեզի խօսք կու տամ զիշեր ցերեկ աշխատելով մինչև Երեքշաբթի հասցնել, ու նոյն օրը նիստ ընելով, այս խնդիրը կը լրացնենք:

Գ. Տ. ՄՈՎՍԷՍԵԱՆ ԷՖ.- Կ'ընդունիմ որ այս յանձնաժողովը կարելի եղածին չափ փութով բերել իր աշխատութեան արդիւնքը, բայց եթէ այսպիսի սկզբունք մը որդեգրենք [62]եւ մինչև այն ատեն այս ժողովը չկատարել ոեւէ աշխատութիւն, ընդունած կ'ըլլանք որ այս ժողովին կազմը թերի է, պակաս է, մինչդեռ ժողովս իր կատարեալ կազմին մէջ է և պետք է զբաղի այն ամէն գործերով, որոնք իր իրաստութեան կը պատկանին:

ՏՐ. Ս. ԹԷՐԶԵԱՆ ԷՖ.- Յանձնաժողովը կրնայ ուսումնասիրել խնդիրը, այլևս խնդիրը մեզմէ ելած է, որքան կարելի է շուտով պետք է ներկայացնէ արդիւնքը:

Յ. ՊԱՀԻԻ.- Իմ առաջարկիս մասին ժողովին որոշումը ի՞նչ է. չէք կրնար մերժել զայն:

ՏՐ. Ա. ԲԱՐՍԵՂԵԱՆ.- Կարծեմ թէ նկատողութեան չառնելը ճիշդ չէ: Պ. Պահրի սկզբունքը չի մերժեր, այլ լրացած երեսփ. ժողովի գոյութեան պետք կը զգացնէ, որպէսզի ժողովին աշխատութիւնները աւելի արդիւնատու ըլլան:

Հ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ ԷՖ.- Երբ յանձնաժողովի մը ընտրութեամբ կը փակուի խնդիրը, այս պարագային մէջ այլևս առարկութիւն և նոր առաջարկ չի կրնար ըլլալ:

ԱՏԵՆ ԷՖ.- Ուրեմն այս խնդիրը այլևս փակուած է:

Յ. ԴԱՐԲԻՆԵԱՆ ԷՖ.- Կարելի չէ՞ր արդեօք որ Կրօն. Ժողովն ալ հրաժարէր և Քաղ. Ժողովոյ հետ ընտրուէր:

ՕՐԱԿԱՐԳ

ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ՔԱՂ. ԺՈՂՈՎՈՅ

ԱՏԵՆ ԷՖ.- Դիւանիս վրայ կը գտնուի վարչութեան ատենապետ Տր. Դաիթեան Է.Ֆ.ի ստորագրութեամբ հրաժարական մը:

(Պատճեն)

ԱՏԵՆ ԷՖ.- Ասկէ զատ կան նաեւ Քաղ. Ժողովի անդամներու կողմէ անհատապէս ներկայացուած հրաժարականները:

Յ. ԴԱՐԲԻՆԵԱՆ ԷՖ.- Որովհետեւ այս ժողովը վարչապետութեան ձեռով կազմեց Քաղ. Ժողովը, պետք չկայ նկատի առնելու Քաղ. Ժողովի անդամներուն անհատապէս տուած ըստարականները:

Գ. Տ. ՄՈՎՍԷՍԵԱՆ ԷՖ.- Քաղ. Ժողովի հրաժարականը պարզ հրաժարական մ'է, հետեւաբար կրնայ ընդունուիլ:

ԱՏԵՆ ԷՖ.- Ժողովը կ'ուզէ՞ լսել անդամներու հրաժարականները:

ՉԱՅՆԵՐ.- Կրնանք լսել:

(Ատենապետ Է.Ֆ. կարդաց Խօճասարեան, Հ. Խոսրովեան այլևս Սրենց ու Ամատունի Է.Ֆ.ներու հրաժարականները:)

[63]Գ. Տ. ՄՈՎՍԷՍԵԱՆ ԷՖ.- Այս հրաժարականներու մէջ կան կարգ մը առաջարկներ, որոնք ազատ էին ներկայացնելու դիւանին: Իրենց՝ մեզմէ չընտրուած ըլլալով, չենք կրնար նկատողութեան առնել իրենց խնդիրը:

Ե. ՊԵՅԱԶՃԵԱՆ ԷՖ.- Այդ գրեթե մէջ առաջարկներ կան. ես պետք կը տեսնեմ որ երբ նոր վարչութիւնը ընտրուի և գործի ձեռնարկէ, անոր ներկայացուի անոնք:

ՏՐ. Ս. ԹԷՐԶԵԱՆ ԷՖ.- Այս հրաժարագիրը պատճառաբանեալ չենք կրնար ընդունիլ: Փորձը ցոյց տուաւ որ նախկին ձեռով ընտրուած ժողով մը չի կրնար տեսական գոյութիւն ունենալ, ուստի մեր օրինաւոր քուէներով ընտրենք վարչութիւնը:

Ս. ՍՐԵՆՑ ԷՖ.- Քիչ առաջ ըստեցաւ որ մենք մեր հրաժարականով առաջարկ կը բերենք. մենք առաջարկ չենք բերեր. եթէ բերել հարկ ըլլայ, գիտենք թէ ի՞նչ կերպով կը բերուի այն:

Ս. ԳԱՐԱՅԵԱՆ ԷՖ.- Մենք անցեալ անգամ Ս. Պատրիարքին առաջարկութեամբ վարչապետ մը ընտրեցինք, իրաւունք տալով անոր որ որոշէ իր ընկերները: Հիմա ընտրուած վարչապետը այստեղ հրաժարական կու տայ: Պատճառաբանութիւններով զբաղելու պետք մը չեմ տեսներ: Կրնանք որոշում տալ ընտրութեան:

ԱՏԵՆ ԷՖ.- Ուրեմն անոնք որ Քաղ. Ժողովի հրաժարականը կ'ընդունին, ձեռամբարձ յայտնեն իրենց հաւանութիւնը:

(Ժողովը ընդունելով Քաղ. Ժողովի հրաժարականը, որոշեց յառաջիկայ Ուրբաթ կատարել նոր Քաղ. Ժողովի ընտրութիւնը:)

ԱՌԱՋԱՐԿ Ե. ՊԵՅԱԶՃԵԱՆ ԷՖ.Ի

ԱՏԵՆ ԷՖ.- Ժողովը փակելէ առաջ, վերջին պահուն դիւանիս տրուած հետեւեալ առաջարկը իր կարեւորութեան պատճառով ձեռ ուշադրութեան կը յանձնեմ:

(Ատենապետ Է.Ֆ. կարդաց հետեւեալ առաջարկը)

Ե. ՊԵՅԱԶՃԵԱՆ ԷՖ.- Խորին յուզու-

մով կու գամ իմ տկար ձայնս բարձրացնել գաւառի այն անապահովութեան համար, որուն արձագանգը կ'ըլլայ լրագրութիւնը ամէն օր: Այն արուեստակեալ միջոցները, որոնք տեղի ունեցան գաւառներու մէջ, գրգռեցին այն ամբոխը, որ ճիհատը հրատարակեց պատերազմէն առաջ եւ սիսթեմաբի սպանութիւններ կազմակերպեց:

[64] Այսօր այն է վիճակը ինչ որ էր երէկ, բայց այդ մտք ոյժերը չե՞ն գիտեր թէ աշխարհի վրայ ինչ փոփոխութիւններ եղած է[են]: Հեռագիրը մեզի կ'իմացնէ նորանոր դէպքեր, որոնց առջեւ շուարած կը մնանք թէ արդեօք այսքան արիւն է գոհողութենէ վերջը, տակաւին ապահով ապրելու հնարաւորութիւնը ձեռք չե՞նք բերած: Քչեմանսօ կ'ըսէր որ ինք 48 տարիէ ի վեր կը սպասէր այսօրուան. մենք 500 տարիէ ի վեր կը սպասենք և տակաւին չենք հասած մեր փափաքին ու ջարդերը կը շարունակուին: Պէտք է մեր բողոքը բարձրացնենք և ապահովութիւն պահանջենք: Թուրքիոյ ընդի. դատախազը հայ ազգը կ'ամբաստանէ հրապարակաւ և նոյն նպատակաւ ձայն կը բարձրացնէ թորք մամուլն ալ ու ներքին ոյժերը կը խլրտին: Իմ համոզումս այն է որ ամէն վարչութեան անդամ, ով ալ ըլլայ այն, աշխատած է: Ես կ'առաջարկեմ ուղղակի կերպով բողոքել այս անգամ այս կացութեան դէմ, մանաւանդ անոր համար որ հայութեան դահիճները անպատիժ կը մնան:

ԱՏԵՆ ԷՖ.- Կը հրաւիրեն Տ. Դաւիթեան ԷՖ.ին որ բացատրութիւն տայ այդ մասին:

ՏՐ. ԴԱԻԹԵԱՆ ԷՖ.- Պէյազճեան ԷՖ.ի խօսքերը շատ կարեւոր են: Ջինադադարէն յետոյ բաւական հանդարտ օրեր անցուցինք, բայց հետզհետէ փոխուեցան քաղաքական անցուդարձերը: Ստոյգը այն է որ ուր որ օտար ոյժ չկայ, հոն շարունակական սպառնալիք կայ: Թէև ընդհանուր ջարդի վախ չկայ, բայց մասնակի փորձեր կան և կ'աշխատին քաղաքական հաշիւներով սպառնալիքի տակ պահել ժողովուրդը: Վարչութիւնը մինչև ցարդ բողոքի սահմանին մէջ մնաց և դիմեց հոն ուր որ պէտք է, ըլլա՛յ [Ազգային] Պատուիրակութեան մօտ, ըլլա՛յ հոս. ամէնքն ալ ազգու դիմումներ էին: Իմ կարծիքս այն է որ այս դիմումները քիչ մը արհեստական նպատակով եղած են, այնպէս որ այս կէտը եթէ չենք կրնար հաստատել, չենք կրնար ալ մերժել: Իրաւունք ունինք հաւատալու որ ասոնք քաղաքական ճնշում մը բանեցնելու համար ի գործ կը դրուին: Քաղ. ժողովը իր սահմանին մէջ զբաղեցաւ այս

խնդիրներով, սակայն պատրաստ ենք ուրիշ թելադրու- քիւններ ալ լսելու, եթէ ըլլան:

Յ. ԴԱՐԲԻՆԵԱՆ ԷՖ.- Ես կ'առաջարկեմ որ այս ձեռնարկները ըլլան Հայկական Պատուիրակութեան միջոցով, որովհետև Ազգ. Պատուիրակութեան մանտա տրուած է արդէն այդ նպատակով:

[65] Հ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ ԷՖ.- Վարչութեան ատենապետին տուած բացատրութիւնները բաւականէն արեւի վրդովեցուցիչ են եւ ծաւալական ջարդ մը ըլլալու երկիւղ կը ներշնչեն, որքան ալ խաղաղ և բնականոն վիճակի մէջ ցոյց տրուի վիճակը: Տրուած ըլլալով թորք հոգեբանութիւնը եւ անցեալին մէջ կրկնուած եղեռներու շարքը, իրաւունք ունի այս ժողովը յուզուելու և ազգային գոյութիւնը ահաւոր վտանգի մը նախօրեակին մէջ նկատելու: Միեւնոյն ատեն, խնդրոյն կարեւորութիւնը լրջօրէն նկատի առնելու համար, կ'առաջարկեմ մասնաւոր նիստ գումարել միակ օրակարգ ունենալով ապահովութեան խնդիրը:

ԱՏԵՆ ԷՖ.- Եթէ ժողովը կ'ուզէ, մասնաւոր նիստ մը գումարենք այս խնդրոյն համար:

ՉԱՅՆԵՐ.- Յառաջիկայ Կիրակի օր, ի ներկայութեան հայ հոռմէական և հայ բողոքական ժողովականաց:

ԱՏԵՆ ԷՖ.- Ուրեմն կը գրենք Ս. Պատրիարքին որ հրաւերք ուղղէ անոնց:

(Ատենան վակուեցաւ ժամը 12-ին):



Պոլսոյ Պատրիարքարանի շէնքը



ԱՏԵՆ ԷՖ.- Ինչպէս գիտեք, անցեալ Կիրակի օր Համագումար [Ժողով]ի նիստ մը տեղի ունեցաւ ազգային կարեւոր խնդրոյ մը մասին եւ ժողովը որոշումներ տուաւ՝ գործադրութիւնը յանձնելով երեք հոգեւոր պետերու եւ վարչական ժողովներու: Կը փափաքինք որ վարչութեան ատենապետը բարեհաճի այդ մասին տեղեկութիւն մը հաղորդելու:

ՏՐ. ԳԱԻԻԹԵԱՆ.- Համագումարի որոշման համաձայն, հեռագիրներ ուղղեցինք Փարիզ Հաշտութեան Ժողովին եւ [Ազգային] Պատուիրակութեան, ինչպէս նաեւ Ամերիկայի հանր[ապետութեան] նախագահին:

ՏՐ. Ա. ԲԱՐՍԵՂԵԱՆ.- Կ'առաջարկէի որկել նաեւ ամերիկեան Գոնկրէին անպատճառ:

ՁԱՅՆԵՐ.- Այո, այո, կարելի՞ է տեսնել այդ գիրը:

ՆԱԽ.- Չեմ գիտեր թէ այդպիսի դիւանագիտական թուղթեր այսպէս հրապարակաւ կրնա՞ն կարդացուիլ:

ՏՐ. ԳԱԻԻԹԵԱՆ ԷՖ.- Որոշումը եր հեռագիրները ուղղել [Փարիզի] Վեհաժողովին, [Ազգ.] Պատուիրակութեան, Գոնկրէին եւ Ժէրարին: Յետոյ հոգեւոր պետերու եւ մեր կողմէ կատարուած խորհրդակցութեան միջոցին որոշուեցաւ որ Գոնկրէին չորկուի:

Հ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ ԷՖ.- Այս ժողովին հեղինակութիւնը եւ իրաւասութիւնը պահպանելու համար փափաքելի է որ վարչութիւններ այս ժողովին որոշումները ճշգրիտ կերպով գործադրեն, իսկ եթէ գործադրութեան պահուն օրինական անտեղութիւն մը նշմարուի, վերստին բերեն ժողովին:

Ս. ՆԱԽ.- Ես այնպէս ըմբռնեցի որ այդ որոշումը գործադրելու պաշտօն ունեցող մարմինը լիազօր էր եւ հեռագիրները պիտի ուղղէր որու որ պէտք էր: Մենք ուղղեցինք այդ հեռագիրը անոր որ Ամերիկայի մէջ հայոց դատը պաշտպանելու դերը ստանձնած է: Ըստեցաւ մեզի որ Գոնկրէն քաղ. խնդիրներով չ'զբաղիր:

ՏՐ. ԳԱԻԻԹԵԱՆ.- Մէկ խօսքով, Գոնկրէին հեռագիր ուղղելու պէտք չտեսնուեցաւ այն նկատմամբ որ միւս տերութեանց արժանապատուութիւնը չվիրաւորէ:

[49]ՏՐ. Ա. ԲԱՐՍԵՂԵԱՆ.- Հայկական խնդրոյն մէջ Գոնկրէին դերը ամէն ոք գիտէ, եւ անոր ուղղուած հեռագիր մը ո՛չ մէկուն արժանապատուութիւնը կը վիրաւորէ. հետեւաբար

կը կարծեմ որ պէտք է ուղղուէր այդ հեռագիրը եւ այդ մարմինը պէտք չէր որ զեղչէր:

Գ. Տ. ՄՈՎՍԷՍԵԱՆ ԷՖ.- Այս հեռագիրներու խմբագրութիւնը և մատուցման եղանակը որոշելու գործը յանձնեցինք մասնախումբին, անոնք ալ զանազան տեղեր ուղղեր են, բայց պաշտօնական Գոնկրէին չեն որկեր: Մենք բանի որ հաւանեցանք ու իրենց յանձնեցինք այս գործը, այլեւս մեր շահերուն համապատասխան չեմ նկատեր վիճաբանութիւն բանալը. հետեւաբար պէտք է փակենք այս խնդիրը:(Ատենապետ ԷՖ. բուէի դնելով այս առաջարկը, մեծամասնութիւնը որոշեց փակել խնդիրը)

ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ԿՐՕՆ. ԺՈՂՈՎԻ

ԱՏԵՆ ԷՖ.- Կրօն. Ժողովը հրաժարական մը ունի, պիտի կարդանք:(Ատենապետ ԷՖ. կարդաց հետեւեալ հրաժարականը)

ԱՏԵՆ ԷՖ.- Այս հրաժարականին մասին որոշում տալու, ինչպէս նաեւ Քաղ. Ժողովի ընտրութեան խնդիրը անմիջապէս նկատողութեան առնելու համար մեծամասնութիւն չունինք տակաւին, մէկ երկու երեսփոխան եւս կը պակսի:

Հ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ ԷՖ.- Քաղ. Ժողովի ընտրութեան խնդիրը օրակարգի մէջ նշանակուել յետոյ, երեսփոխաններու այսօրուան բացակայութիւնը բաւական դատապարտելի պարագայ մ'է. կը փափաքիմ որ օրուան բացակաները հրատարակութեան տրուին, որպէսզի ժողովուրդը ճանչնայ իր մարդերը:

Գ. Տ. ՄՈՎՍԷՍԵԱՆ ԷՖ.- Դիւանդ պէտք է ուշադրութեամբ հետեւի բացականերուն եւ 3 անգամ ներկայ չգտնուողները հրաժարեալ նկատելով, նոր ընտրութեան հրահանգ տայ:

ԱՏԵՆ ԷՖ.- Եթէ կ'ուզէք մինչեւ մեծամասնութիւն գոյանալը կարդանք անցեալ նիստի ատենագրութիւնը, որ այսօրուան օրակարգին հետ ալ յարաբերութիւն ունի:(Ժողովին քարտուղարը կարդաց անցեալ նիստի ատենագրութիւնը)

[50]ՏՐ. Ա. ԲԱՐՍԵՂԵԱՆ.- Կարդացուած ատենագրութեան իմ մասին վերաբերեալ հատուածին մէջ սխալ արձանագրութիւն մը կայ: Ես իմ առաջարկս սահմանափակած էի միայն նահատակեալ երեսփոխաններու, յիշատակելով մասնաւորապէս սա կէտը որ լրացումները պէտք է կատարուին այն ձեւով որ

վերահաստատեն նախ քան պատերազմը գոյութիւն ունեցող Ազգ. Ժողովի խմբակցութեանց բուական փոխադարձ յարաբերութիւնները: Ես այս առաջարկս երկու անգամ ալ կրկնեցի, հետեւաբար պէտք է սրբագրուի այդ կերպով, որպէսզի ատենագրութիւնը իրական պատկերը ըլլայ այս ժողովին: Երկրորդ, իմ բերանս դրուած է պակասած երեսփոխանները լրացնելու բացատրութիւնը, մինչդեռ ես այդ իմաստով ռեւի խօսք չեմ ըսած:

Գ. Տ. ՄՈՎՍԷՍԵԱՆ ԷՖ.- Կը ցաւիմ որ անցեալ նիստին երբ ես եկայ, յանձնաժողովի կազմութեան որոշում տրուած էր, այնպէս որ եղած խօսքերը չեմ յիշեր, դիւանին ալ պաշտօնի ձեռնարկելէ առաջ ռեւի պաշտօնագիր չտացանք: Բայց Արամ ԷՖ. Հալաճեան ալ հասատեց թէ Պ. Բարսեղեան արտայայտուած է ճիշդ այդ կերպով: Յետոյ դիմեցի «Ճակատամարտ»ի այն օրուան թիւին, որուն մէջ ժողովին նկարագրութիւնը հրատարակուած է...

ՏՐ. Ա. ԲԱՐՍԵՂԵԱՆ.- «Ճակատամարտ»ը ժողովին պաշտօնական արձանագրութիւնը չէ:

Գ. Տ. ՄՈՎՍԷՍԵԱՆ ԷՖ.- (Շարունակելով) Բայց եթէ Պ. Բարսեղեանի ըսածին պէս ալ ըլլայ, չեմ կրնար ընդունիլ բնաւ որ ժողովին համար այնքան էական խնդիր մը միակ առաջարկի ձեւով գայ այստեղ, և եթէ որոշ կազմակերպութեան մը անունով եղած է այս առաջարկը, կը կարծեմ որ ճիշդ չէր խտիր դնել միւս անդամներու համար, քանի որ օրէնքին առջեւ պակասած երեսփոխաններու թիւը 20 ըլլայ թէ մէկ ըլլայ, միեւնոյնն է և պակասած երեսփոխանին տեղ գործադիր իշխանութեան միջոցաւ ընտրութիւն կը կատարուի, ուրիշ կերպով չի կրնար ըլլալ: Եթէ իմ յարգելի պաշտօնակիցս իր բացատրած ձեւով բերած է իր առաջարկը, ասիկա օրէնքի տառին և ոգիին հակառակ է եւ ասկէ զատ, մասնախումբ կազմելու ալ պէտք չէր մնար, որպէսզի ժողովի լրացման աշխատութեան համար ձեւ մը գտնէ:

[51] ԱՍԵՆ. ԷՖ.- Ես ալ ատենագրութեան մէջ արձանագրուած ձեւով հասկցած եմ, քանի որ նահատակուած ըլլայ թէ բնական մահով մեռած, միեւնոյնն է, անոնց տեղը պարապ է: Բայց Պ. Բարսեղեան կ'ըսէ թէ ես այդ կերպով չըսի, այլ իր առաջարկը կը վերաբերէր նահատակուած երեսփոխաններուն: Ժողովը սակայն այդպիսի որոշման մը

չանգեցաւ ի վերջոյ, չեմ գիտեր թէ ժողովականը ինչպէս ըմբռնած են:

ՏՐ. Ա. ԲԱՐՍԵՂԵԱՆ.- Քանի որ ատենագրութիւնը սղագրութեամբ չի գրուիր և իմաստը միայն կը նշանակուի, իմ խօսքերուս իմաստն ալ կրնայ փոխուած ըլլալ: Իմ այդ առաջարկէն յետոյ ռեւի կողմէ հակառաջարկ ներկայացա՞ւ և քուէարկուեցա՞ւ: Քանի որ այսպէս է, պէտք է ջնջուի ատենագրութեան պակասած երեսփոխաններու վերաբերեալ իմ խօսքերը:

Ա. ՀԱԼԱՃԵԱՆ ԷՖ.- Ես ալ կը հաստատեմ թէ անցեալ նիստի վիճարանութիւնը կը վերաբերէր նահատակեալ երեսփոխաններու թիւը լրացնելու խնդրոյն, որովհետեւ եթէ այդպէս չըլլար՝ ընտրական ձեւ մը գտնելու համար յանձնաժողովի կազմութեան պէտք չէր մնար: Այս խնդիրը երեսփոխանութեան թիւը լրացնելու խնդիրէն դուրս է:

Հ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ ԷՖ.- Այս ժողովը իր հեղինակութեանն ոչ մէկ բան կը զոհէ: Երբ օրակարգի մէջ կայ այս խնդիրը, իբրեւ օրակարգի խնդիր կարելի է նկատողութեան առնել և ընդհանուր լրացման առաջարկ ընել, սակայն օրինական է նաեւ որ ռեւի երեսփոխան իր խօսքերու սրբագրութիւնը ընէ:

Հ. ԽՈՍՐՈՎԵԱՆ ԷՖ.- Ես կը կրկնեմ Խօճասարեան ԷՖ.ի խօսքերը, որոնք շատ օրինական են: Ռեւի երեսփոխան մը իրատունք ունի իր խօսքերու սրբագրութեան եւ Պ. Բարսեղեան կ'ըսէ թէ ինք միայն նահատակեալ երեսփոխաններու վրայ խօսած է: Ժողովը ազատ է տալ իր որոշումը այդ մասին:

ԱՍԵՆ. ԷՖ.- Ուրիշ դիտողութիւն կա՞յ:

ՉԱՅՆԵՐ.- Ոչ: (Այս կերպով վաւերացաւ անցեալ նիստի ատենագրութիւնը):

[52] ԱՌԱՋԱՐԿ ՍԻՄԷԷՇԵԱՆ ԷՖ.Ի

ԱՍԵՆ. ԷՖ.- Գէորգ ԷՖ. Սիմքէշեան առաջարկ մը ունի, պիտի կարդանք: (Ատենապետ ԷՖ. կարդաց հետեւեալ գիրը) (Պատճեն)

ՉԱՅՆԵՐ.- Շատ բանաւոր է:

ԱՍԵՆ ԷՖ.- Ուրեմն յաջորդ Ուրբաթ դռնփակ նիստ մը գումարենք լսելու համար Դուրեան Ս.ի տեղեկատուութիւնը: Երկու երեսփոխանի պակաս ունինք օրակարգի անցնելու համար, անոնք ալ իրաւիրած ենք, եթէ 10 վայրկեան դադար ըլլայ, կը յուսանք որ գան եւ մեր աշխատութիւնները շարունակենք:



Ս. Աստուածածին Մայր Տաճարը
Պատրիարքարանի դիմացը

ՏՕԶ. ԲԱՐՍԵՂԵԱՆ.- Մինչեւ ե՞րբ պիտի սպասենք. կէսօր եղաւ:

Ե. ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆ ԷՖ.- Ասոր յանցանքը ոչ որ[ի] է, դրոսիւնն է յանցաւորը: Այսքան շատ խօսքեր, ձգձգումներ զգուանք առաջ կը բերեն և այսպէս ժողովի չեն գար: Շատ աւելի լաւ կ'ըլլայ որ փոխանակ այսքան շատ մարդով գործ տեսնելու, սակաւաթիւ մարդերով տեսնուէին գործերը: Ս. Պատրիարքին հետ եթէ մի քանի հոգիներ գործերը վարեն շատ աւելի լաւ կ'ըլլայ: (Մի քանի հոգիներ ոտքի կ'ելլեն մեկնելու)

ՆԱԽ.- Կը խնդրեմ ներկայ ժողովականներէն որ չմեկնին ասկէ մինչեւ որ այսօր աւարտենք վարչութեան կազմութիւնը: Մեր այս ընթացքը այն տպաւորութիւնը կ'ընէ ժողովրդեան վրայ թէ կացութեան փափկութիւնը զգալու վիճակին մէջ չենք գտնուիր: Այսպէս Ուրբաթ Ուրբաթ հաւաքուելով և ապարդիւն ցրուելով յետ, օգուտ յառաջ չի գար: Մեր շուրջը գտնուող ազգեր գիշերը ցերեկին խառնած՝ իրենց գործերը ահագին քայլերով առաջ կը մղեն, մինչդեռ մենք ամէն բան կը սպասենք Բարիզի Պատուիրակութենէն: Եթէ այս է մեր խորհածը, իրաւ որ շատ ողորմելի ենք մենք: Կը ցաւիմ որ այս ժողովը չ'զգար այդ ծանրութիւնը և թրքահայութեան դատին համար այնքան կարեւոր գործեր մէկ կողմ

դրած՝ նորէն կը յետաձգենք մեր նիստը, խորհելով թէ այս կամ այն խմբակցութեան 5 արոտ պիտի տրուի, թէ՞ 15 արոտ: Պէտք է գիտնանք թէ այս ժողովին դերը ազգին ընդհանուր գործերուն մէջ սահմանափակ է. եղած գործերը Քաղ. Ժողովի մէջ են: Յաջորդ նիստի ատենագրութենէն դատելով, կարելի է ենթադրել թէ կ'առաջարկուէր Փարիզի մէջ կայացած Հայ Ազգային Համագումարի նիստերէն նոր վերադարձած Եղիշէ Արք. Դուրեանին տեղեկատուութիւնը լսել: -----՞եւ անպատճառ այդ մարմինը պէտք է պաշտօնի գլուխ բերուի: Ամերիկեան [53] յանձնաժողովը Սուրիա կ'երթայ, հայկական նահանգներու վիճակն ալ պէտք է քննուի, անհրաժեշտ է որ ազգը գործադիր իշխանութիւն մը ունենայ զբաղելու պէտք եղած միջոցներով: Մեր գործերով թող Անգլիա, Ֆրանսա, Ամերիկա զբաղի ըսելով ամէն բան երեսի վրա՞ պիտի թողունք: Կը խնդրեմ որ այս ժողովը չցրուի եւ անպատճառ այսօր ընտրէ Քաղ. Ժողովը:

ՉԱՅՆԵՐ.- Հրաժարած վարչութիւնը դեռ գործէ քաշուած չէ:

ՆԱԽԱԳԱՀ Ս.- Ան իր հրաժարականը տուած է արդէն և առօրեայ գործերով կը պարապի:

Դ. Տ. ՄՈՎՍԷՍԵԱՆ ԷՖ.- Կատարելապէս համաձայն եմ Նախագահ Ս.ին խօսքերուն և մեր ալ փափաքը այն է որ ազգային իշխանութեան իրաւասութիւնները ամուր հիմերու վրայ դրուին: Այս գործերու մէջ ինք յետ դժուարութեան առջեւ չի գտնուիր եւ ամէնքը պատրաստ են աջակցելու պէտք եղած օգնութիւնը ընելու իրեն. նոյն իսկ կրնանք յանձնել Ս. Պատրիարքին որ կազմէ գործադիր իշխանութիւնը, պատասխանատու մնալով այս ժողովին առջեւ. մենք այս կէտին մէջն է որ չենք կրնար թերանալ մեր պարտականութեան մէջ եւ ամուր ու հաստատուն կը մնանք մեր այդ իրաւունքին մէջ:

ՆԱԽԱԳԱՀ Ս.- Ինչպէս կ'երեւայ, երեսփոխաններու մէջ վերջնական համաձայնութիւն չէ գոյացած վարչութեան ընտրութեան մասին: Վերջին անգամ վարչութեան ընտրութեան առթիւ ձեւ մը ընդունեցինք, որու համաձայն երկու ժողովներու ատենապետները որոշուելով, անոնք ընտրեցին իրենց ընկերները: Չեմ կարծեր որ ընտրութեան այդ ձեւը անհամապատասխան ըլլայ ազգին կամքին մանաւանդ արդի պայմաններու մէջ, երբ պետական կազմ ունեցող ազգերու մէջ

վարչութիւնը այդ ձեռով կ'ընտրուի: Կ'առաջարկեն որ այս անգամ ալ պահուի այդ ձեռը և որոշուի վարչապետը, որ ընտրէ իր ընկերները:

Հ. ԽՈՍՐՈՎԵԱՆ ԷՖ.- Վարչութիւնը հաւաքական կերպով ազգին դէկը իր ձեռքը առած է, իսկ ատենապետը ժողովը կառավարելէ գատ ուրիշ հանգամանք չունի, մինչդեռ այս ձեռով վարչապետը անձնական իշխանութիւն մը կը վերադրէ իրեն եւ օրէնքին կապուած չ'զգար ինքզինքը: Խորին ակնածանք ունենալով Ս. Պատրիարքին նկատմամբ, հարկ դատեցի տալ այս օրինական բացատրութիւնը:

ՏՐ. Ա. ԲԱՐՍԵՂԵԱՆ ԷՖ.- Այս մասին գրաւորապէս կը ներկայացնեմ ժողովիդ մեր կոտակցութեան տեսակէտը:

(Պատճեն)

[54]Դ. Տ. ՄՈՎՍԷՍԵԱՆ ԷՖ.- Այս առաջարկը կ'անցնի արձանագրութեան մէջ, երբ որ ժամանակը գայ կրնանք նկատողութեան առնել: Խոսքովեան էՖ. դիտողութիւն կ'ընէ վարչապետ որոշելու ձեռի մասին: Վարչապետին տեղ Ս. Պատրիարքը կրնայ մարմնաւորել այդ իրաւասութիւնը. այսինքն կը յանձնենք Ս. Պատրիարքին մեր իրաւունքը եւ կ'արտօնենք զինքը, որ ինք ընտրէ ժողովները ու այդ ժողովները իրենք կ'ընտրեն իրենց ատենապետները, որ այս ժողովին ներկայացուելով հաստատուին եւ ստանան ամէնուն հաւանութիւնը:

Ե. ՊԵՅԱԶՃԵԱՆ ԷՖ.- Ս. Պատրիարքը ամէնուն յարգանքը կը վայելէ, հետեւաբար կարելի է անմիջապէս որոշել Ս. Պատրիարքի առաջարկած ատենապետը:

Յ. ԴԱՐՔԻՆԵԱՆ ԷՖ.- Անգամ մը փորձուեցաւ այդ դրութիւնը, հետեւաբար ես կ'առաջարկեմ որ ամբողջովին քուէով ընտրուի Քաղ. ժողովը:

Հ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ ԷՖ.- Պէտք չկայ բացատրելու որ բացառիկ պարագաներու տակ կը գտնուինք, հետեւաբար տանք բացառիկ արտօնութիւն մը ժողովներու կազմութեան համար, քանի որ Ս. Պատրիարքը մատնանիշ կ'ընէ իր առաջարկին յապաղումէն յառաջ գալիք անտեղութիւնը: Միայն իրաւունք ունինք պայման դնելու որ պատասխանատու ըլլայ այս ժողովին եւ իր ծրագիրը ներկայացնէ: Կ'առաջարկեմ որ անմիջապէս քուէարկուի այս եղանակը:

Ս. ՍՐԵՆՅ ԷՖ.- Քիչ առաջ յայտարարուած ձեռով ձեռնպահ մնալով մէկտեղ, կը

յայտարարեմ որ մեր կողմէ ալ կ'ընդունուի կազմուած վարչութիւնը, եթէ որոշ ծրագրով գործէ: Մեր վարչութեան մէջ անձնական փոխադարձ հասկացողութիւնը չէր պակսեր և ունեինք պաշտօնակիցներ, զորս չէի ճանչնար, բայց համոզում գոյացուցի թէ անոնք բացարձակապէս անկեղծ հայեր են, այսուհանդերձ վարչութիւնը քայքայուեցաւ և հրաժարեցաւ: Պէտք է ուրեմն քննել թէ վարչութիւնը ինչո՞ւ հրաժարեցաւ: Հրաժարեցաւ այն պատճառաւ որ չէր կրնար օգտակար ըլլալ այն իրական աշխատանքին, որուն կոչուած էր ինք: Ասոր համար առաջին պայմանը այն է, որ վարչութիւնը բացարձակապէս հեղինակատր ըլլայ, եւ երկրորդ պայմանը վարելու համար ազգին գործերը այն է, որ աշխատանքի բացարձակապէս բաժանում [55]ըլլայ: Քաղ. ժողովը շաբաթական մէկ քանի նիստով միայն չի կրնար վարել ազգին գործերը, որոնք առանձին տէրաբար մանի մը զբաղումները կը կազմեն: Հետեւաբար ցորչափ չ'ընդունինք Քաղ. ժողովը աշխատանքի բաժանման սկզբունքը, կը հաւատամ որ մէկ երկու ամիս յետոյ գործերը խեղդամահ պիտի ընեն զինքը: Կ'եզրակացնեմ որ ազգ. վարչութիւնը պէտք է ներկայացուի հեղինակատրապէս և օրական մէկ երկու ժամ աշխատութիւնը երբեք բաւական չէ գործերու համար: Այս յայտարարութիւնը կ'ընեմ ի սեր այն ժողովուրդին, որուն գործերը վարելու կոչուած են այդ ժողովները:

Դ. Տ. ՄՈՎՍԷՍԵԱՆ.- Կ'ընդունին որ զօրաւոր վարչութիւն մը ընտրելու պէտք կայ եւ լաւագոյնը այն է, որ Ս. Պատրիարքը ինք ընտրէ իր ժողովը: Եթէ նախորդ վարչութիւնը չկրցաւ իրմէ սպասուած օգտակարութիւն ունենալ, պատճառը այն է, որ ատենապետը իր պատասխանատուութեան տակ գործեց և ժողովը իրաւասու չնկատեց, ու սխալներ եղած պարագային քաջութիւն չունեցաւ զանոնք ուղղելու: Եթէ ժողովը ատենապետը ինք ընտրէ, այն ատեն անդամները պակաս եղած ատեն ինք պէտք է ընտրէ առանց բերելու այստեղ, ուստի ես յարմար կը տեսնեմ որ Սրբազան Պատրիարքը ինք ընտրէ ամբողջ ժողովականները. ասիկա անելի գործնական կ'ըլլայ:

Ս. ԳԱՐԱՅԵԱՆ ԷՖ.- Անցեալ 3-4 տարուան փորձառութեամբ, խիստ կարեւոր կէտի մը վրայ պիտի հրաւիրեմ ձեր ուշադրութիւնը: Վարչութեան գործերը այն աստիճան ծանր են, որ մէկ երկու ժամ հաւաքուելով այդ գործերը չեն կրնար կարգադրուիլ: Կազմուե-

լիք Քաղ. Ժողովը պետք է շարունակ աշխատող անդամներ ունենայ, ապա թէ ոչ միեւնոյն անլուծեան պիտի դատապարտուի գործը:

Հ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ ԷՖ.- Թողունք ուրեմն նոր վարչութեան կազմութիւնը Ս. Պատրիարքին, սպասելով որ, ինչպէս դիտել տուին Պ. Սրենց և ուրիշները, ծրագիրով մը ներկայանայ և այս ժողովին հաւանութեանը ներկայացնէ: Այս պատճառով կ'առաջարկեմ որ այս ժողովն ալ ստիպողական եւ հարկեցուցիչ նկատելով այս խնդիրը, պարտաւոր է որ իր ընտրած վարչութիւնը ծրագրով մը ներկայանայ:

Մ. ՆԱԹԱՆԵԱՆ ԷՖ.- Եթէ Ս. Պատրիարքը յանձն կ'առնէ, ժողովին մեծամասնութեան դիմելով կրնանք որոշել այս խնդիրը: (Ատենապետ ԷՖ. քուէի դնելով առաջարկները, 3 ձեռնպահ և 1 հակառակ քուէի դէմ մեծամասնութեամբ որոշուեցաւ յանձնել վարչութեան կազմութիւնը Ս. Պատրիարքին:)

[56]ՆԱԽ Ս.- Ժողովիդ այս որոշումէն յետոյ, պարտականութիւն կը համարիմ իմ շնորհակալութիւնս յայտնել ձեզ այն վստահութեան համար, զոր ցոյց տուիք ինձ նկատմամբ: Պիտի ջանամ որ վարչութեան նոր անդամները ըլլան ազգին բազմազան պետքերուն համապատասխան անդամներ:

ԱՏԵՆ ԷՖ.- Քանի որ վարչական երկու ժողովներու ընտրութիւնն ալ միեւնոյն կերպով տեղի պիտի ունենայ, ձեր քուէին կ'ենթարկեմ Կրօն. Ժողովի հրաժարականը: (Ժողովը ընդունեց Կրօն. Ժողովի հրաժարականը)

Ատեանը, որ բացուած էր ժամը 10-ին, փակուեցաւ ժամը 12-ին:




ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ԶԱՒԵՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՏԵՐ ԵՂԻԱՅԵԱՆԻ

Ազգանի անունով Միքայէլ Տէր Եղիայեան, ծնած է Մուսուլ, Իրաք 1868-ին, Տ. Աւետիս Քին. Տէր Եղիայեանի յարկին տակ: Ուսանած է Սղեբոյի Միացեալ Կեդրոնական վարժարանին մէջ, ապա՝ Պաղտատի Հայկական Ազգային վարժարանին մէջ: 1888-1890 պաշտօնավարած է նոյն դպրոցէն ներս, որմէ ետք կը յաճախէ Արմաշի Աստուածաբանական Դեմաբանը:

Վարդապետական վեղար կը ստանայ 1896-ին՝ վերանուանուելով Զաւէն: Կը ծառայէ Պոլսոյ Սածարիոյ եւ Հասգիւղի եկեղեցիներէն ներս: Իր մտաւորաբար հանդիսացած է Մաղաքիա Արք. Օրմանեան: 1898-ին կ'ընտրուի Կարիքի (Երզրում) Պատրիարքական տեղապահ ապա առաջնորդ: 1908-ին ան Վանի տեղապահն էր, ապա 1909-13 Տիգրանակերտի Առաջնորդ:

Զաւէն Արքեպիսկոպոս 1913-ին կ'ընտրուի Պոլսոյ Պատրիարք մինչև 1916 թ. (Ա. շրջան): Երիտթուրքերու հետ գործօն բանակցութիւններ կը վարէ հայկական բարենորոգութեանց գծով: Այս ընթացքին կ'օժանդակէ բարեսիրական կազմակերպութիւններու: Բարենորոգութեանց ծրագիրը չի յաջողիր Ա. Պատերազմի պատճառով: Հայ մտաւորականներու եւ ազգային յայտնի գործիչներու ձեռքակալութենէն ետք Ապրիլ 24-ին, Զաւէն Պատրիարք աւելի կը մեկուսացուի: 1916-1919 ինք նոյնպէս կ'աքսորուի դէպի Գոնիա, Հալէպ, Տէր Զօր եւ Պաղտատ: Ան փաստօրէն տնային կալանքի տակ կ'առնուի Օսմ. պետութեան կողմէ՝ Բրիտանական զօրմասերու յառաջխաղացման շրջանին: Ազատ կ'արձակուի զինադադարէն ետք: Գործօն կերպով կը մասնակցի որբահաւարքին եւ հայ բնկորներու հաւարման:

Պատրիարքական 2-րդ շրջանը կը սկսի 1919-ին եւ կը տեւէ մինչև 1922: Հայկական եկեղեցապատկան կալուածներու վերականգնման ուղղութեամբ իր կատարած աշխատանքները չեն պակտուիր յաջողութեամբ՝ Քեմալիստներու իշխանութեան գլուխ գալու պատճառով: 1923 թուականի Լոզանի ոչ-հայանապատ դաշնագրէն ետք կը շրջագայի սիիւռքի գաղութները՝ Պուլկարիա, Կիպրոս, Երուսաղէմ, Գահիլէ: Այս ընթացքին հիմնարար դեր կ'ունենայ Նիկոսիոյ Մելգոնեան Կրթական Հաստատութեան հիմնադրութեան հետ առնչուող կարգ մը հարցեր լուծելու աշխատանքներուն մէջ: 1927-ին վերջնականապէս կը հաստատուի Պաղտատ, ուր երկու շրջան կ'ընտրուի Պաղտատի Առաջնորդ: Դժբախտաբար քաղցկեղը բոյն կը դնէ տառապեալ հոգեւորականին արդէն խոցուած մարմնին մէջ, որուն հետեւանքով երկար առեւն կը պայքարի մահացու հիւանդութեան դէմ ու կը վախճանի 1947-ին: Յունիս 10-ին իր մարմինը կը փոխադրուի Երուսաղէմ:



«ԱՆՀԱՆԳՍՏԱՅՈՒՅԻՉ
ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ»

Հեղինակ՝ Դեֆրի Ռոպերթսոն

(Շարունակութիւն. սկիզբը նախորդ թիւին մէջ)

Աւետիս Ծափունեան

Պատմ. Գիտ. Դոկտոր

ՅԵՂԱՀԱՆՈՒԹԻՒՆԸ

Այս ենթախորագրին տակ, Դեֆրի Ռոպերթսոն կը հաղորդէ. «Մայիսէն Սեպտեմբեր, Անատոլոյի աւելի քան երկու միլիոն հայերէն պարպուեցաւ: Տեղահանութեան ժամանակաւոր օրէնքը, կը հրամայէր բանակի սպաներուն, տեղահանել ժողովուրդը դաւաճանութեան մեղադրանքով, կամ «ռազմական պահանջ»ի պատրուակով, կառավարութիւնը ամբողջ Անատոլուն պարպեց, ներառեալ բազում այն քաղաքներէն, որոնք շատ հեռու էին ռազմաճակատէն, և դաւաճանութեան որեւէ ղեկք չէր արձանագրուած, և բնակչութիւնը յանձնուեցաւ մահաբեր երթերու՝ ղէպի անպատները»:

Քիչ մը առաջ անցնելով, անկեղծօրէն հայասեր պատմաբանը կ'անդրադառնայ հայութեան նիւթական կորուստներուն. «Արայի 1919 թուականի Խաղաղութեան Խորհրդաժողովին, Հայկական Պատուիրակութիւնը կը տեղեկացնէր կորուստը 1860 եկեղեցիներու, 239 վանքերու, 1438 վարժարաններու, 42 որբանոցներու, 29

դպրեվանքներու»: Եւ շարունակելով մահուան երթերուն մասին իր հաստատումները, Դեֆրի Ռոպերթսոն կը գրէ. «Հարիւր հազարաւորներ սպաննուեցան այդ երթերուն ընթացքին, պարզապէս որովհետեւ անոնք հայեր էին եւ մասնաւորապէս ենթարկուած էին այն վիճակին, զոր Յեղասպանութեան Պայմանագրութիւնը կ'որակէ, որոշապէս «կեանքի պայմաններ» հաշուարկուած այնպէս մը, որ անոնք մահուան յանձնուին ամբողջութեամբ կամ մասնակիօրէն»:

Ապա, Դեֆրի Ռոպերթսոն կը պարզէ հայ երեխաներուն վիճակուած դաժան ճակատագիրը, եւ կը գրէ. «Երեխաներ (հայ) բռնի կերպով խլուելով, յանձնուած էին մահմետական ընտանիքներու: Արդ, Յեղասպանութեան Պայմանագրութիւնը կը նկատէ. «Երեխաներու բռնի փոխանցումը մէկ խմբաւորումէ այլ խմբաւորման մը» որպէս Յեղասպանութեան գործարք»:

Այնուհետեւ, կրկին անդրադառնալով հայ ժողովուրդին՝ թուրքին կողմէ պարտադրուած ճակատագրին, անաչառ պատմաբանը կը գրէ. «Տեղահանութիւններն ու կոտորածները շարունակուեցան մինչեւ 1915 Յուլիս, երբ Գերմանիոյ դեսպանը՝ Մաքերնիխ, Պերլին կը տեղեկացնէր. «Արեւելեան նահանգներու հայերուն դէմ գործադրուած խժոժութիւնները, յանգած են իրենց վերջին հանգրուանին», անոնց նպատակն է «Հայկական Հարցը լուծել հայ ցեղին բնաջնջումով»:

Գ. ԳԼՈՒԽ - ՓՍՍԸ

Այստեղ, Դեֆրի Ռոպերթսոն կը մէջբերէ Գերմանիոյ դեսպանին վկայութիւնը. «Հայերուն դէմ գործուած նախճիրներուն պատճառը ռազմական նկատառումներով չէր և կը հաստատուէր, թէ մահաբեր տեղահանութիւնները ընդգրկած էին այն նահանգները, որոնք թշնամիներու սպառնալիքէն զերծ էին, և Օսմանեան պնդումը, թէ ասիկա «ռազմական անհրաժեշտութիւն էր», որ թուրքիոյ այժմու փաստարկումներէն է, պարզապէս շինծու է: Կառավարութիւնը կը հետապնդէ հայ ցեղը բնաջնջելու նպատակը»: Եւ ան կ'եզրակացնէ. «Մինչև Յուլիս, ամէն ոք գիտէր, թէ տեղահանութիւնները ինչ կը նշանակեն: Պարզապէս ան միջոց մըն է հայ ազգը բնաջնջելու, առանց որևէ կասկածի»:

Այնուհետեւ, հմուտ պատմաբանը կը

հերքէ Թուրքիոյ այն զրպարտութիւնը, թէ Վանի հայերը ապստամբած էին, և հետեւաբար, անհրաժեշտութիւն էր զինուորական միջա- մտութիւնը, եւ կը գրէ. «Վանի հայերը չէին ապստամբած, անոնք պարզապէս իրենց թաղերը կը պաշտպանէին, նախաչարձակումին դէմ թուրք զօրքին, զորս կը գլխաւորէր կառավարիչը՝ Դեվլետթ Դէյ: Տեղոյն հայ ղեկավարները բացարձակապէս դէմ էին ըմբոստութեան: Ամէն պարագայի տակ, Ջէյթունէն և Կիլիկիոյ այլ շրջաններէն տեղահանութիւնները սկսան նախքան Վանի այսպէս ասած «ապստամբութիւնը», եւ տեղահանութիւնները շարունակուեցան այնպիսի վայրերէ, որոնք ռազմաճակատին մօտ չէին, և հետեւաբար, «ռազմական պահանջը» որևէ արդարացում չունի»:

Այնուհետև, կը մէջբերէ Թալէաթի մէկ յայտարարութիւնը, թէ «Մեր գործողութիւնները պարտադրուած էին մեզի՝ ազգային և պատմական անհրաժեշտութիւններէ: Թուրքիոյ գոյութեան պահպանութիւնը պէտք է գերակշռէ որևէ այլ նկատում»: Ահաասիկ Դեֆթի Ռոպերթսընի եզրակացութիւնը. «Երեսուն տարի ետք, Նացիները նոյնը պիտի կրկնէին, ինչ կը վերաբերի հրեաներուն «Հոլոքոսթին» անհրաժեշտութեան»:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Այս ենթախորագրին տակ, Դեֆթի Ռոպերթսըն կը յիշատակէ թրքական նորակազմ դահլիճին մէջ, Ներքին Գործոց Նախարար Մուսթաֆա Արիֆի այն յայտարարութիւնը, թէ «Դժբախտաբար, անոնք, որոնք մեր ղեկավարներն էին պատերազմի ընթացքին, պիտի զլէին եւ անցնէին ամենաարիւնարբու աւազակներուն: Անոնք որոշեցին բնաջնջել հայերը, և բնաջնջեցին»: Իսկ նորակազմ Ծերակոյտին Նախագահը, կը վկայէր, թէ հայերուն զանգուածային սպանութիւնները «պաշտօնապէս» վաւերացուած էին:

Անդրադառնալով զինուորական դատարանին վճիռին, Դեֆթի Ռոպերթսըն կը գրէ. «Երիտթուրք ղեկավարները յանցաւոր նկատուեցան կանխամտածուած առաջնակարգ զանգուածային սպանութեամբ», զոր կատարեց Յատուկ Կազմակերպութիւնը, որ կարգադրեց ազատ արձակումը ամենավտանգաւոր ոճրագործներուն, որոնք հրոսակային խումբեր կազմեցին,



սպաննելու համար հայերը: Տեղահանութիւնն ու ջարդերը կը կազմեն հաստատ փորձ մը՝ «արմատապէս լուծելու համար «Հայկական Հարցը», բնաջնջելով ամբողջ ժողովուրդ մը: Ասիկա յստակօրէն կը բացայայտէ այն, ինչ որ Յեղասպանութիւն կը կոչուի, բան մը՝ զոր Յեղասպանութիւնը ժխտողներուն համար դժուար է ժխտել»:

Եւ հայասէր պատմաբանը կը շարունակէ՝ հաստատելով գործուած ոճիրը որպէս Յեղասպանութիւն. «Կարելոր իրողութիւնը այն է, որ տեղահանութիւնը անխուսափելիօրէն և հաստատօրէն ստեղծեց կեանքի այնպիսի պայմաններ, որոնք կը նշանակէն մահը ժողովուրդի մը՝ անոր ցեղային նկատառումով: Տեղահանութեան քաղաքականութիւն մը, որ կը նշանակէր բնաջնջումը հայ ազգաբնակչութեան զգալի մէկ մասին»: Ապա, Աւստրալիացի իրաւաբան-պատմաբանը կը հաստատէ անհերքելիօրէն. «Վերևի փաստը բաւական է, հաստատելու համար, առանց որևէ կասկածի, թէ Օսմանեան Պետութիւնը պատասխանատու է, օրինական սկզբունքներու համաձայն, այն, ինչ որ կը կոչուի Յեղասպանութիւն»:

Դ. ԳԼՈՒԽ - ՕՐԵՆԸԸ

Այս գլուխին տակ, անաչառ պատմաբանը, ամենայն ձեռնհասութեամբ, կրկին ու կրկին կը հաստատէ. «Օսմանեան Կառավարութիւնը հրամայած էր տեղահանութիւնը այնպիսի պայմաններու մէջ, որ տեղահանելները ենթակայ կ'ըլլային հիւանդութեան, սովամահութեան և Յատուկ Կազմակերպութեան անդամներուն յարձակումներուն»: Եւ ան կը շարունակէ իր ամբաստանութիւնները. «Կասկած չկայ, որ Օսմանեան Կայսրութեան մէջի հայերուն «զգալի» մէկ մասը նկատի առնուած էր տեղահանութեան համար, և թէ առնուած

800.000 զոհ, թերևս ալ մէկ ու կէս միլիոն սպաննուած էին: Ամէն պարագայի տակ, նոյնիսկ եթէ անոնց թիւը 600.000 է, ինչպէս որ կ'ընդունին անոնք, որոնք Յեղասպանութիւնը կը ժխտեն, նոյնիսկ այդ թիւը զգալի մէկ համեմատութիւնն է հայ ազգաբնակչութեան և վերապրողները քանի մը հազարով փրկուեզան միայն՝ ֆիզիքական և հոգեբանական լուրջ վնասուածքներով»:

Աւստրալիացի պատմաբանը, իրաւական տեսանկիւնէն մօտենալով հարցին, տակաւին ալ կը շարունակէ իր ամբաստանութիւնները: Կասկած չկայ, որ 1915 թուականին, Օսմանեան Կառավարութիւնը տեղահանութիւնը կատարեց լիովին գիտակցելով, որ տեղահանեալներէն շատեր պիտի մեռնին, եւ օրէնք հրատարակեց բռնագրաւելու համար անոնց սեփականութիւնը, այն յաւակնութեամբ, որ անոնք «լքեալ գոյքեր» էին, քանի որ տեղահանեալներուն պիտի չթոյլատրուէր վերադառնալ»:

Այնուհետեւ, անդրադառնալով Յեղասպանութիւնը ժխտող պատմաբաններուն այն պնդումին, թէ «սպանութիւններէն մաս մը գործադրուած էր թափառաշրջիկ քիւրտերուն կողմէ», Դեֆրի Ռոպերթսըն կը պատասխանէ անոնց, հաստատելով, որ այդ վարկածը «ոչ մէկ տրամաբանութեան կը դիմանայ: Կառավարութեան վարած տեղահանութեան քաղաքականութիւնը ուղղուած էր հայերուն դէմ, և բացայայտօրէն կը հաստատեն, թէ ստեղծուած էին այնպիսի պայմաններ, կարելի դարձնելով տարագրեալները սպաննելու, բռնաբարելու, և առեւանգուելու քիւրտերուն, ինչպէս նաեւ «չեթներէն» կազմուած ջոկատներուն կողմէ, որոնք գաղտնօրէն կազմակերպուած էին Կառավարութեան կողմէ՝ Յատուկ Կազմակերպութեան միջոցաւ»:

Եւ տակաւին ալ շարունակելով իր ջախջախիչ ամբաստանութիւնները, իրաւաբան Դեֆրի Ռոպերթսըն կը գրէ. «Այն, ինչ որ ի յայտ կու գայ տեղահանութեան հետևանքներէն, փաստն է սպանութեան, չարչարանքին, և պարտադրութիւնը կեանքի այնպիսի պայմաններու, ուր մահը զգալի թիւով մարդոց, անխուսափելի էր»:

Ըլլալով իրաւաբան, Դ. Ռոպերթսըն միակողմանիօրէն չի մօտենար Յեղասպանութեան իրողութեան, այլ՝ բազմակողմանիօրէն քննարկելով հարցը, յանգած է այն փաստին, թէ այն, ինչ որ պատահած էր հայ

ժողովուրդին 1915 թուականին, ուրիշ բան չէր, եթէ ոչ, յստակ ու մեկին, Յեղասպանութիւն էր, եւ ան կը գրէ. «Թերևս ամենահամոզիչ փաստը Յեղասպանութեան նպատակադրումին, այն օրէնքներն էին, զորս Իթքիհատը հրապարակած էր 1915 թուականի վերջերը եւ 1916 թուականի սկզբնաւորութեան, որոնք պետութեան իրաւունք կու տային բռնագրաւելու «լքեալ» տուններն ու ինչքերը տարագրեալներուն, եւ որոնք կազմեցին բացայայտօրէն անոնց ինչքերը ձեռք ձգելու համար: Այս մէկը կարելի էր փաստն է այն մտադրութեան, թէ հայերը երբեք պիտի չվերադառնան և մահուան երթերէն վերապրողներուն, երբեք թոյլ պիտի չտրուի իրենց երկիրը վերադառնալ»:

Այնուհետեւ, Դ. Ռոպերթսըն բրբական կառավարութիւնը պատասխանատու կը նկատէ ոճրագործներուն գործադրած սպանութիւններուն համար, երբ անոնք տեղի կ'ունենային գիտակցութեամբը իշխանութիւններուն, «որոնք կրնային (եւ չըրին) արգելք հանդիսանալ»:

Եւ իրաւաբան-պատմաբանը Գերմանիան մեղակից կը նկատէ անհերքելիօրէն, Օսման-



եան Կառավարութեան գործադրած Յեղասպանութեան, քանի որ իր դիւանագետները զինք տեղեակ պահած էին հայերը բնաջնջելու Օսմանեան Կառավարութեան նպատակին, ինչպէս նաեւ ջարդերուն և մահաբեր տեղահանութիւններուն մասին: Աւելին ըլլալով, 1915 թուականին, Արևմտեան Դաշնակից Պետութիւնները խոստացած էին պատժել «մարդկութեան դէմ գործուած ոճիրները», «զորս, անկասկած, Գերմանիան կրնար կասեցնել, քանի որ Օսմանեան Կայսրութիւնը մեծապէս կախում ունէր Գերմանիայէն»:

Եւ Դեֆրի Ռոպերթսըն կ'եզրակացնէ. «Յեղասպանութեան այս մեղսակցութիւնը կրնար հետեւանքներ ունենալ Գերմանական

Պետութեան համար, այն առումով, որ պատերազմն վերջ, պէտք էր հատուցում կատարէր, հայերուն բնաջնջման մէջ իր ունեցած պատասխանատուութեան համար»:

Զ. ԳԼՈՒԽ - ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱԶՄԱՆ ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Այստեղ, ճ. Ռուպերթսըն հարց կը յարուցանէ, թէ Յեղասպանութեան ոճրագործները չպատժուեցան. «Հողորոսը տեղի պիտի չունենար, եթէ Երիտրուբերն ու գերմանացի ղեկավարները պատժուած ըլլային միջազգային դատարանի մը կողմէ, որ պէտք էր որ ստեղծուէր նման Սեւրի և Վերսալի Դաշնագիրներով կազմուածին»:

Է. ԳԼՈՒԽ - ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԺԽՏՈՒՄԸ

Այս հարցին անդրադառնալով, Ճեֆրի Ռուպերթսըն հարց կու տայ. «Քանի որ Հողորոսը ժխտողներուն դէմ օրէնքներ հրատարակուած են՝ Երուսական Ատեանին կողմէ, ինչո՞ր համար պէտք չէ պատժել Հայոց Յեղասպանութիւնը ժխտողները»:

Թ. ԳԼՈՒԽ - ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԸ

Այս գլուխին տակ, Աստրալիացի իրաւաբան-պատմաբանը կը գրէ. «Միջազգային օրէնքը գէթ կ'ընդունի գիտակցաբար գործուած սխալի մը հատուցման պարտաւորութիւնը եւ յաճախ ըսուած է, թէ Թուրքիոյ յամառութիւնը՝ Յեղասպանութիւնը ժխտելու, հետեւանքն է այն վախին, թէ իրմէ պիտի պահանջուի հատուցում կատարել: Սակայն, դրանք, եթէ նոյնիսկ վճարուի այն անձերուն, որոնք պիտի կարենան փաստել իրենց ազգակցութիւնը, այդ ջարդերէն և մահուան երթերէն մահացողներուն հետ, չի կրնար հատուցանել ամբողջ կեանքի մը վրայ երկարող ցաւը»:

Սակայն, Ճեֆրի Ռուպերթսըն կարեւոր հարց մը կը յարուցանէ. «Հատուցումները պէ՞տք է ընդգրկեն այն հողերը, զորս հայերը ստիպման տակ լքեցին 1915 թուականին: Այս հարցը խոստացուած էր Սևրի Դաշնագրով, որ երբէք չգործադրուեցաւ, և որ փոխարինուեցաւ Լոզանի Դաշնագրով, որ ոչ մէկ ակնարկութիւն կ'ընէ հատուցումներու մասին, և իրողապէս դաւաճանեց Դաշնակիցներուն կողմէ՝ հայե-

րուն եղած բոլոր խոստումներուն»:

Այնուհետեւ, Աստրալիացի անկաշտ պատմաբանը կը բարձրացնէ այլ կարեւոր հարց մը. «Ամէն պարագայի տակ, նոյնիսկ եթէ Թրքական Հանրապետութիւնը շարունակէ և պաշտպանէ Օսմանեան իր նախորդին սխալները, երբ մինչ ենթադրուած է, որ ան ընդունի իր նախորդ պետութեան պատասխանատուութիւնները»: Միջազգային դաշնագիրները «չեն կրնար ազդել այն սկզբունքին վրայ, թէ ներկայ Թրքական Հանրապետութիւնը պատասխանատու է Օսմանեան Կայսրութեան գործադրած միջազգային ոճիրներուն, և այն իրողութիւնը, թէ այդ ոճիրներն են որ կը կազմեն Յեղասպանութիւնը»:

Հատուցումներու պահանջին առնչութեամբ, Ճեֆրի Ռուպերթսըն կը գրէ. «Ժամանակն է, որ Հայաստանեայց Եկեղեցին և Հայաստանի Կառավարութիւնը դադրին Թուրքիայէն խնդրել և դիմեն օրինական քայլերու, միաժամանակ, Արդարադատութեան Միջազգային Ատեանին և քրքական դատարաններուն մօտ, որպէս առաջին քայլ դէպի Մարդկային Իրաւանց Երուսական Ատեանը»:

Ճ. ԳԼՈՒԽ - ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Ուրեմն, որպէս եզրակացութիւն և որպէս հաշտութիւն, Ճեֆրի Ռուպերթսըն հետեւեալ առաջարկը կը ներկայացնէ. «Թուրքիոյ Կառավարութիւնը պէտք է ընդունի մարդկութեան դէմ գործուած ոճիրին իրողութիւնը և գէթ ներողութիւն խնդրէ եւ հատուցում կատարէ, որուն պէտք է միանայ հաշտութեան քայլը, և վերադարձնէ քանդուած եկեղեցիները, և Հայաստանին նուիրէ անոր սրբազան լեռը: Ասիկա պիտի ըլլայ արժանաւոր և վայելուչ պատասխան մը, ինչպէս որ սպասելի է քաղաքակրթուած պետութեան մը»:

Եւ միւս կողմէ, Ճեֆրի Ռուպերթսըն, այս անգամ դիմելով Հայաստանի Կառավարութեան, կ'առաջարկէ. «Գալով Հայաստանին, երբ Թուրքիա ներողութիւն խնդրէ՝ մարդկութեան դէմ գործուած ոճիրին համար, նոյնիսկ եթէ ան «Յեղասպանութիւն» բառը չարտասանէ, որպէս պատասխան, ներողութիւն պէտք է խնդրէ 1970-ական և 1980-ական թուականներուն սպաննուած թուրք պաշտօնատարներուն համար»:

Արդ, այստեղ կարեւոր քանի մը կէտեր կան, որոնց պէտք է անպայման անդրադառ-

նա: Դեֆրի Ռուպերթսըն «ժառուցումներ» ըսելով կը հասկնայ միայն քանդուած եկեղեցիներուն վերադարձը Յեղասպանութեան զոհերուն, սակայն, այդ զոհերը այսօր չկան, ուրեմն, այդ ժառուցումները պիտի կատարին րոնիօրէն մահմետականացած հայերուն, երբ անոնք վերադառնան իրենց պապենական հաւատքին, կամ Պոլսոյ Հայոց Պատրիարքարանին, կամ Յեղասպանութեան զոհերուն յետնորդներուն՝ ներկայի Սփիւռքահայութեան, որ իր այժմու հանգստաւէտ կեանքը պիտի չփոխարինէ աւերուած, քանդուած, հրկիզուած եկեղեցիներով: Իսկ ո՞վ պիտի վերակառուցանէ զանոնք: Հայե՞րը, Պոլսոյ Հայոց Պատրիարքարանը, քրքական պետութիւնը, որուն ճիտին պարտքն է զանոնք վերակառուցանելը, քանի որ իր նախորդներն էին, որ զանոնք քանդեցին, աւերեցին, հրկիզեցին:

Ապա ո՞վ որուն պիտի նուիրէ հայուն սրբազան լեռը, որո՞ն սեփականութիւնը որո՞ն պիտի նուիրէ, երբ ան հայ ժողովուրդին անհերքելի, անժխտելի սեփականութիւնն է:

Այնուհետև, Դեֆրի Ռուպերթսըն չի յիշատակեր հայուն սեփական, հայուն պատմական, հայուն պապենական հողերուն վերադարձը իրենց իրաւատիրոջ՝ հայ ժողովուրդին, երբ այդ հողերուն ամէն մէկ թիզը հայուն արիւնը ծծած է, երբ այդ հողերուն ամէն մէկ թիզին մէջ թաղուած են հայ ժողովուրդին արմատները, երբ այդ հողերուն ամէն մէկ թիզին վրայ հայ ժողովուրդին ճակտի քրտինքն է որ հոսած է, երբ այդ հողերը յափշտակելու և անոնց ապօրինաբար տիրանալու համար էր, որ թուրքը կազմակերպած էր Քսաներոյդ Դարու Առաջին Յեղասպանութիւնը Հայ ժողովուրդին:

Հայ ժողովուրդը կրնա՞յ մոռնալ իր անվիճելի իրաւունքը, բնա՛ւ երբեք, Հայ ժողովուրդը պիտի թողո՞ւ, որ իր դարաւոր ոսոխը, իր արիւնարբոյ թշնամին՝ թուրքը, տակաւին շարունակէ անպատիժ վայելել հայուն այդ հարազատ հողերուն բարիքները: Հայ ժողովուրդը չի կրնար որևէ զիջումի երթալ, իր այդ սրբազան պահանջատիրութեան մէջ: Այսօր և ընդմիշտ:

Իսկ ինչ կը վերաբերի թուրք պաշտօնատարներուն ահաբեկումին, Հայաստանը չէր որ զանոնք կատարած էր, որպէսզի ատոր համար ներողութիւն խնդրէ ... որմէ՞ ... Յեղասպանութեան Թուրքիայէ՞ն ...

Ամէն պարագայի տակ, Հայ ժողովուրդին Յեղասպանութեան 100-րդ Տարելիցի նա-

խօրեակին հրապարակ ելած հայասէր պատմաբան Դեֆրի Ռուպերթսընի այս հատորը, շնորհակալ աշխատանք մըն է, որուն համար Հայ ժողովուրդը միայն երախտապարտ կրնայ ըլլալ ...

TESTIMONY

Paul Wolff-Metternich, German Ambassador to the Ottoman Empire

"In its attempt to carry out its purpose to resolve the Armenian question by the destruction of the Armenian race, the Turkish government has refused to be deterred neither by our representations, nor by those of the American Embassy, nor by the delegate of the Pope, nor by the threats of the Allied Powers, nor in deference to the public opinion of the West representing one-half of the world."



"In the implementation of its scheme to settle the Armenian Question through annihilation of the Armenian race, the Turkish government did not allow itself to be distracted".

"Nobody has anymore the power to restrain the multi-headed hydra of the [CUP] Committee, and the attendant chauvinism and fanaticism. The committee demands the extirpation of the last remnants of the Armenians, and the government must yield. The authority of the committee is not limited to the Ottoman capital where Ittihad is organized and functions as a party in power. The authority of the committee reaches into all the provinces. A committee representative is assigned to each of the provincial administrators, from vali down to kaymakam, for purposes of assistance and supervision... Turkification means license to expel, to kill or destroy everything that is not Turkish, and to violently take possession of the goods of others."

ՈՒՆՏԱԳՆԱՅԻ ՅՈՒՇԵՐ

ԾՈՎԷ ԿԱՄՄՈՐՄՈՔԻ ԴԻՉԵՐ ԼԻՃԻՆ
ՅԱՏԱԿԷՆ

(Պատմական Հայաստան
Ուխտագնացության յուշերն)

Մ. Մարգարյանի

Շատ, շատ բան կայ տեսնելու, դիտելու, շրջելու, քար առ քար, թուփ առ թուփ, գիտլ առ գիտլ հանդիպելով հաղորդակցուելու մեր անցաւորներու հոգիներուն հետ: Առնուազն երկու շաբաթ է պէտք միայն այս շրջանը մակերեսօրէն ուսումնասիրելու համար, քանի որ պատմութիւնը արձանագրած է շուրջ 350 հայ գիտերու եւ աւաններու անունները: Եթէ կ'ուզես բան մը հասկնալ այս ուխտագնացութենէն եւ նուազագոյն չափով կշտանալ, նուր մաքրողի մը պէս կեղուելէ ետքը արնագոյն պտուղը, պէտք է համբերութեամբ հանես հատիկները իրենց թափանցիկ տուրակիկներուն մէջէն եւ զգոյշ ըլլաս որ ոչ մէկ հատիկ վրիպի աչքէդ: Այդ արդէն հնարատր չէ իրագործել տրուած ժամանակի մէջ: Արեւմտեան Հայաստան մէկ անգամ ուխտի գացողը եօթը անգամ պէտք է կրկնէ զայն:

Երեկոյեան պէտք է հասնինք Ծովք լիճը, որուն թրքացուած անունն է Կեօլճիք (կեօլ լիճ, կեօլճիք՝ ծովակ):

Ժամը հինգի մօտ արդէն աչքերը բաց ու խուփ կ'ընէ Ծովք նահանգի գեղեցկուհի լճակը, որ մերթ կը պահուրտի բլրակներու ետին, մէյ մըն ալ յանկարծ կը ցուցադրէ իր կապտատուն հայելին: Մինչ մեր ուղեւորներէն ոմանք կ'արտայայտեն իրենց հիացմունքը երկինքէն փրցուած այդ ջրային պատառիկին մասին, ես կ'իյնամ մօտիկ անցեալի ողբերգական դէպքերու յորձանուտին մէջ:

Շարժական միքրոֆոնը Աւոյէն կ'անցնի Դոկտ. Կարայիս Տէր Եղիայեանին, որոնք կու տան հիմնական տեղեկութիւններ: Երկուքն ալ լաւ պատմողներ են, Աւօն՝ միշտ երգիծանքի վրձնահարուածներով, իսկ Կարայիսը՝ հայերէնի իր ճոխ բառապաշարի երփներանգութեամբ:

Չեն գիտեր ինչու, միքրոֆոնը կը փոխանցեն նաեւ ինձի եւ կ'առաջարկեն տալ յաւելեալ լուսաբանութիւններ ու տեղեկութիւններ: Կ'առարկեն՝ պատճառաբանելով թէ ըսելիքներս

տխտր բաներ են եւ չ'արժեր տրամադրութիւնները քանդել: Կը պնդեն:

- Լաւ, մեղքը ձեր վիզը,- կ'ըսեն ու կը բանամ պատմութեան գիրքը:

Այս խաղաղ, մեզի համար այնքան հարազատ արագիւններով, կռունկներով ու ճայերով յագեցած լճակին մի՛ նայիք միայն որպէս բնութեան սոսկ գեղեցկութիւն ու հրաշալիք, որ կարելի է նաեւ ժամերով նստիլ, խոկալ, գրել ու բանաստեղծել: Կարելի է յաճախակի արտասանել Պետրոս Դ-ուրեանի «Լճակ»ը, իջնել անոր խորքերը ու գտնել ոչ միայն հրդեհ, այլ մատեան ողբերգութեան, որ կայ յիշատակ ու մոխիր, որ կան ընդամենը երկու սերունդ մեզմէ առաջ ապրած անմեղ հարազատներու ոսկերք...:

Սա այն լիճն էր, որ տարին քանի մը անգամ Խարբերդէն ու շրջանի շէներէն կու գային հայեր, ասորիներ, օտար առաքելութիւններու ներկայացուցիչներ եւ կը կատարէին տօնախմբութիւններ: Ահաասիկ հոն են անոնք՝ ծովակի ափին, ամերիկեան եւ այլ հիւպատոսական առաքելութիւններու պաշտօնեաները իրենց թենիսի ու կոլֆի տարագներով, հոն են լէյտիններն ու անոնց ընկերացող հայ կանայք, հոն են նաեւ քոլէճի ու վարժարաններու դասախօսները իրենց արեւմտաեւրոպական տարագներով, հոն են բոլորը, որպէսզի վայելեն Աստուծոյ հրաշալիք այս տեսարանին առթած հրճուանքը, համտեսեն տնական տոհմիկ լիցքերն ու խաղողի թուփով պատրաստուած փաթրուկները (տօլմա եւ սարմա): Ի՛նչ իմանային այդ հարիւրաւորներէն շատեր, որ 1915-ի Ապրիլ-Մայիս-Յունիս ամիսներուն այդ նոյն վայրերը պիտի դառնային իրենց ու իրենց ազգակիցներուն՝ թիով 10.000 հայերու գերեզմանոցը:

- Արիւնով ներկուեցան Եփրատն ու





ծովակը,- կը վկայէ ամերիկեան փաստավարագրական ժապատէններու յայտնի արտադրողի Մայքըլ Յակոբեան ու կը շարունակէ,- հայրս բժիշկ էր ու ձիով կը շրջագայէր, իսկ մենք փոքր էինք եւ մեզի համար գերագոյն հաճոյք մըն էր ըլլալ ծովակի ափին, որուն յատակը օր մը քափուեցան իմ ազգիս անմեղ մարդոց ողջ կամ սպաննուած մարմինները...:

Տարիներ ետք այդ ողբերգական դէպքերէն, Մայքըլ Յակոբեան աշխարհի իսլացած ականջներուն փորձեց հասցնել այն ճիշտը, որոնք կու գային Եփրատի ու ծովակի յատակէն: Գտէք ու դիտեցէք «Չայներ Լճակէն» (Voices From The Lake) փաստավարագրական ֆիլմերը, որոնք ձեզի պիտի յուշեն թէ ինչո՞ւ համար 5 Օգոստոս 2011-ին, այս տողերու հեղինակը չկրցաւ ուտել լճակին ընտիր «ճերմակ ձուկը» ու գիշերուան մութին մէջ գնաց լճափ՝ իր մորմնքի ճիշդ լուռ ու մունջ միախառնելու յատակէն եկած ձայներուն:



TESTIMONY



"It is unlawful to designate the Armenian assets as "abandoned goods" for the Armenians, the proprietors, did not abandon their properties voluntarily; they were forcibly, compulsorily removed from their domiciles and exiled. Now the government

through its efforts is selling their goods ... Nobody can sell my property if I am unwilling to sell it. Article 21 of the Constitution forbids it. If we are a constitutional regime functioning in accordance with constitutional law we can't do this. This is atrocious. Grab my arm, eject me from my village, then sell my goods and properties, such a thing can never be permissible. Neither the conscience of the Ottomans nor the law can allow it."

"Let's face it, we Turks savagely killed off the Armenians."

Ahmed Rıza, Young Turk politician and President of the first Ottoman parliament

ԱՐՇԱԼՈՅՄԻՆ

Եղիվարդ

Արշալոյսին,
Երկինքին մէջ կը մարտին
Աստղերն ամէն,
Ծոցն ամպերուն,
Դագաղներու առջեւ անտես,
Կը վառէին լոյսեր կապոյտ:

Երկրի վըրայ,
Կը տըժգունէր մոմ մը վըրտիտ,
Քաղաքն անդին,
Կ'արթըննար իր խըռովքներէն,
Աչըրներուն՝ երազ կարմիր:

Արշալոյս էր,
Բայց աշխարհը, վայրկեաններու
Դանակներով,
Իր երազները կը մորթէր:

Անդին, մարդեր գազանօրէն,
Ժամանակի հայելիէն
Կը դիտէին,
Ոճիրները գալիքներուն:





ՄԻՒՌՆՈՒՆՈՒՄ 2015
ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՄԻՆ



Միտոնօրինէքին Երուսաղէմի միաբանութիւնը մասնակցեցաւ կոկիկ ներկայութեամբ, գլխատրութեամբ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Ս. Նորիան Արք. Մանուկեանի: Ներկայ էր նաեւ Միաբանութեան բարձրաստիճան հոգեւորականներէն Գերշ. Ս. Արիս Արք. Շիրվանեան, Գիսակ Արք. Մուրատեան, Վիգէն Արք. Այրազեան, Խաժակ Արք. Պարսամեան, Վազգէն Ծ. Վրդ. Գարայեան, Ս. Համբարձում Վրդ. Քէշիշեան, Ասպետ Վրդ. Պալեան, Գուսան Վրդ. Ալճանեան, Կորիւն Վրդ. Բաղդասարեան, Տիրան Արդ. Յակոբեան:

Պատրիարք Հօր կ'ընկերակցէին գաւազանակիր՝ Հոգշ. Ս. Ներսէս Արդ. Ալոյեան և Հոգշ. Ս. Աղան Արդ. Գոգչեան:

ԱՅՅ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾԻՆ

Էջմիածին՝ վայր, որուն սրբութիւնը մատնանշուեցաւ Տիրոջ՝ Միածին Որդւոյն գալուստով: Էջմիածինը իրաքանչիւր Հայի, իրաքանչիւր քրիստոնեայի համար սրբութեան, հաւատքի ու սրբազան երկիրաժողութեան խորհրդանշան է: Հոն կը հատուի ոչ միայն Հայ ժողովուրդի պատմութեան խաչողիները, այլև Հայոց հաւատքի և աստուածավայտութեան երկնաւոր ճանապարհները: Էջմիածինը ոչ միայն Հայոց քաջարի սիրագործութիւններու, աշխարհակալ իշխանութեան կեդրոնն է՝ վաղեմի մայրաքաղաքը, այլև Հայոց հաւատքի կեդրոնը, համայն հայութեան եւ քրիստոնէութեան կեդրոնը, ուր պիտի օրհնուէր 21-րդ դարու երրորդ Սուրբ Միտոնը և պիտի կոչուէր **Յաղթութեան Միտոն**:

Ուրբաթ, 25 Սեպտեմբեր 2015.- Կէսօրէ ետք ժամը 15:30-ին Ամենապատիւ Ս. Նորիան Պատրիարք Սրբազան Հայրը ընկերակցութեամբ Երուսաղէմի Անկլիքան եպիսկոպոս Գերշ. Ս. Սուիէյլ Տաւանիի, գաւազանակիր՝ Հոգշ. Ս. Ներսէս Արդ. Ալոյեանի և Հոգշ. Ս. Աղան Արդ. Գոգչեանի պաշտօնական այցով Թէլ-Ավիվի Պէն Կուրիօն օդակայանէն ճամբայ ելաւ դէպի Հայաստան՝ մասնակցելու Սեպտեմբերեան տօնակատարութիւններուն:

Շաբաթ, 26 Սեպտեմբեր 2015-ին առաւօտեան 1:30-ին ժամանեցինք Չուարթնոց օդակայան, ուր Պատրիարք Սրբազան Հօր դիմաւորելու եկած էին Մայր Աթոռի Լուսարարապետ՝ Ս. Յովնան Եպս. Յակոբեան, Ս. Նաթան Արք. Յովհաննիսեան, Ս. Տիրայր Արդ. Յակոբեան, Ռուտիկ Սրկ. Հայրապետեան, ինչպէս նաեւ Ս. Աթոռոյ միաբաններէն Ս. Համբարձում Վրդ. Քէշիշեան, Ս. Տիրան Արդ. Յակոբեան եւ Ս. Կորիւն Վրդ. Բաղդասարեան: Օդակայանէն ուղեւորուեցանք Էջմիածնի Մայրավանք: Յերեկին, Պատրիարք Սրբազան



Հայրը և ուղեկցող Հայր Սուրբերը Վեհափառ Հայրապետին հետ տեսակցելէ ետք, Պատրիարք Սրբազան Հայրը մասնակցեցաւ Եպիսկոպոսաց ժողովին:

Նոյն օրը երեկոյեան ժամը 6-ին, նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գետրոգեան հոգեւոր ճեմարանի հանդիսութիւններու սրահին մէջ տեղի ունեցաւ Էքիմենիք հանդիպում, որուն մասնակից էին Սրբալոյս Միտոնի օրհնութեան արարողութեան առիթով Հայաստան ժամանած Քրիստոնէական Եկեղեցիներու 39 պետեր և ներկայացուցիչներ, Նուիրապետական Աթոռներու միաբաններ և Հայ եկեղեցոյ թեմակալ առաջնորդներ:

Հանդիպումն սկսաւ Նորին Ամեն. Ալեքսանտրիոյ և Համայն Ափրիկէի Պապ և Պատրիարք Ս. Թէոդորոս Բ.-ի աղօթքով, ապա ներկաներուն բարեգալստեան խօսք ըսաւ հանդիպման համակարգող, ԱՄՆ Արեւմտեան Հայոց Թեմի առաջնորդ Գերշ. Ս. Յովնան Արք. Տէրտէրեան: Սրբազան Հայրն իր խօսքին մէջ անդրադարձաւ Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցոյ եւ Հայ ժողովուրդի կեանքէն ներս Սրբալոյս Միտոնի օրհնութեան կարեւորութեան, ինչպէս նաեւ Հայոց Յեղասպանութեան ոգեկոչման 100-րդ տարելիցին առթիւ Քրիստոնէական Եկեղեցիներու կողմէ Հայ ժողովուրդին ցուցաբերուած զօրակցութեան: Այնուհետեւ աշխարհի տարբեր կողմերէ Մայր Աթոռ համախմբուած եկեղեցականներուն իր հայրապետական ողջոյնը փոխանցեց Նորին Սրբութիւն Ս.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Յաւարտ Վեհափառ Հայրապետի խօսքին, ողջոյնի խօսքերով հանդէս եկան նաեւ քոյր եկեղեցիներու հոգեւոր պետերը: Էքիմենիք հանդիպումը եզրափակուեցաւ Կարտինալ Լէոնարտօ Սանտրիի աղօթքով:

Նոյն օրը գիշերուան ժամը 8:30-ին,

հանդիսապետութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Մայր Տաճարին մէջ տեղի ունեցաւ Էքիմենիք աղօթք, որուն մասնակից էին Միտոնօրինէի առիթով Մայր Աթոռ ժամանած Քրիստոնէական Եկեղեցիներու և կազմակերպութիւններու 39 հոգեւոր պետեր ու ներկայացուցիչներ:

Վեհափառ Հայրապետը և Ալեքսանտրիոյ և Համայն Ափրիկէի Պապ և Պատրիարք Թեոդորոս Բ. «Հրաշափառ» շարականի երգեցողութեան ներքոյ հոգեւորականաց թափօրով մուտք գործեցին Մայր Տաճար, ուր՝ Աւագ Ս. Խորանի առջեւ, Քրիստոսի Ս. Եկեղեցոյ պայծառութեան եւ անասանութեան համար տեղի ունեցաւ միասնական աղօթասացութիւն:

Մինչ Էքիմենիք աղօթքը, խօսք ըսաւ ԱՄՆ Արեւելեան Հայոց Թեմի Միջեկեղեցական Յարաբերութեանց պատասխանատու Գերշ. Տ. Վիգէն Արք. Այրազեան: Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմէ միջ-եկեղեցական հիւրերուն ողջունելով համայն Հայութեան հոգեւոր կեդրոնէն՝ Վիգէն Արքազան շնորհակալութիւն յայտնեց ամենուն, այս շատ կարեւոր իրադարձութեան իրենց մասնակցութիւնը բերելու համար:

Էքիմենիք աղօթքը փակուեցաւ Վեհափառ Հայրապետի օրհնութեամբ և «Պահպանիչ» աղօթքով:

**Ս. ՊԱՏԱՐԱԳ ՎԱՐԱԳԱՅ Ս. ԽԱԶԻ
ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ
ՄԻԱԾՆԱԷՋ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ**



Կիրակի, 27 Սեպտեմբեր, 2015.- Վարագայ Ս. Խաչի տօնին առիթով, առաւօտեան ժ. 10:30-ին, հանդիսապետութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Միածնաէջ Մայր Տաճարին մէջ մատուցուեցաւ Սուրբ եւ Ամնահ Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի Քրիստոնէական դաստիարակութեան կեդրոնի տնօրէն՝ Գերշ. Տ. Վարդան Եպս. Նաւասարդեան:

Պատարագին ներկայ էին Ս. Արոտոյս գահակալ՝ Նորին Ամեն. Տ. Նորիան Պատրիարք Սրբազան Հայրը, թեմակալ առաջնորդներ, Քրիստոնէական եկեղեցիներու ներկայացուցիչներ և պատուիրակութիւններ, Մայր Աթոռի բարերարներ, Միտոնօրինութեան առիթով Մայր Աթոռ ժամանած բազմաթիւ ուխտաւորներ:

Իր քարոզին մէջ Վարդան Սրբազան անդրադարձաւ տօնի պատմութեանը և խորհորդին: Սրբազան Հայրը խօսեցաւ նաեւ Հայ ժողովուրդի համար այս նուիրական տարուան և յատկապէս 21-րդ դարու թուով երրորդ Միտոնօրինութեան կարեւորութեան մասին:

Ս. Պատարագի աւարտին, Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմէ Միտոնի կաթսայի առջեւ ընթերցուեցաւ ձիթախղի օրհնութեան վերջին աղօթքը:

Աւելի ուշ Սրբալոյս Միտոնի կաթսան տեղափոխուեցաւ Ս. Տրդատի Բաց Խորան, ուր եւ տեղի պիտի ունենար Միտոնօրինութեան սրբազան արարողութիւնը:

**ՄԻՒՌՆՕՐՀՆԷՔԻ ՍՐԲԱԶԱՆ
ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ**

Կիրակի, 27 Սեպտեմբեր 2015.- Երեկոյեան ժամը 5-ին տեղի ունեցաւ Միտոնօրինութեան սրբազան արարողութիւնը: Մայր Աթոռի բացօթեայ խորանին առջեւ կատարուող Միտոնօրինէքը 21-րդ դարու, Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ նուիրագործուող երկրորդ մեծ իրողութիւնն է Հայոց Յեղասպանութեան նահատակներու Սրբադասումն յետոյ:

Միտոնօրինութեան սրբազան արարողութեան ներկայ էին ՀՀ նախագահ Տիար Սերժ Սարգսեան, ՀՀ ԱԺ նախագահ Տիար Գալուստ Սահակեան, ՀՀ վարչապետ Տիար Յովիկ Արրահամեան, Հայոց Եկեղեցոյ Նուիրապետական Աթոռներու ներկայացուցիչներ, թեմակալ առաջնորդներ ու թեմական պատուիրակութիւններ, ՀՀ ԱԺ պատգամաւորներ, ՀՀ կառավարութեան անդամներ, ազգային բարե-

րարներ, մշակոյթի և գիտութեան գործիչներ և Հայաստանէն ու աշխարհասփիռ համայնքներէն ժամանած բազմահազար ուխտատուր հայորդիներ:

Տերունական աղօթքէն յետոյ Հայրապետական հանդիսատուր թափօրը Մայր Տաճարի Իջման Ս. Սեղանի առջեւէն շարժեցաւ դէպի Մայր Աթոռի՝ Ս. Տրդատ արքայի անուրը կրող Բաց Խորան: «Խորհուրդ Խորին» եւ «Ուրախ Լեր» շարականներու երգեցողութեան եւ Մայր Տաճարի զանգակներու ատեսաբեր դօղանջներու ներքոյ, խաչերու և խաչվառներու առաջնորդութեամբ, Ամենայն Հայոց Հայրապետն օրհնելով ներկայ ժողովուրդը, ամպիովանիի ներքոյ ուղուեցաւ դէպի Բաց Խորան:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին կ'ընկերանային Ս. Աթոռոյս Գահակալ՝ Ամեն. Տ. Նուրհան Արք. Մանուկեան, Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսի ներկայացուցիչ Գերշ. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան և Կոստանդնուպոլսոյ Պատրիարքական Ընդհանուր Փոխանորդ Գերշ. Տ. Արամ Արքեպս. Աթէշեան:

Գարեբէն եկած ատանդութեան համաձայն, թափօրի առջեւէն կը տարուէին Հայաստանեայց Եկեղեցւոյ սրբութիւններ. Քրիստոսի կողը խոցած Ս. Գեղարդը, Տիրոջ՝ Կենսատու Խաչափայտէն մասունք մը, Ս. Լուսաւորչի Աջը, Սկեւռայի մասունքներու պահարանին կրկնօրինակը և Հայոց Յեղասպանութեան սուրբ նահատակներու մասունքներու պահարանը:

Միտոնօրհնութիւնը կը վերապահուի միայն Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որ կու գայ դարերու խորէն Ս. Լուսաւորիչէն սկսեալ: Սկիզբը Նորին Սրբութիւնը միտոնմեփ մեծ կաթսային մէջ լեցուց բալասանը և 40 տեսակի տարբեր ծաղիկներէ ու իւղէ պատրաստուած խառնուրդը: Ինչպէս միշտ, Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռամբ օրհնուած հին միտոնը հեղուեցաւ նորին վրայ: Ապա Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին կողմէ Անթիլիասի մէջ օրհնուած միտոնը խառնուեցաւ նոր միտոնին: Սրբալոյս նոր Միտոնը գլխատուր երեք սրբութիւններով տեսառնագրելէ յետոյ, արարողութեան վերջատուրութեան Հայրապետական մաղթանքներ ու պատգամներ հաղորդուեցան ներկաներուն Ամենայն Հայոց Հայրապետին կողմէ: Ուշ երեկոյեան, դեռ հաւատացեալ բազմութիւնը կը շարունակէր խմբուած մնալ խորանին առջեւ՝ Միտոնի կաթսային դպչելու, անկէ օրհնութիւն ու գօրութիւն ստանալու հաւատքով:

ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ԲԱՐԵԽՕՍԱԿԱՆ ԿԱՐԳ Ի ԾԻԾԵՆՆԱԿԱԲԵՐԴ

Երկուշաբթի, 28 Սեպտեմբեր 2015.- Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը ընկերակցութեամբ Սրբալոյս Միտոնի օրհնութեան արարողութեան առիթով Հայաստան ժամանած Քրիստոնէական Եկեղեցիներու պետերու ու ներկայացուցիչներու, Ս. Աթոռոյս Գահակալ՝ Ամեն. Տ. Նուրհան Արք. Մանուկեանի, քոյր եկեղեցիներու պետերու և եպիսկոպոսներու այցելեց Ծիծեռնակաբերդի Յուշահամալիր:

Մեծ Եղեռնի յուշարձանի առջեւ Միտոնօրհնութեան մասնակիցներու կողմէ ծաղկեպսակ զետեղուեցաւ, ապա հանդիսապետութեամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ կատարուեցաւ Հայոց Յեղասպանութեան Սուրբ նահատակներու բարեխօսական կարգ:

Արարողութեան սկիզբը աղօթք կատարեց Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանսիսկոս Պապի ներկայացուցիչ, Կաթոլիկ Եկեղեցւոյ Արեւելեան եկեղեցիներու ժողովի նախագահ, Կարտինալ՝ Լեոնարտո Սանտրին՝ Հայ Եկեղեցւոյ, Հայ ժողովուրդի և համայն աշխարհի խաղաղութեան համար հայցելով Հայոց նահատակներու բարեխօսութիւնը:

«Դուք՝ Սուրբերդ, նահատակներդ Հայոց Յեղասպանութեան, այս առտու կ'ուզեմ խօսիլ Ձեզի հետ, կ'ուզեմ ըսել որ Դուք Աստուծոյ բարեկամներն էք, Դուք յաւիտեանական կեանք կ'ապրիք, Ձեր արիւնը Ձեր կեանքի Սուրբ Միտոնն էր: Եւ այժմ կ'ուզեմ խօսիլ Ձեզի հետ՝ բարեխօսեցէք մեզ համար, աղօթեցէք Աստուծոյ՝ Հայաստանի, Հայոց Եկեղեցւոյ, Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին, եպիսկոպոսներուն, և Հայաստանի բոլոր հաւատացեալներուն ու բոլոր քրիստոնէաներուն համար: Աղօթեցէք այս երկրին համար: Բարեխօսեցէք մեզ համար: Մենք կ'աղօթենք մաեւ բոլորին, բայց յատկապէս մեր եղբայրներուն և քոյրերուն համար, որոնք այսօր կը տառապին պատերազմէ, բռնութենէ, ահաբեկչութենէ: Եղբայրներ և քոյրեր, Դուք որ Աստուծոյ ձեռքերուն մէջ էք, բարեխօսեցէք մեզ համար, խաղաղութեան շնորհի և՛ Միջին Արեւելքի և՛ յատկապէս Սուրիայի խաղաղութեան վերահաստատման համար: Մենք վստահութիւն ունինք Ձեր նկատմամբ», ըսաւ Կարտինալ Սանտրին:

իր աղօթքին մէջ:

Բարեխօսական աղօթքի վերջաւորութեան, աղօթք ըսաւ նաեւ Աղեքսանդրիոյ և Համայն Ափրիկէի Պապ և Պատրիարք Նորին Ամենապատուութիւն Թեոդորոս Բ-ը: Արարողութենէն յետոյ, ուղեկցութեամբ Հայոց Յեղապանութեան քանգարանի տնօրէն Տիար Հայկ Դեմոյեանի, հիւրերը այցելեցին քանգարանին ստիտուրը:

«ԳԱՐԵԳԻՆ Ա.» ԿՐԹԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԻ ԲԱՅՈՒՄ

Երկուշաբթի, 28 Սեպտեմբեր 2015.- Հանդիսապետութեամբ Ամենայն Հայոց Հայրապետի, տեղի ունեցաւ նորակառոյց «Գարեգին Ա.» կրթական կեդրոնի բացման արարողութիւնը:

Արարողութեան ներկայ էին ՀՀ վարչապետ Տիար Յովիկ Աբրահամեան, կեդրոնի բարերարներ, քննակալ առաջնորդներ եւ այլ հիւրեր:

Այս առթիւ, մինչ կեդրոնի բացումը, երջանկայիշատակ Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի շիրիմին առջեւ կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն:

«Գարեգին Ա.» կրթական կեդրոնի առջեւ հիւրերուն ողջունեց Մայր Աթոռի



հոգեւոր-կրթական հաստատութիւններու վերատեսուչ՝ Գերշ. Տ. Գեորգ Եպս. Սարոյեան, որ «Գարեգին Ա.» կեդրոնի ստեղծումը նկատեց Մայր Աթոռի կրթական գործունէութեան վերջին տասնամեակի լաւագոյն ձեռքբերումներէն մին:

Բացման արարողութենէն ետք, կրթական կեդրոնի սրահին մէջ արարողութեան մասնակիցներ դիտեցին Գարեգին Ա. Հայրապետին նուիրուած ֆիլմը, ապա հանդիսապետութեամբ Ամենայն Հայոց Հայրապետի,

կատարուեցաւ նորաբաց կեդրոնի օրհնութեան կարգը:

ԳԵՐՋԱՆԻ ԱՊԱՐԱՆԷՆ Ս. ԴԱԽԹ ՎԱՆՔԻ ԽԱՉՔԱՐԵՐՈՒ ՆՄԱՆՕՐԻՆԱԿՆԵՐՈՒ ՕԾՈՒՄ Ի ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾԻՆ

Երկուշաբթի, 28 Սեպտեմբեր 2015.- Ի յիշատակ Հայոց Յեղապանութեան սուրբ նահատակներու, ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Հայրապետի, օծուեցան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հովանու ներքոյ օրեր առաջ կանգնեցուած Գերջանի Ապարանէն Ս. Դաւիթ վանքի խաչքարերու նմանօրինակները:

Չոյգ խաչքարերը կանգնեցուած են Նորին Սրբութեան օրհնութեամբ ու նախաձեռնութեամբ և ազնիւ բարերարութեամբ Տէր և Տիկին Յակոբ և Տոննա Թիֆլիզեաններու:

Խաչքարերու օծման հանդիսատար արարողութենէն առաջ խօսք առաւ Մայր Աթոռի Վարչա-տնտեսական բաժնի տնօրէն՝ Գերշ. Տ. Մուշեղ Եպս. Բաբայեանը: «Այս երկու խաչքարերը կանգնեցուած են այն հազարաւոր խաչքարերու փոխարէն, որոնք այլեւս չկան և այն բազմաթիւ հայորդիներու փոխարէն, ովքեր ծնկած են այդ խաչքարերու առջեւ և աղօթքներ վերառաքած Բարձրեալին», - ըսաւ Սրբազան Հայրը:

Տէր եւ Տիկին Թիֆլիզեաններու կողմէ երկնասլաց խաչքարերու բօղազերծումէն ետք, կատարուեցաւ խաչքարերու օրհնութեան արարողութիւնը, որուն ընթացքին Ամենայն Հայոց Կաթողիկոսը օծեց իրենց կերտուածքով եզակի խաչքարերը:

Արարողութեան աւարտին Ամենայն Հայոց Հայրապետը Տէր և Տիկին Յակոբ և Տոննա Թիֆլիզեաններուն, ինչպէս նաեւ Տէր և Տիկին Քրիս Թիֆլիզեաններուն եկեղեցանուէր գործունէութեան համար շնորհեց Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցոյ «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» պատուոյ բարձրագոյն շքանշան:

«ՄԻՒՌՈՆՕՐՀՆՈՒԹԻՒՆ» ԹԵՄԱՅԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԱՆԻՇԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ Ի ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾԻՆ

Երեքշաբթի, 29 Սեպտեմբեր 2015.- Առաւօտեան ժ. 11-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Հայրապետի օրհնութեամբ Մայր

Արքոյի «Վաչէ եւ Թամար Մանուկեան» Մատենադարանին մէջ տեղի ունեցաւ «Միտոնօրիութիւն» թեմայով նամականիշի արարողութիւն: 20,000 տպաքանակով թողարկուած նամականիշը կը պատկերէ Մայր Տաճարը և Սրբալոյս Միտոնի կաթսան:

Արարողութիւնն սկսաւ «Վաչէ և Թամար Մանուկեան» Մատենադարանի տնօրէն Արժ. Տ. Արարատ Քինյ. Պօղոսեանի բացման խօսքով:

Արարողութեան վերջաւորութեան, շնորհաւորելով ամենքին, Մուշեղ Սրբազան ըսաւ. «Այս պահէն սկսեալ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Սրբալոյս Միտոնի կաթսայի պատկերով այս նամականիշը պիտի հասնի աշխարհի բոլոր ծագերը՝ դառնալով Հայ Եկեղեցւոյ թարգմանը եւ դեսպանը»: Սրբազանն արդիւնաւէտ գործունէութեան համար յատուկ շնորհակալութիւն յայտնեց «Հայփոստ»ի ներկայացուցիչներուն և ՀՀ Կապի և տրանսպորտի նախարարութեանը:

Իր կարգին ՀՀ Կապի և տրանսպորտի փոխնախարար Գագիկ Թադևոսեան նշեց, թէ Սրբալոյս Միտոնի կաթսային նուիրուած նամականիշն ըստ էութեան կը դառնայ մատենագիտական արժէք:

Արարողութիւնը փակուեցաւ Ամենայն Հայոց Հայրապետի օրհնութեամբ և «Պահպանիչ» աղօթքով:

Ս. ՄԻՒՌՆԻ ԲԱՇՆՈՒՄ

Երեքշաբթի, 29 Սեպտեմբեր 2015.- Առաւօտեան ժամը 12-ին, նախագահութեամբ Ամենայն Հայոց Հայրապետի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Ալէք և Մարի Մանուկեան» Գանձատան մէջ տեղի ունեցաւ Սրբալոյս Միտոնի բաշխման արարողութիւնը:

Նորօրհնեալ Ս. Միտոնի բաշխումը սկսաւ միասնական Տէրունական աղօթքով: Ապա ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Մայր Աթոռի Գիւանապետ՝ Գերշ. Տ. Արշակ Եպս. Խաչատրեանը՝ ուրախութեամբ փաստելով Մայր Աթոռէն ներս տօնական օրերու եզրափակումը՝ Յաղթութեան Միտոնի բաշխմամբ:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Ս. Միտոնով լի անօթներ փոխանցեց Ս. Աթոռոյս Գահակալ՝ Ամեն. Տ. Նուրիան Արք. Մանուկեանին, Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքական Ընդհանուր Փոխանորդ Գերշ. Տ. Արամ Արքեպս. Աթէշեանին և Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան 37 թեմերու առաջնորդներուն:

Բաշխման արարողութենէն ետք Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնութիւնն ու պատգամը բերաւ ներկաներուն մաղթելով որ Տէրը հաստատուն պահէ Առաքելական Սուրբ Եկեղեցին իր Նուիրապետական Արոտներով հանդերձ և անոր հոգեւոր դասը զարդարէ Սրբալոյս Միտոնի շնորհներով՝ խանդավառ սրտով շարունակելու իր առաքելութիւնը Աստուծոյ փառքի և Հայ ժողովուրդի յարատեւման համար:



Բացօթեայ խորանին առջեւ

ՎԵՐԱԴԱՐՉ Ս. ԱԹՈՒՄ

Չորեքշաբթի, 30 Սեպտեմբեր 2015.- Առաւօտեան ժամը 6-ին Նուրիան Պատրիարք Սրբազան Հայրը մեկնեցաւ Էջմիածինէն: Պատրիարք Սրբազան Հօր ճանապարհելու եկած էին Գերշ. Տ. Յովնան Եպս. Յակոբեան, Գերշ. Տ. Նաթան Արք. Յովհաննիսեան, Հոգշ. Տ. Տիրայր Արք. Յակոբեան, Բրշ. Ռուտիկ Սրկ. Հայրապետեան: Պատրիարք Սրբազան Հայրը Ս. Յակոբ վերադարձաւ 30 Սեպտեմբերին:

Տօնակատարութիւններուն Հայաստան կը գտնուէին Միաբանութեանս անդամներէն՝ Արիս Արք. Շիրվանեան, Գիսակ Արք. Մուրատեան, Վիգէն Արք. Այրազեան, Խաժակ Արք. Պարսամեան, Ասպետ Վրդ. Պալեան, Գուսան Վրդ. Ալճանեան, Վազգէն Ծ. Վրդ. Գարայեան, Կորիւն Վրդ. Բաղդասարեան, Տիրան Արք. Յակոբեան:



Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՄԵԳԻՆ Բ.
ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՕՍԷԸ
ՍՐԲԱՆՅՍ ՄԻՌՈՆԻ
ՕԲՆՈՒԹԵԱՆ ԱՌԻՐՈՒ

Յանուն Հօր եւ Ռդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամեն:

«Զօրութեամբ ամենասուրբ Հոգւոյդ եղիցի իղս այս՝ իղ ցնծութեան, զգեստ լուսաւոր..., սրբութիւն հոգւոց և մարմնոց ..., կնիք արդարութեան, զէն հաւատոյ, նահատակ յաղթող ընդդէմ ամենայն գործոց բանասարկութիւն»:

(Աղօթք սուրբ Միտռնի օրհնութեան):

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ,

Ողորմած Աստուծոյ նախախնամութեամբ Հայոց Յեղասպանութեան 100-րդ տարւիցի ոգեկոչման տարում Միտռնի օրհնութեամբ հոգեւոր մի նոր ուրախութիւն է յեղուում մեր կեանքին: Տօնական մեծ օր է: Վարպայ Սուրբ Խաչի տօնն է՝ նուիրական յիշատակը Հայաստան բերուած տէրունական Խաչափայտի մասունքի հրաշքով յայտնուելու: Այս մեծասքանչ օրը հոգեւոր անհուն ուրախութեան զգացումներով համայն հայոց հոգեւոր կենտրոնում՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կատարեցինք սրբալոյս Միտռնի օրհնութիւնը:

Մեր աղօթքը բարձրացրեցինք առ Երկնաւոր մեր Հայրը, որ Իր Սուրբ Հոգու շնորհով նիւթեղէն այս իղը վերափոխուի սրբութեան ու շնորհաբաշխ գօրութեան: Մեր հայրերի օրհնութեան աղօթքով խնդրեցինք, որ «լինի իղ ցնծութեան, զգեստ լուսաւոր..., սրբութիւն հոգիների եւ մարմինների... կնիք արդարութեան, զէնք հաւատքի, յաղթող նահատակ ընդդէմ ամենայն գործոց բանասարկութիւն»: Խնդրեցինք, որ նրա սրբարար օծումով շարունակուի աստուածային պարգեւների յեղումը հաւատացեալների հոգիներին, հայոց մեր աշխարհին, համայն մեր ժողովրդի կեանքին:

Սրբալոյս Միտռնը տեսանելի նշանն է Քրիստոսով օծման, որն ընդունում ենք մկրտութեան միջոցով՝ իբրեւ ժառանգակից Փրկչի: Միտռնով զգեստաւորուում ենք Քրիստոսի



սրբութեամբ, մաքրում մեղքից, որպէսզի ապրենք Աստուծոյ արդարութեամբ: Միտռնը զարթօնք և զարուն է հոգիների, ծաղկում՝ հաւատքի, առաքինասէր կեանքի ու բարեպաշտ գործերի, վահան՝ ընդդէմ չարի, յաղթանակը, փառքն ու լուսեպսակը հաւատացեալների, բանգի Երկնաւոր մեր Հայրը Իր Ռդու միջոցով կոչեց մեզ մահուանից կեանքի, մեղքին ծառայութիւնից շնորհների ազատութեան և երկնային արքայութեան ժառանգութեան:

Աստուծոյ ողորմութեամբ այսօր աշխարհի բոլոր կողմերից ազգիս զաւակները ուխտաւորաբար համախմբուել են Սուրբ Էջմիածնում՝ աղօթակից լինելու սրբալոյս Միտռնի օրհնութեան արարողութեանը: Մեր ժողովրդի հազարաւոր զաւակների ներկայութիւնը այստեղ վկայում է մեր կեանքում կարեւորութիւնն ու արժէքը սուրբ Միտռնի, որ կնիքն է քրիստոնէական մեր ինքնութեան ու շողախը՝ ազգային մեր միասնակամութեան: Միտռնում տեսնում ենք նաեւ մեր ժողովրդի հանդէպ Աստուծոյ հոգածութիւնն ու խնամքը, Ով Իր փրկութեան շնորհը տարածեց Արարատի շուրջ սփռուած հայոց մեր երկրի ու ազգի վրայ: Միտռնի մէջ տեսնում ենք Սուրբ լեռն Արարատ, որի վրայ հանգրուանեց Նոյ Նահապետի փրկութեան տապանը, և աղաւնու

բերած ձիթնու շիղը դարձաւ խորհրդանիշը Աստուծոյ խաղաղութեան, իսկ ձիթնու իղը՝ օրհնեալ նիւթը սուրբ Միտռնի: Միտռնի ամեն կաթիլում տեսնում ենք սուրբ Թաղնոս առաքելի ձեռքով Հայաստան բերուած մեր Տիրոջ օծութեան իղը: Տեսնում ենք սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետի ձեռամբ Արածանիի՝ Արեւելեան Եփրատի ջրերում, երկնքում ծագած տէրունական խաչի լուսեղէն նշանի ներքոյ մկրտութիւնը հայոց Տրդատ արքայի, արքունիքի ու ժողովրդի: Միտռնում պատկերն է տէրունաշնորհ Սուրբ Էջմիածնի, պատկերները՝ միտռնաօծ մեր վանքերի ու եկեղեցիների, խաչքարերի ու մագաղաթների, պատկերները՝ իրենց կեանքով Միտռնի լոյսը տարածած մեր սրբերի: Միտռնը միախառնում է մեր անցեալն ու ներկան, այո, հաւատում ենք, և գալիք բոլոր դարերը, քանզի բոլոր փորձութիւնների հանդիման մեր ժողովուրդը անխախտ պահեց Միտռնի դրոշմը՝ աներկբայ վստահութեամբ, որ այն «իսկ է ցնծութեան, զգեստ լուսաւոր..., սրբութիւն հոգիների և մարմինների... կնիք արդարութեան, զէնք հաւատքի, յաղթող նահատակ ընդդէմ ամենայն գործոց բանսարկուի»:

Սուրբ Միտռնն իր հոգեղէն զօրութեամբ հաւատքի զէնք եղաւ նաեւ 100 տարի առաջ Հայոց Յեղասպանութեանը զոհ դարձած մեր ժողովրդի զաւակների համար, ովքեր յաղթող նահատակներ եղան՝ պահելով իրենց հաւատարմութիւնն առ Աստուած ու առ հայրենին: Եղեռնահար մեր ժողովուրդը միտռնադրոշմ հաւատքով վերապրեց Յեղասպանութիւնը, յաղթեց մահին: 100-ամեայ մեր ուղին եղաւ վերածննդի ուղի, և այսօր մեր անկախ պետականութեան հովանու ներքոյ ազգային զարթօնքի նոր հորիզոններ են լուսաւորուում: Մեր նորօրհնեալ կեանքի յուսալեռութեամբ նորանփայտ Միտռնը՝ օրհնուած Յեղասպանութեան 100-րդ տարելիցի նուիրական տարում, նաեւ՝ մեր սրբացեալ նահատակների բարեխօսութեան հայցով, կոչում ենք ՅԱՂԹՈՒԹԵԱՆ ՄԻՒՌՈՆՆ՝ հաւատով, որ այն հաւատացեալների հոգիներին դրոշմելու է մեր սուրբ նահատակների, Տիրոջ բոլոր վկաների և հայրենեաց պաշտպան մեր նախնեաց հոգու արիւթիւնն ու անպարտ ոգին:

Սիրելիներ, արժեւորենք մեր Միտռնը որպէս Միտռն սրբացեալ կեանքի, Միտռն վերագարթօնքի, որպէսզի հոգեւոր նորոգութեամբ, մեր արդար կեանքով ու ողորմած գործերով շարունակենք վերելքի մեր ուղին:

Արժեւորենք մեր Միտռնն իբրեւ շաղախ ազգային միասնականութեան, որպէսզի կարող լինենք յաղթահարել մեր կեանքի դժուարութիւնները, փարատել հոգսերն ու նեղութիւնները: Այսօր, երբ աշխարհը լի է տագնապներով, մարդկային կեանքեր խլող հակամարտութիւններով՝ յատկապէս Մերձատր Արեւելքում, ուր անասելի տառապանք և կորուստներ են կրում նաեւ մեր ժողովրդի զաւակները, երբ խաթարուած է անդորրը մեր հայրենիքի սահմաններում, և տակաւին արդար վճիռ չի ստացել մեր ժողովրդի իրաւունքների ճանաչումը, հրամայական է ամուր միասնականութեամբ զօրացնել մեր հայրենիքը, որ լինի ապաւենը համայն մեր ժողովրդի խաղաղ ու ապահով կեանքի, մեր արդար դատի յաղթանակի և ոգեշնչող ուժը՝ ազգային զարթօնքի:

Սուրբ Էջմիածնից բաշխուող սրբալոյս Միտռնը թող տարածի սրբութիւնը և հոգեւոր առաքինութիւնների անուշաբոյրը աշխարհում և հանուր մեր ժողովրդի կեանքում, ազգային-եկեղեցական մեր օրհնեալ անդաստաններում, հայ ընտանիքներում, մեր հայրենիքի սահմաններում, հայրենեաց պաշտպան մեր զինուորների, մեր Եկեղեցու բոլոր զաւակների սրտերում՝ դառնալով յաղթանակների և բարի գործոց նոր ձեռքբերումների զօրութիւն: Երանաշնորհ մեր Հայրապետներից Սիմէոն Երեւանցին Էջմիածնից սփռուող Միտռնի մասին ասում է. «Ինչպէս արեգակի ճառագայթն է ծանուցում արեգակի գեղեցկութիւնն ու օգտակարութիւնը, ինչի շնորհիւ կառավարուում է երկիրը և դալար մնում, ճիշտ այդպէս էլ սուրբ Միտռնն է միշտ քարոզում Սուրբ Էջմիածնի օգտակարութիւնն ու գեղեցկութիւնը: Ահա խորհրդաւոր արեգակ Սուրբ Էջմիածինը, որ լուսաւորում է ձեր հոգիներն ու մարմինները»: Թող Սուրբ Էջմիածնի Միտռնի յաւերժական լոյսը միշտ դրոշմուի մեր ժողովրդի զաւակաց հոգիներին, որպէսզի մշտապէս նորոգեն իրենց ուխտը առ Աստուած, ուխտը՝ առ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին ու նուիրական հայրենիքը: Թող աղանու բերած ձիթնու շիղով Արարատի փեշերից ազդարարուած Աստուծոյ խաղաղութիւնը ամրացնի արդարութեան, մարդասիրութեան ոգին աշխարհում, զօրացնի համերաշխութիւնը և համագործակցութիւնը մարդկանց և ազգերի:

Այս օրհնաբեր և հոգեւորոգ օրը Մենք գոհութիւն ենք վերառաքում առ Ամենակալն Աստուած, որ Մեզ վերստին շնորհը պարգեւեց

կատարելու Միտոնօրինութեան սրբազան արարողութիւնը՝ մասնակցութեամբ և աղօթակցութեամբ Հայաստանի Հանրապետութեան մեծարգոյ Նախագահ Տիար Մերժ Սարգսեանի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան մեծարգոյ Նախագահ Տիար Բակօ Սահակեանի, Մեր հոգեւոր եղբօրը՝ Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին ներկայացնող Գերաշնորհ Տ. Մուշեղ եւ Շահան Արքեպիսկոպոսների, Երուսաղէմի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Նուրիան Արքեպիսկոպոս Մանուկեանի, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքական Փոխանորդ Գերաշնորհ Տ. Արամ Արքեպիսկոպոս Աբեշեանի, քոյր Եկեղեցիների Գերապատիւ Հովուապետերի և բարձրապատիւ ներկայացուցիչների, ուխտապահ մեր հոգեւոր դասի, հայոց պետական աւագանու, դիւանագիտական առաքելութիւնների ղեկավարների և ներկայացուցիչների և հայրենաբնակ ու Սփիւռքից ժամանած մեր ժողովրդի բազում բարեպաշտ զաւակների: Հոգու բերկրութեամբ եղբայրական Մեր ողջոյնն ենք յղում Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա.

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամեն. Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Մութաֆեանին և քոյր Եկեղեցիների հոգեւոր Պետերին՝ աղօթքով ու մաղթանքով, որ Տէրը միշտ անսասան ու պայծառ պահի Իր Սուրբ Եկեղեցին Աւետարանի կենարար պատգամներով մարդկութեան կեանքը լուսատրելու և փրկութեան առաջնորդելու առաքելութեան մէջ:

Աղօթում ենք, որ Ամենակալ Տէրը խաղաղութիւն ու ապահովութիւն պարգևի աշխարհին և Հայաստան ու Արցախ հայրենի մեր երկրին: Եւ թող Տիրոջ Սուրբ Հոգու շնորհներով առատապէս օրհնուի մեր ժողովրդի և համայն մարդկութեան կեանքը:

Շնորհք, սէր և ողորմութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ մեզ և ընդ ամենեսեան. ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ԿԵԱՆԷ



ՄԱՅԻՍ 2015

Շաբաթ, 2 Մայիս. Առաւօտեան Ս. Պատարագ մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Ս. Գլխաղբի Խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Վազգէն Արդ. Ալեքեան:

Կիրակի 3 Մայիս. (Կարմիր Կիրակի) Ս. Պատարագ մատուցուեցաւ ի Ս. Յարութին, մեր վերնամատրան մէջ: Ժամարարան էր Տ. Տիրան Արդ. Յակոբեան:

Շաբաթ, 9 Մայիս. Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Գլխաղբի մատրան մէջ, ժամարարն էր Տ. Աղան Արդ. Գոգչեան:

Կիրակի, 10 Մայիս. «Տօն Երեւման Սրբոյ Խաչին», գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան Ս. Յակոբ Մայր Տաճարի մէջ, որմէ յետոյ Աւագ Խորանի վրայ մատուցուեցաւ Ս. և Անմահ Պատարագ: Պատարագեց և յաւոր պատշաճի քարոզեց Տ. Պարետ Ծ. Վրդ. Երեցեան: Կարդացուեցաւ Ս. Բարսեղ Հայրապետի Կոստանդ կայսեր ուղղած թուղթը՝ Ս. Խաչի լուսաւոր երեւումին առիթով: Աւագ սեղանի վրայ կը տեսնուէր Ս. Խաչին նշանը՝ վառ կանթեղներով զարդարուած:

Շաբաթ, 16 Մայիս. Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխաղբի մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շերպեճեան:

Կիրակի, 17 Մայիս. Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան Ս. Յակոբ Մայր Տաճարի մէջ, ապա մատուցուեցաւ Ս. Պատարագ Աւագ Խորանի ծախակողմը գտնուող Ս. Աստուածամայ խորանին վրայ: Պատարագեց և յաւոր պատշաճի քարոզեց Տ. Անտիս Վրդ. Իփրանեան՝ «Չէ աստ, այլ յարեան» բնաբանով:

Չորեքշաբթի, 20 Մայիս. Յաջորդ օրուայ Համբարձման Տօնին առթիւ, կէսօրէ վերջ ժամը 2:00-ին, Տ. Արիս Արք. Շիրվանեանի գլխաւորութեամբ, միաբան հայրեր ինքնաշարժով բարձրացան ձիթենեաց լեռ: Ամենապատի Պատրիարք Սրբազանը Ձիթենեաց լեռ ժամանեց ժամը 3:30-ին: Ժամը 4:00-ին Համբարձման Սրբավայրի շրջափակին մէջ պաշտուեցաւ երեկոյեան ժամերգութիւնն ու մեծահանդէս նախատօնակը՝ նախագահութեամբ Ամենապատի Պատրիարք Սրբազան Հօր: Իրիկնադէմին պաշտուեցան «Եկեացէ» ի և «Հսկման» կարգեր և ապա գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները Տ. Արիս Արք. Շիրվանեանի նախագահութեամբ: Արարողութիւնները վերջ գտան գիշերուան ժամը 10:00-ին:

Հինգշաբթի, 21 Մայիս. Համբարձումն Տեառն: Առաւօտեան ժամը 6:45-ին Տ. Արիս Արքեպիսկոպոսի գլխաւորութեամբ, միաբանութիւնը ինքնաշարժներով բարձրացաւ Ձիթենեաց լեռ և «Հրաշափառ»ով մուտք գործեց Համբարձման սրբատեղին, ուր մեր վերնամատրան մէջ օրուան Ս. Պատարագը մատուցուեց և Համբարձման խորհուրդին շուրջ քարոզեց Տ. Արիս Արք. Շիրվանեան: Քարոզէն ետք Ամենապատի Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ կատարուեցաւ «Հայրապետական Մաղթանք» Սիս մայրաքաղաքէն Ս. Էջմիածին փոխադրութեան տարեդարձի առիթով: Իսկ Ս. Պատարագէն ետք պատարագիչ Տ. Արիս Արք. ի նախագահութեամբ կատարուեցաւ «Անդաստան» Համբարձման սրբավայրի առջեւ:

Շաբաթ, 23 Մայիս. Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի վերնայարկի վրայ. ժամարարն էր Տ. Թեոդորոս Վրդ. Չաքաբեան: Կէսօրէ վերջ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ պաշտուեցաւ Բ. Ծաղկազարդի նախատօնակը: Հանդիսապետն էր Տ. Արիս Արք. Շիրվանեան:

Կիրակի, 24 Մայիս. Երկրորդ Ծաղկազարդ: Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ, ապա մատուցուեցաւ Ս. Պատարագ: Ժամարարն էր Տ. Նորայր Վրդ. Գազազեան:

Շաբաթ, 30 Մայիս. Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Առաքելոց վերնա-

մատրան մէջ. ժամարարն էր Տ. Շնորհք Աբղ. Պալոյեան:

Երեկոյեան Հոգեգալստեան մեծահանդէս նախատօնակին ի Ս. Յակոբ՝ նախագահեց Ամենապատիւ Պարտիարք Սրբազան Հայրը:

Իրիկնադէմին Մայր Տաճարի մէջ պաշտուեցան «Եկեացէ» ի «Հսկման» կարգեր: Հանդիսապետն էր Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Կիրակի, 31 Մայիս. - Հոգեգալուստ: Օրուան հանդիսատար Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Խորանին վրայ մատոյց Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան, եպիսկոպոսական խոյր ի գլուխ: Ս. Պատարագի ընթացքին «Առէք կերէք» են առաջ կարդացուեցաւ Ս. Յովհաննու Ոսկերերան Հայրապետի Հոգեգալստեան ներբողը:

Կէսօրէ ետք ժամը 3:00-ին Միաբանութիւնը մեկնեցաւ մեր գերեզմանատան մօտ գտնուող Վերնատունը, ուր կատարուեցաւ երեկոյեան ժամերգութիւն, որմէ յետոյ Միաբանութիւնը մտաւ Ս. Փրկիչի մեր գերեզմանատունը և հոգեհանգստեան պաշտօն կատարեց մեր Աբողի հանգուցեալ Պատրիարքներու հոգիներու հանգստութեան համար:

ՅՈՒՆԻՍ

Շաբաթ, 6 Յունիս. - Յետ ժամերգութեանց Ս. Պատարագ մատուցուեցաւ Մայր Տաճարի Գլխադրի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Գեորգ Աբղ. Հայրապետեան:

Կիրակի, 7 Յունիս. - Յիշատակ Եղիայի Մարգարէին: Առաւօտեան ժամերգութիւնը կատարուեցաւ Մայր Տաճարի մէջ, իսկ Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամատրան մէջ: Ժամարարն էր Տ. Ներսէս Աբղ. Աղոյեան:

Կէսօրէ ետք Ս. Հռիփսիմեանց նախաճ տօնակը պաշտուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցոյ մէջ:

Երկուշաբթի, 9 Յունիս. - Ս. Կուսանացն Հռիփսիմեանց: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Հրեշտակապետ, իսկ Ս. Պատարագը մատուցուեցաւ եկեղեցոյ աւանդատան՝ Ս. Հռիփսիմեանց մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Գեղամ Ծ. Վրդ. Զաքարեան:

Շաբաթ, 13 Յունիս. - Ս. Գրիգոր Լուսատրչի Ելն ի Վիրապէն տօնին առթիւ Ս. Պատարագ մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան՝ Ս. Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

Նախատօնակին ի Սուրբ Յակոբ նախագահեց Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրը, ըստ սովորութեան, արարողութեանց աւարտին երգուեցաւ «Տէր Ողորմեա» (*):

Կիրակի, 14 Յունիս. - Տօն Կաթողիկէ Եկեղեցոյ Ս. Էջմիածնի: Հանդիսատար Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ սեղանին վրայ. ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան: «Հայր Մեր» են առաջ Ս. Պատրիարք Հօր նախագահութեամբ կատարուեցաւ «Հայրապետական Մաղթանք»:

Շաբաթ, 20 Յունիս. - «Տօն Մեծին Ներսէսի Հայրապետին մերոյ և Խաղայ եպիսկոպոսին»: Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները, ինչպէս նաեւ Ս. Պատարագը պաշտուեցան Ս. Հրեշտակապետաց վանքին մէջ: Ժամարարն էր Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Կիրակի, 21 Յունիս. - Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր Վերնամատրան մէջ: Ժամարարն էր Տ. Բագրատ Վրդ. Պուրճեքեան:

Շաբաթ, 27 Յունիս. - Գիւտ Նշխարաց Սրբոյ մերոյ Գրիգորի Լուսատրչին տօնին առթիւ գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները, ինչպէս նաեւ Ս. Պատարագը պաշտուեցան Ս. Հրեշտակապետաց վանքին մէջ: Ժամարան էր Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան:

Կիրակի, 28 Յունիս. - Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները կատարուեցան Ս. Հրեշտակապետաց վանքին մէջ: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գրիգոր Լուսատրիչ եկեղեցին ի Նոր Երուսաղէմ: Ժամարարն էր Տ. Աետնդ Վրդ. Յովհաննիսեան:

ՅՈՒՆԻՍ

Չորեքշաբթի, 1 Յուլիս. - Յաջորդ օրուայ Տօնի նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Հինգշաբթի, 2 Յուլիս. - «Սրբոց Թարգմանչաց Վարդապետացն մերոց Սահակայ և Մեսրոպայ» (Տօն ազգային): Գիշերային և առաօտեան ժամերգութիւնները կատարուեցան ի Սուրբ Հրեշտակապետաց, ապա մատուցուեցաւ Ս. Պատարագ. ժամարարն էր Տ. Վազգէն Արդ. Ալիքեան:

Շաբաթ, 4 Յուլիս. - «Սրբոց Տրդատայ քաղաւորին մերոյ և Աշխէն Տիկնոջն և Խոսրովիդոխտին»: Գիշերային և առաօտեան ժամերգութիւններէ ետքը մատուցուեցաւ Ս. Պատարագ ի Ս. Հրեշտակապետաց. ժամարարն էր Տ. Տիրան Արդ. Յակոբեան:

Կէսօրէ ետք դարձեալ ի Սուրբ Հրեշտակապետաց յաջորդ օրուայ Տօնի նախատօնակին նախագահեց Ամենապատիւ Սրբազան Հայրը:



Ս. Հրեշտակապետաց

Կիրակի, 5 Յուլիս. - «Գիտ տփոյ Ս. Աստուածածնի». գիշերային և առաօտեան ժամերգութիւններ կատարուեցան ի Ս. Հրեշտակապետ, որմէ յետոյ միաբան միաբան հայրեր ինքնաշարժներով մեկնեցան Գեթսեմանի Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Սուրբ Գերեզմանին վրայ Ս. Պատարագը մատուց Տ. Աղան Արդ. Գոռչեան:

Ուրբաթ, 10 Յուլիս. - Յաջորդ օրուայ նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 11 Յուլիս. - Սրբոց երկուսասան Առաքելոցն Քրիստոսի և Պօղոսի՝ երեքտասաներորդ առաքելոյն: Նկատի ունենալով որ նորոգութիւններ կը կատարուին Ս. Յակոբ Մայր Տաճարին մէջ, Ս. Պօղոսի Վերնա-

մատրան փոխարէն Սուրբ ժամերգութիւններն ու Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Հրեշտակապետաց վանքին մէջ: Ժամարարն էր Տ. Պարեո Ճ. Վրդ. Երեցեան:

Կիրակի, 12 Յուլիս. - Առաօտեան ժամերգութիւնը կատարուեցաւ ի Սուրբ. Հրեշտակապետաց, որմէ յետոյ միաբան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան Տաճար: Պատարագը մատուցուեցաւ մեր Վերնամատրան մէջ: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շերայեճեան:

Ուրբաթ, 15 Յուլիս. - Յաջորդ օրուայ նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 18 Յուլիս. - «Յիշատակ Տապանակին Հնոյ եւ տօն նորոյս Ս. Եկեղեցոյ»: Գիշերային եւ առաօտեան ժամերգութիւններէն յետոյ ի Ս. Հրեշտակապետաց մատուցուեցաւ Ս. Պատարագ: Ժամարարն էր Տ. Աւետիս Վրդ. Իփրաճեան:

Կէսօրէ ետք միաբան հայրեր կրկին մեկնեցան Ս. Հրեշտակապետաց վանքը, համաձայն Ս. Աբողի աւանդութեան Վարդապետ տօնի նախընթաց օրը կը կատարուի նախատօնակ եւ կ'երգուի Յակոբոս Առաքելի տօնի յատուկ «Յաղթող Գտաւ» շարականը: Նախատօնակին նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Իրիկնադէմին նոյն եկեղեցոյ մէջ պաշտուեցան «Եկեցե՛ք» ի և «Հսկման» արարողութիւններ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Կիրակի, 19 Յուլիս. - Վարդապետ, «Տօն Այլակեպութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»: Գիշերային և առաօտեան ժամերգութիւնները, ինչպէս նաեւ «Անդաստան» ի կարգը կատարուեցան Ս. Հրեշտակապետաց վանքին մէջ, որմէ յետոյ մատուցուեցան Ս. Պատարագ. Պատարագեց եւ քարոզեց Տ. Սամուէլ Ճ. Վրդ. Աղոյեան:

Երկուշաբթի, 20 Յուլիս. - Յիշատակ Մեռելոց. Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Ներսէս Արդ. Աղոյեան: Ս. Պատարագէն ետքը կատարուեցաւ «Հոգեհանգստեան Պաշտօն» ազգիս համօրէն ննջեցեալներու եւ հաւատացեալներու հանգուցեալ հարազատներու հոգիներուն համար:

Ուրբաթ, 24 Յուլիս.- Յաջորդ օրուայ տօնին նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 25 Յուլիս.- «Սրբոցն Թաղէոսի Առաքելոյն մերոյ և Սանդիստոյ Կոստին»։ Գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւններէ յետոյ ի Ս. Հրեշտակապետաց, մատուցուեցաւ Ս. Պատարագ: Ժամարարն էր Տ. Գեղամ Ծ. Վրդ. Չաքարեան:

Կիրակի, 26 Յուլիս.- Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց, որմէ յետոյ միաբան հայրեր մեկնեցան Ս. Յարութին. Պատարագ մատուցուեցաւ մեր վերնամատրան մէջ: Ժամարարն էր Տ. Բագրատ Վրդ. Պուրճեքեան:

Օգոստոս

Շաբաթ, 1 Օգոստոս.- Սրբոց Որդոց և Թոռունց Սրբոյն Գրիգորի Լուսատրչին մերոյ՝ Արիստակէսի, Վրթանէսի, Յուսկանն, Գրիգորիսի եւ Դանիէլի»։ Ս. Պատարագը մատուցուեցաւ իր Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Էմմանուէլ Վրդ. Աթաջանեան:

Կիրակի, 2 Օգոստոս.- Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները կատարուեցան ի Ս. Հրեշտակապետաց, որմէ յետոյ մատուցուեցաւ Ս. Պատարագ. Ժամարարն էր Տ. Կորուն Վրդ. Բաղդասարեան:

Շաբաթ, 8 Օգոստոս.- «Սրբոյն Թէոդոսի Թագաւորին եւ Մանկանցն Եփեսոսի»։ Սուրբ Պատարագ մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Պարեո Ծ. Վրդ. Երեցեան:

Կիրակի, 9 Օգոստոս.- Առաւօտեան ժամերգութիւնը կատարուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց, որմէ յետոյ միաբան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան տաճար: Ս. Պատարագը մատուցուեցաւ տաճարի վերնամատրան մէջ. Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շերպէքեան: Երբ ու դարձին թափօրին նախագահեց Տ. Արիս Արք. Շիրվանեան:

Շաբաթ, 15 Օգոստոս.- «Սրբոց Հայրապետացն Աբանասի, Կիրղի և Գրիգորի Աստուածաբանին»։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս.

Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Աւետիս Վրդ. Իփրաճեան:

Կիրակի, 16 Օգոստոս.- Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները կատարուեցան ի Ս. Հրեշտակապետաց, որմէ յետոյ մատուցուեցաւ Ս. Պատարագ: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Վրդ. Չաքարեան: Յաւարտ Ս. Պատարագի կատարուեցաւ խաղողի օրհնութիւն:

Երկուշաբթի, 17 Օգոստոս.- Այսօր սկսաւ Ս. Կոյսի վերափոխման տօնը կանխող ամենօրեայ հանդիսաւոր պատարագներու մատուցումը Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ:

Շաբաթ, 22 Օգոստոս.- «Եփեսոսի Ս. Ժողովոյն երկու հարիւր Հայրապետացն»։ Առաւօտեան ժամերգութիւնը կատարուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց, որմէ յետոյ միաբան հայրեր և ժառանգաւոր սաներ մեկնեցան Գեթսեմանիի պարտէզ: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Կոյսի գերեզմանին վրայ: Ժամարարն էր Տ. Էմմանուէլ Վրդ. Աթաջանեան:

Կիրակի, 23 Օգոստոս.- «Բարեկենդան Ս. Աստուածածնի Պահոց»։ Գիշերային ժամերգութիւնը կատարուեցաւ Ս. Հրեշտակապետաց վանքին մէջ, որմէ յետոյ միաբան հայրեր եւ ժառանգաւոր սաներ մեկնեցան Ս. Յարութեան Տաճար. Ս. Պատարագը մատուցուեցաւ Տաճարին մեր վերնատան մէջ. Ժամարարն էր Տ. Նորայր Վրդ. Գազազեան: Երբ ու դարձին թափօրին նախագահեց Տ. Արիս Արք. Շիրվանեան:

Ուրբաթ, 28 Օգոստոս.- Յաջորդ օրուայ տօնի նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց, նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 29 Օգոստոս.- «Տօն Շողակաթի Սրբոյ Էջմիածնի՝ ըստ տեսլեանն Սրբոյն Գրիգորի Լուսատրչին մերոյ»։ Գիշերային ժամերգութիւնը կատարուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց:

Կէսօրէ վերջ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ միաբանութիւնը ինքնաշարժով մեկնեցաւ Գեթսեմանի ձորը ու «Հռաշափառ»ով մուտք գործեց Ս. Աստուածածնայ Տաճար, ուր պաշտուեցաւ երեկոյեան ժամերգութիւնն ու վերափոխման

մեծահանդէս նախատօնակը՝ նախագահութեամբ Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր:

Գիշերասկիզբին, նոյն տաճարին մէջ պաշտուեցան «Եկեացէ՛»ի «Հսկման» կարգերը և ապա առաւօտեան ժամերգութիւն: Հանդիսապետն էր Տ. Արիս Արք. Շիրվանեան: Արարողութիւնները վերջ գտան գիշերուայ ժամը 10:00-ին:

Կիրակի, 30 Օգոստոս. - «Վերափոխումն Ս. Աստուածածնի». Առաւօտեան ժամը 9:00-ին Տ. Սեւան Արք. Ղարիպեանի գլխաւորութեամբ, միաբան հայրեր ինքնաշարժով մեկնեցան Գերեսեմանի ձորը ու «Հռաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տ. Պարեա Ծ. Վրդ. Երեցեան, եպիսկոպոսական խոյր ի գլուխ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ մատոյգ հանդիսատւոր Ս. Պատարագը և յաւուր պատշաճի քարոզեց: Ս. Պատարագէն ետք Ս. Կոյսի Գերեզմանին վրայ կատարուեցաւ «Անդաստան»: Երբ ու դարձի թափօրներուն նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Արարողութիւնները կատարուեցան կ. ա. ժամը 11:45-ին:

Երկուշաբթի, 31 Օգոստոս. - «Յիշատակ Մեռելոց»: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Գեորգ Արք. Հայրապետեան, ապա Տ. Արիս Արք. Շիրվանեանի նախագահութեամբ կատարուեցաւ հոգեհանգստեան կարգը ազգիս համօրէն ննջեցեալներու հոգիներու փրկութեան համար:



Ս. Աստուածածնայ Տաճարի մուտքը

ԵՐԶԱՆԿԱՅԻՇԱՏԱԿ ՎԱԶԳԷՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳՈՀԱՐ ԽՕՍՔԵՐԷՆ



Անցեալը մոռացութեան տուած ժողովուրդ մը կը նմանի մարդու մը, որ կորսնցուցեր է իր յիշողութիւնը:

Սակայն ճշմարիտ է նաեւ այն, որ երբ ժողովուրդ մը կանգնած կը մնայ անց-

եալի ժառանգութեան վրայ առանց ներկայ լիութեամբ ու ստեղծագործօրէն ապրելու, առանց նոր խօսք ըսելու, առանց նոր արժէքներ ստեղծելու նոր ժամանակներու տարագով, այդ ժողովուրդի առջեւ կը փակուին դէպի ապագայ տանող դուռերը: Որքան ալ հարուստ եղած ըլլայ ժողովուրդի անցեալի ժառանգութիւնը, այդ կը դառնայ թանգարանի առարկայ:

Այո՛, դո՛ւն ժողովուրդ Հայոց, դուն «հօտ փոքրիկ», անգին, անմման, հազիւ փրկուած պատմութեան արհաւիրքներէն և վերջապէս հասած խաղաղ ու անվտանգ կեանքի ափին, դուն թեւեղ երկինք տարածած, աղօթէ այսօր, և մենք ալ քեզի հետ, որ Յարութեան լոյսը յաղթէ խաւարին, մէզին, բարին՝ չար ձեռքին, արդարութիւնը՝ սուտին, կեղծիքին, ազատութիւնը բռնութեան դաւին, խաղաղութեան երկնառաք ոգին՝ պատերազմի մահուան ոյժերուն, զի «յարեաւ Բրիստոս» արեգակն արդար:

*
* *

Ի՛նչ ունայնութիւն հոգեւորականի մը համար դրամ սիրել և ձգտիլ հարստութիւն դիզելու, երբեմն նոյնիսկ տօգել և ապօրէն միջոցներով: Ինչքա՛ն աղքատութիւն կայ այդպիսի հարստութեան մէջ: Եւ ինչքա՛ն անկողնչելի հարստութիւն ունին բոլոր անոնք, որ Պօղոս առաքեալի նման ոչինչ ունին, բայց ամէն բան ունին:



Գշ. 5 Մայ.- Երեկոյեան ժամը 4-ին, Հայաստանէն Ապարանի Ս. Խաչ եկեղեցոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Մուշէ Քինյ. Վահանեան, ուխտատուներու խումբով այցելեցին Պատրիարքարան և ստացան Պատրիարք Սրբազան Հօր օրհնութիւնը:

Շբ. 9 Մայ.- Եւրոպական Միութեան կողմէ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցաւ Արիս Արք. Շիրվանեան:

Գշ. 20 Մայ.- Առաւօտեան ժամը 9:30-ին, Վատիկանի Ձեռագրատան տնօրէն Fr. Jack Mon-segnieur Cesare Pasini այցելեց Պատրիարքարան և հանդիպեցաւ Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Ուր. 22 Մայ.- Առաւօտեան ժամը 9:30-ին, Երեւանի Նորք-Մարաշ շրջանի Ս. Աստուածածին եկեղեցոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Չարարիա Քինյ. Աւետիսեան ուխտատուներու խումբով այցելեցին Պատրիարքարան և ստացան Պատրիարք Սրբազան Հօր օրհնութիւնը:

Ուր. 29 Մայ.- Ս. Արքողոյս Լուսարարապետ Գերշ. Տ. Սեւան Արք. Ղարիպեան, ընկերակցութեամբ Տ. Արիս Արք. Շիրվանեանի, Տ. Տիրան Արդ. Յակոբեանի և Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեանի օրհնեց Եաֆայի Ս. Նիկողայոս եկեղեցոյ Հայոց Յեղասպանութեան 100-ամեակին նուիրուած խաչքարը:

Բշ. 1 Յուն.- Երուսաղէմի Իտալական Ընդհանուր Հիւպատոսարանին կողմէ անկախութեան տարեդարձին առիթով կազմակերպուած հիւրասիրութեան ներկայ գտնուեցան Տ. Արիս Արք. Շիրվանեան և Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Եշ. 4 Յուն.- Երուսաղէմի Ամերիկեան դեսպանատան կողմէ անկախութեան տարեդարձին առիթով կազմակերպուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Տ. Արիս Արք. Շիրվանեան և Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Ուր. 5 Յուն.- Առաւօտեան ժամը 9-ին, Հայաստանէն՝ Եռաբլուրի Նահատակաց Ս. Վարդան եկեղեցոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ.

Տիրայր Ա. Քինյ. Սահրաղեան ուխտատուներու խումբով այցելեցին Պատրիարքարան և ստացան Պատրիարք Սրբազան Հօր օրհնութիւնը:

Շբ. 6 Յուն.- Ս. Արքողոյս Լուսարարապետ Գերշ. Տ. Սեւան Արք. Ղարիպեան ընկերակցութեամբ Տ. Արիս Արք. Շիրվանեանի, Տ. Աղան Արդ. Գոգշեանի և Տ. Տիրայր Քինյ. Յովակիմեանի, օրհնեց Հայֆայի Ս. Եղիա եկեղեցոյ բակին մէջ Հայոց Յեղասպանութեան 100-րդ տարելիցին առիթով կանգնած խաչքարը, ի յիշատակ Մեծ Եղեռնի ընթացքին ինկած 1.5 միլիոն նահատակներու:

Եշ. 11 Յուն.- Երեկոյեան ժամը 4-ին, Ամերիկայէն Արժ. Տ. Յովսէփ Քինյ. Կարապետեան երիտասարդ ուխտատուներու խումբով այցելեցին Պատրիարքարան և ստացան Պատրիարք Սրբազան Հօր օրհնութիւնը:

Նոյն օրը երեկոյեան ժամը 7:30-ին, Ժառանգաւորաց Վարժարանի մեծ սրահէն ներս, նախագահութեամբ Ս. Արքողոյս Լուսարարապետ Գերշ. Տ. Սեւան Արք. Ղարիպեանի, տեղի ունեցաւ Ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի Ամովերջեան հանդէսը: Այս տարի շրջանաւարտներ չկային ո՛չ Ընծայարանի և ո՛չ ալ Վարժարանի մէջ: Հանդիսութեան բացման խօսքէն ետք, ամբողջ երեկոյի ընթացքին Ընծայարանի և Ժառանգաւորաց Վարժարանի սաները հանդէս եկան ասմունքով, մեներգերով ու խմբերգներով: Հանդիսութեան վերջաւորութեան Վարժարանի Տեսուչ Հոգշ. Տ. Թեոդորոս Վրդ. Չարարեան ներկայացուց Վարժարանի և Ընծայարանի 2014-2015 ուսումնական տարուայ տեղեկագիրը, ապա հրաւիրեց Լուսարարապետ Սրբազան Հայրը, որպէսզի յանձնէ Վարժարանի և Ընծայարանի առաջադէմ աշակերտներու մրցանակները, ապա Սրբազան Հայրը իր պատգամը փոխանցեց Վարժարանի և Ընծայարանի սաներուն: Երեկոն փակուեցաւ Ս. Արքողոյս Օրհներգով և Պահպանիչով, ապա ներկաներ պատուուեցան հիւրասիրութեամբ:

Շբ. 13 Յուն.- Ս. Անրոնի օրուայ առիթով Ֆրանչիսկեաններու կողմէ տրուած ճաշին ներկայ գտնուեցան Տ. Արիս Արք. Շիրվանեան եւ Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Գշ. 16 Յուն.- Անգլիական Ընդհանուր Հիւպատոսարանին կողմէ, Էլիզապէթ Բ. Թագուհիի ծննդեան օրուայ առիթով կազմակերպուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Տ. Արիս Արք. Շիրվանեան և Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Գ2. 23 Յուն.- Առաւօտեան ժամը 10-ին, Պաղեստինեան քանգարանէն գրող Պրն. Շար Բարսեղեան այցելեց Պատրիարքարան և հանդիպեցաւ Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Գ2. 1 Յուլ.- Հայաստանէն Կեներալ (հրամանատար) Սեյրան Սարոյեան և Սիւնիքի մարզպետ Պրն. Սուրիկ Խաչատրեան այցելեցին Պատրիարքարան և հանդիպեցան Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Գ2. 7 Յուլ.- Առաւօտեան ժամը 9:30-ին, Ամերիկայէն՝ Տաճարական Ասպետներ այցելեցին Պատրիարքարան և հանդիպում ունեցան Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Նոյն օրը երեկոյեան ժամը 4-ին Գէյմպրիճ, Մասսաչուսեթսի Ս. Երրորդութիւն եկեղեցոյ հոգեւոր հովիւ Արժ. Ս. Վազգէն Քինյ. Գուգուեան 20 ծխականներու հետ այցելեցին Պատրիարքարան եւ ստացան Պատրիարք Սրբազան Հօր օրհնութիւնը:

Գ2. 8 Յուլ.- Իսրայէլի Խորհրդարանի կրթութեան, գիտութեան և սպորտի յանձնաժողովը քննարկեց Յեղասպանութեան ճանաչման նախագիծը: Հայոց Յեղասպանութեան ճանաչման բանաձեւը հրեայ պատգամատորներու ուշադրութեան յանձնուած էր դեռեւս 12 Մայիսին, երբ Զախակողմեան կուսակցութեան ղեկավար Տիկ. Զահաւա Կալոն բանաձեւը օրակարգին մէջ քննարկելու առաջարկութեամբ հանդէս եկած էր: Այն ժամանակ հարցը փոխանցուեցաւ կրթութեան, գիտութեան և սպորտի յանձնաժողովին, որ կազմակերպած էր սոյն լիազումար բաց քննարկումը:

Այս քննարկման ընթացքին բաւական լուրջ յաջողութիւններ արձանագրուեցան: Նիստի ընթացքին ելոյթ ունցան Հայ ժողովուրդի բարեկամ և նախկին բազմաթիւ պատգամատորներ ու փրոֆեսորներ, նոյնիսկ այս առնչութեամբ սովորաբար բացասական դիրքորոշում ունեցող Իսրայէլի Արտաքին Գործոց նախարարութեան ներկայացուցիչը դրական արտայայտուեցաւ ի նպաստ Յեղասպանութեան ճանաչման՝ ըսելով թէ Հայ-Հրեական յարաբերութիւնները երթալով աւելի կը սերտանան: Այս անգամ դէմ արտայայտութեամբ որեւէ ելոյթ չեղաւ:

Հայկական պատուիրակութիւնը կը ղեկավարէր Իսրայէլի մէջ Պատուոյ Հիւպատոս Պրն. Յոլակ Մոմճեան, իսկ Սեր Պատրիարքարանը կը ներկայացնէր Ս. Աթոռոյս միաբան Հոգ2. Ս. Կորիւն Վրդ. Բաղդասարեան,

քննարկմանը ներկայ էին նաեւ Երուսաղէմի Հայ Դատի յանձնախումբի ներկայացուցիչներ:

Նիստի ընթացքին որոշուեցաւ նախագիծը լիազումար քննարկման դնել, որպէսզի Հայոց Յեղասպանութեան ճանաչման բանաձեւի հարցը Իսրայէլի Խորհրդարանին մէջ վերջնականապէս լուծուի: Որոշուեցաւ նաեւ հարցը քննարկել 21 Սեպտեմբերին՝ Հայաստանի Հանրապետութեան Անկախութեան օրը: Երրորդ կարեւոր որոշումը կը վերաբերի կրթութեան և գիտութեան նախարարութեան, որուն խորհրդարանական յանձնաժողովը յատուկ յանձնարարութիւններ տուաւ, աւելի խորութեամբ ուսումնասիրել Հայոց Յեղասպանութեան հարցը և փոփոխութիւններ մտցնել նաեւ ուսումնական ծրագիրներու մէջ:

Ե2. 9 Յուլ.- Առաւօտեան ժամը 10:30-ին, Երուսաղէմի Հ.Ե.Մ. Ակումբի կողմէ կազմակերպուած Ամառնայի Դպրոցի երախաները այցելեցին Պատրիարքարան և ստացան Պատրիարք Սրբազան Հօր օրհնութիւնը:

Ամառնայի Դպրոցի կազմակերպման նպատակը եղած է տարբեր հետաքրքրական զբաղումներ կազմակերպել գաղութիս պզտիկներուն համար: Շարք մը առաջ անոնք այցելեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ապա Տաճարին Տեսուչ Հոգ2. Ս. Հայրիկ Վրդ. Գալայճեանի կողմէ ընդունուեցան Գեթսեմանի պարտէզին մէջ և նախաճաշեցին:

Ե2. 27 Օգոս.- Հայաստանէն Դիլիջանի Ս. Խաչ եկեղեցոյ հոգեւոր հովիւ Արժ. Ս. Շաւարշ Քինյ. Սիմոնեան ուխտատուներու խումբով այցելեցին Պատրիարքարան և ստացան Պատրիարք Սրբազան Հօր օրհնութիւնը:

Գ2. 1 Սեպ.- Դպրոցական նոր տարեմուտին Սրբոց Թարգմանչաց վարժարանը վերամուտը սկսաւ 170 աշակերտներով: Տարեմուտի արարողութիւնը տեղի ունեցաւ առաւօտեան ժամը 8-ին, ներկայութեամբ Ս. Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերշ. Ս. Սեւան Արք. Ղարիպեանի, Երուսաղէմի մէջ Պատուոյ Հիւպատոս Տիար Յոլակ Մոմճեանի և Միաբանութեան անդամներուն: Վարժարանի Տեսուչ Հոգ2. Ս. Նորայր Վրդ. Գազազեանի բարիգալուստի խօսքերէն ետք, Սրբազան Հայրը ողջունեց ներկաները, քաջալերեց աշակերտները նոր տարին նոր եռանդով սկսելու համար: Ապա Սրբազան Հայրն ու միաբան եղբայրները այցելեցին մանկապարտէզի նորոգուած սենեակները տեսնելու և ապա հիւրասիրուեցան

Տեսուչ Հայր Սուրբին կողմէ տեսչարանին մէջ:

Ուր. 4 Մեպ.- Առաւօտեան ժամը 9-ին, կատարուեցաւ ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի վերաբացումը: Վերամուտի արարողութեան ներկայ էին Ս. Յակոբեանց Միաբանութեան անդամներ և ուսուցչական կազմը, գլխատրութեամբ Ս. Աթոռոյս Լուսարարապետ Գերշ. Ս. Սեւան Արք. Ղարիպեանի: Ըստ աւանդութեան՝ դարձեալ Աւետարան ընթերցուեցաւ, ապա Վարժարանի Տեսուչ Հոգշ. Ս. Թեոդորոս Վրդ. Չաքարեանի բարի գալուստի խօսքերէն ետք, Լուսարարապետ Սրբազան Հայրը ժառանգաւոր սաներուն բաջալերեց իր հայրական խրատներով ու բարի երթ մաղթեց:

Եշ. 10 Մեպ.- Առաւօտեան ժամը 10-ին, Ամերիկայէն Նիւ Եորքի Ռեսպէսըրը շրջանի Սբ. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցոյ նախկին հոգեւոր հովիւ, (այժմ հանգստեան կոչուած), Արժ. Ս. Գարեգին Աւագ Քհնյ. Գասպարեան, ուխտաւորներու խումբով այցելեցին Պատրիարքարան և ստացան Պատրիարք Սրբազան Հօր օրհնութիւնը:

Բշ. 21 Մեպ.- Երուսաղէմի Անկլիքան եկեղեցոյ Արքեպս. Գերշ. Ս. Սուիէլ Տաւանի այցելեց Պատրիարքարան և հանդիպեցաւ Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Նոյն օրը երեկոյեան ժամը 7-ին, Նոթր-Տամ հիւրանոցին մէջ, հիւրասիրութեամբ Երուսաղէմի Պատուոյ Հիւպատոս Պրն. Յուլակ Մոմճեանի, տօնախմբուեցաւ ԻԳ. տարեդարձը Հայաստանի Հանրապետութեան անկախութեան, որուն մասնակցեցաւ Լուսարարապետ Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Միաբանութեանս հոգեւորական հայրերուն:

Դշ. 23 Մեպ.- Նիւ Երսիէն Վանքիս հիւրն էր Արժ. Ս. Արշէն Ա. Քհնյ. Այվազեան:

Ուր. 25 Մեպ.- Հայաստանէն Արժ. Ս. Ժիրայր Քհնյ. Խաչատրեան, ուխտաւորներու խումբով այցելեցին Պատրիարքարան և ստացան Պատրիարք Սրբազան Հօր օրհնութիւնը:

Գշ. 13 Հոկ.- Շաքաբական այցելութեամբ Վանքիս հիւրն էր Հայաստանէն ժամանած Գերշ. Ս. Սիոն Եպս. Աղամեան:



ՔԱՋԱԼԵՐԱԿԱՆ ՆԱՄԱԿ ԹՈՐՈՆԹՈՅԷՆ, ԳԱՆԱՍՍ

"The revival of 'SION' is a miracle in Diasporan national and cultural life. While print publications - including non-Armenian - are folding everywhere, you've done the impossible by producing a quality bilingual publication that is of interest to Armenians everywhere. The variety, the quality, the presentation are top notch. Congratulations. Knowing how difficult it is to produce such a publication at the best of times, I hesitate to recommend that it becomes a monthly. Patriarch Nurhan should be congratulated for bringing back the august publication. Congratulations also to veteran journalist and teacher Minas Kojayan for conceiving the editorial package of the revitalized 'SION' and for making it a marvelous addition to modern Armenian journalism."

Hagop Sarkissian
Toronto

Կարեւոր Յանձնում մը

Սաղիմահայ պատմութեան աւելի ամրոցական պատկերը տալու նախանձախնդրութեամբ ընթերցողներու ուշադրութեան կը յանձնենք հետեւեալ պարագան, որ կ'առնչուի Յեղասպանութեան 100-րդ տարելիցին հետ:

ա.- Հարիւրամեակի ձեռնարկները ծրագրուած ու գործադրուած էին Միացեալ Յանձնախումբին կողմէ՝ հովանաւորութեամբ և նախագահութեամբ Երուսաղէմի Հայ Պատրիարք Ամեն. Ս. Նուրիան Արք. Մանուկեանի: Յանձնախումբը բաղկացած էր Սաղիմահայ երեք ակումբներու և Միաբանութեան ներկայացուցիչներէ:

բ.- Ձեռնարկներու շարքը սկսաւ Պարոնտէր կալուածին մէջ ձիթենիներու ծառատնկումով: Ելոյթներ ունեցան Ս. Արիս Արք. Շիրվանեան, Ս. Կորիւն Վրդ. Բաղդասարեան և Յակոբ Անդրեասեան:

գ.- Ապրիլ 23-24-ի երկօրեայ համաժողովրդական հանդիսութեանց և խաղաղ երթերու ընթացքին ելոյթներով հանդէս եկան Պրնք. Սերոբ Սահակեան (Ապրիլ 23-ի ձեռնարկի հանդիսավար), Յակոբ Անդրեասեան, Գեորգ Հինդլեան, Դաիթ Թերզիպաշեան և Դոկտ. Մինաս Գոճայեան (Գլխ. բանախօս): Ոգեկոչման հանդիսութիւնը վարեց Ս. Կորիւն Վրդ. Բաղդասարեան: Պէտք է նշել Դոկտ. Ժորժէր Աւագեանի մասնաշատուկ ջանքերը, որոնց շնորհիւ Իսրայէլեան քաղաքական և հասարակական դէմքեր մասնակցեցան հանդիսութիւններուն և կիսեցին մեր ցան ու խոստացան իրենց կարելի ընել Յեղասպանութիւնը ճանչնալ տալու Իսրայէլի պետութեան կողմէ:

«ՍԻՈՆ»Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

«Սիոն»ի խմբագրությունը կը փափաքի ամբողջացնել և արդիականացնել բաժանորդներու ցանկը: Բաժանորդագրուեցէք նորագոյն շրջանի «Սիոն»ին, զոր կրնաք ստանալ նամակատան միջոցով և կամ այցելել մեր կայքէջը:

Նաճեցէք լրացնել սոյն հարցաթերթիկը՝ նշելով «Սիոն» ստանալու Ձեր նախընտրած տարբերակը: Կրնաք դիմել նաեւ մեր կայքէջին:

(Նաճեցէք գրել գլխագիր և ընթեռնելի, անգլերէն, English/French:)

Անուն.- -----

Մականուն.- -----

Տիտղոս.- -----

Կազմակերպութիւն.- -----

Նասցէ.- -----

Կայքէջ ----- Email address-----

Տարեկան Բաժանորդագրութիւն՝ \$150 USD

NOTICE TO SUBSCRIBERS

The Armenian Patriarchate of Jerusalem is driving up a new updated list to its official periodical SION. To ensure that your name is on the list, you are kindly requested to fill in the form below and send it back to us, with your remittance as soon as possible. You can also write to our website and send your request for subscription. The PDF version of SION is also available.

Name: _____

Title: _____

Organisation: _____

Address: _____

Yearly Subscription \$150 USD

Send your checks to:
Armenian Patriarchate of Jerusalem
P.O.Box 14235 Jerusalem, Israel

Tel: +972 (0)2-6282331

Fax: +972 (0)2-6264861

patriarchateofjerusalem@yahoo.com

or

sionapj@gmail.com

or

mkojayan@sbcglobal.net

Գլխաւոր խմբագիր՝ Մինաս Գոճայեան
Editor-in-Chief: Minas Kojayan
Cover Design - M.K.

Տիրոջ Այլակերպութեան Խորհուրդը	Ն.Ա.Մ	3
Անետարան ըստ Մատթեոսի		5
Դաւանաբանական		
Ուղղափառ Եկեղեցիների Դաւանանքը...	Դոկտ. Ներսէս Աւագ Քին. Ներսէսեան	6
Երուսաղէմի Պատմութեան Սկիզբն ու Շարունակութիւնը	Յարութիւն Քիրստեան	15
The Origin of the Jerusalem Patriarchate and its Continuity		18
Քարոզ		
Անիրաւ Տնտեսին Առակը	Տ. Բագրատ Վրդ. Պորճէքեան	22
Այժմեական		
Հայ Եկեղեցին և Հայ Եկեղեցականը 21-րդ Դարու Մեմին	Տ. Զենոպ Քին. Նալպանտեան	35
Հոգեշունչ Քառեակներ	Նազարէք Չափաստարեան	34
Կարեւոր Հրատարակութիւններ		
Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Շարականներու Հեղինակները 5-րդ Դարէն 14-րդ Դար (Գէորգ Սրկ. Փանոյեան)	Դոկտ. Զաւէն Աւագ Քին. Արզումանեան	35
Հայոց Լեզու		
Մաքրագտել Հայերէնը Վկայութիւններ Հայոց Լեզուի Մասին	Եղիա Տիգրանեան, Մինաս Գոճայեան	39
Նիւթեր Պատմութեան Համար		
Ազգային Ժողովի Նիստերուն Ատենագրութիւնները, 1919-1922	Դոկտ. Վաչէ Դազարեան	44
Կենսագրութիւն Զաւէն Պատրիարք Տէր Եղիայեանի		54
Տարուան Գիրքը		
Անհանգստացուցիչ Յեղասպանութիւն մը (Ճեֆրի Ռոպերթսըն)	Դոկտ. Անտիա Եափուճեան	55
Testimony		59
Ուխտագնացի Յուշեր	Մ. Մարգարանցի	
Ծովը կամ Մորմոքի Ճիշեր Լիճին Յատակէն		60
Testimony		61
Արշալոյսին	Եղիվարդ	61
Միտոնօրհներ		
Այց Մայր Հայրենիք Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Խօսքը Սրբալոյս Միտոնի Օրհնութեան Առթիւ	Տ. Ներսէս Արդ. Ալոյեան	63
Եկեղեցական Կեանք	Տ. Գեղամ Ծ. Վրդ. Զաքարեան	71
Երջանկայիշատակ Վազգէն Ա. Կաթողիկոսի Գոհար Խօսքերէն		75
Պաշտօնականք	Տ. Ներսէս Արդ. Ալոյեան	76
Նամակ Խմբագրութեան		78
Կարեւոր Յատելում մը		



ՍՐԲԱԼՈՅՍ ՄԻՒՌՆԻ ԿԱԹՍԱՆ



ՎԵՀԱՓԱՆՈՆ ՈՒ ՊԱՏՐԻԱՐԷ ՀԱՅՐԸ ԿՈՒՂԱՂՈՒԻՆ ԴԷՊԻ ՏՐԴԱՏԱՅ ԲԱՅ ԽՈՐԱՆ



«ՀՈՒՇԱՓԱՌ»ՈՎ ՄՈՒՏՔ ՏՐԴԱՏԱՅ ԽՈՐԱՆ



ՏՐԴԱՏ ԱՐՔԱՅԻ ԲԱՅ ԽՈՐԱՆԻՆ



ՍՐԲԱԼՈՅՍ ՄԻՒՌՆԻ ՍՐՈՒԱԿՆԵՐԸ



ԱՒԱՐՏ ՄԻՒՌՆՕՐՀՆՈՒԹԵԱՆ



«ԳԱՐԵԳԻՆ Ա.» ԿՐԹԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԻ ԲԱՅՈՒՄ



ԱՄԵՆ. ՊԱՏՐԻԱՐԺ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐՆ ՈՒ ԳԱԲԱԶԱՆԱԿԻՐ Տ. ՆԵՐՍԵՂ ԱԲՂ. ԱՆՈՅԵԱՆ



ՔՈՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉՆԵՐԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
ՅՈՒՇԱՀԱՄԱԼԻՐԻ ԱՆՍԱՐ ԿՐԱԿԻՆ ԱՌՋԵՒ



ՄԻՌՈՆՕՐՀՆԷՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԵՆԷՆ ՊԱՀ ՄԸ



Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրը Հայրենիքէն եկած ուխտաւորներու հետ



Պատրիարքարանի մուտքի դահլիճի նոր երփնապակիները



Ս. Յակոբայ Մայր Տաճարի հարստային պատն ու տանիքը գրեթե նորոգում



Ս. Գեորգի պաշտամունքը Ղպտիներու Ս. Գեորգ եկեղեցոյ մէջ.
Տ. Արիս Արք. Շիրվանեան եւ Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան

Պատրիարքարանի նոր դուռը. գործ՝ հայ վարպետներու





THE ARMENIAN PATRIARCHATE OF JERUSALEM